# Ազգ
Azg

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021 ՈՒՐԲԱԹ 40(5680)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Հանցագործ չկա՞, թե՞ փող

Հայաստանում փակվում է երկու քրեակատարողական հիմնարկ` «Կոշ» եւ «Հրազդան», այդ մասին նախագիծը ներկայացվել է կառավարությանը: 2022-ին, երբ դրանք փակված լինեն, կխնայվի 1 մլրդ 200 մլն դրամ: Արդարադատության նախարար **Կարեն Անդրեասյանը** սա տեղավորում է ՔԿՀ բարեփոխումների համատեքստում: Անմխիթար վիճակում գտնվող եւ ազատազրկվածներին կյանքի համար անտանելի պայմաններ պարտադրած այս հիմնարկների փակումից հետո Հայաստանում կգործի10 ՔԿՀ, որոնց պայմանները կլավացվեն` ապահովելով մարդու իրավունքների խնդրի լուծումը: ՔԿՀ-ների 5346 տեղից այժմ զբաղված են միայն 2113-ը: Չնայած ՔԿՀ-ների փակման հետեւանքով 280 հաստիք կկրճատվի, բայց արդարադատության նախարարը նկատում է, որ նրանց մի մասը տեղավորվելու են այլ ծառայություններում, մի մասն էլ կմնան կադրերի ռեզերվում` հետագայում ըստ նպատակահարմարության նրանց մասնագիտական կարողություններն օգտագործելու հեռանկարով: Օպտիմալացումը հասավ քրեակատարողական հիմնարկներ:

**Մ.Խ.**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ռուս Ուղղափառ եկեղեցու նվաճողական քաղաքականությունը եւ մենք

Տեղին ու արդար է այն զայրույթը, որն առաջացրեց Բաքվում Ռուս Ուղղափառ եկեղեցու նորանշանակ հոգեւոր առաջնորդ, ծայրագույն վարդապետ (архимандрит) **Ալեքսիյ Նիկանորովի** տված հարցազրույցը «Նեզավիսիմայա գազետա» թերթին: Զայրույթ է պատճառել հատկապես նրա այն պնդումը, թե «Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջեւ հայկական պետության բաժանումից ի վեր չկա ոչ մեկ հուշարձան, կառուցված այս տարածքում, որը կարելի լինի անվանել հայկական»: Պարզվում է, որ Ադրբեջանում ծնված այս եկեղեցականը դեռեւս 2004 թ.ին Մոսկովյան հոգեւոր ակադեմիայում ավարտաճառ է պաշտպանած եղել «Քրիստոնեությունը կովկասյան Ալբանիայում» թեմայով, որտեղ, ըստ «Հնդեվրոպական քաղաքակրթություն» կազմակերպությունից **Լուսինե Ազնաուրյանի** հավաստիացման, հանգել է այն «բացառիկ» եզրակացության, որ «հազարավոր տարիների ընթացքում Ադրբեջանը գերազանցապես եղել է քրիստոնեական երկիր»: Եվ, փոխանակ հարց տալու եւ բացատրելու, թե այդ ի՞նչպես եղավ, որ իր կողմից «Ադրբեջան» հորջորջված այդ տարածում (որը, ի դեպ, դեռեւս 7-րդ դարից սկսած արաբները կոչել են Էրմենիա) քրիստոնեությունը իսպառ վերացավ, առաջ է քաշում այսպես կոչված «Աղվանական գործոնը», որպեսզի դրա վրայով կամ միջոցով ցատկ կատարի դեպի Ուղղափառություն եւ ընդհուպ` Ռուս Ուղղափառ եկեղեցի:

Խնդրին անդրադարձ է կատարել նաեւ «**Ազգ**»ի հիմնադիր կազմի անդամ, հայկական համակարգչային տառատեսակների առաջին ստեղծողներից **Պավել Դալլաքյանը** Մոսկվայից: Անհրաժեշտ ու կարեւոր մի քանի հղումներով ֆեյսբուքյան իր էջում նա հարցին մոտենում է մյուս կողմից` ռուս մեծապետական (վելիկոռուսկի) հավակնություն եւ Ամենայն հայոց հայրապետի կրավորական կեցվածք, նկատի ունենալով հոկտեմբերի 13-ին (Կարսի պայմանագրի ստորագրման 100-րդ տարելիցի օր) Մոսկվայում Կիրիլ պատրիարքի, Ամենայն հայոց հայրապետի եւ Կովկասի մահմեդականների շեյխ-ուլ-իսլամ Փաշազադեի միջեւ եռակողմ հանդիպումը, որից, դատելով համապատասխան պաշտոնական հաղորդագրություններից, ըստ ինձ մի մուկ անգամ չծնվեց: Թեեւ Դալլաքյանն իր հոդվածում դավանաբանական կոպիտ սխալ է թույլ տալիս Հայ **առաքելական** եկեղեցուն վերագրելով ուղղափառություն, այսուհանդերձ նրա դիտարկումները, ինչ վերաբերում է Ռուս եկեղեցու նվաճողական քաղաքականությանը, տեղին են եւ մտահոգիչ, մանավանդ ներկա կացության մեջ, ուր շարունակվում է Մոսկվայի զիջողական կեցվածքը Բաքվին, եւ, զուգահեռաբար, Ռուս եկեղեցու ծնողական դիրքը թուրքո-ազերիականության նկատմամբ, բոլորն էլ մեր, ներառյալ արցախահայության, հաշվին:

Այլապես ի՞նչ անուն պետք է տալ հայր Ալեքսիյ Նիկանորովի բարբաջանքներին, որոնց մեջ միակ ճշմարիտն այն է, որ ներկայիս Ադրբեջան կոչվող ողջ տարածքը եղել է քրիստոնեական: Նա հարց չի տալիս, թե ո՞ւր գնացին այդ քրիստոնյաները, ի՞նչ եղան նրանց սրբատեղիները, որոնց ավերակների վրա բոլոր արձանագրությունները հայերեն ու հայաստառ են: Նաեւ, գալով մեր օրերին, ինչո՞ւ եւ ո՞վ կործանեց Շուշիի Կանաչ ժամը, ինչո՞ւ ուղիղ նշանառության տակ առնվեց Ղազանչեցոց տաճարը, հայկական մյուս աղոթատեղիները: Ինչո՞ւ 30 տարուց ի վեր պահեստարանի է վերածվել Բաքվի առաջնորդանիստ` այժմ թափուր եկեղեցին: Ինչո՞ւ դատապարտման ոչ մի խոսք չլսեցինք Ռուս եկեղեցու առաջնորդներից:

Ավելին` այսպես կոչված աղվանական հարթակից դեպի ռուս ուղղափառություն ցատկ կատարելիս Ալեքսիյ Նիկանորովը որպես, իբր, եկեղեցական պատմության մասնագետ պիտի՛ իմանար, որ Աղվանից եկեղեցին հիմնադրվել է հայազգի քարոզիչ Գրիգորիսի կողմից, որ Մեսրոպ Մաշտոցն է գիր ստեղծել աղվանների համար, որ Աղվանից եկեղեցին իր կաթողիկոսով հանդերձ անմիջական ենթակայության տակ է եղել Ամենայն հայոց կաթողիկոսին, որին վերապահված է եղել նրա եպիսկոպոսներին օծելու առանձնաշնորհությունը: Ու տակավին` նա գիտի՞, որ աղվանները, իրենց կաթողիկոսի գլխավորությամբ ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել հայոց հակաթուրքական ու հակապարսկական ազատագրական պայքարներին: Ու գիտի՞ նաեւ, ո՞վ հեգնանք, որ 1815 թ.ին ռուս կառավարության հրամանով է վերացել Աղվանից կաթողիկոսությունը: Այն կաթողիկոսության, որը Գանձասարի իր գահանիստ կենտրոնով կրում էր «կաթողիկոսություն Աղվանից, Լփնաց եւ Չողա»: Վերջին տեղանունը այլապես մեզ ծանոթ ճորա եւ ավելի ծանոթ` Դերբենդի դուռն է, որը Գուգարաց եւ ավելի ուշ` Սյունյաց իշխանների պահակակետն էր, բդեշխությունը, որը պահպանելու համար բյուզանդացիք ու պարսիկները հայոց արշակունի թագավորներին գումար էին տալիս ամուր պահպանելու այն, որպեսզի թուրք-մոնղոլական հորդաները Կասպից ծովի եւ կովկասյան լեռնաշղթայի այդ նեղ անցքով չներխուժեն Անդրկովկաս:

Այո, Աղվանից եկեղեցին 551 թ.ին, Դվինի 2-րդ ժողովում, վերջնականապես հրաժարվեց Բյուզանդական եկեղեցուց ու դավանանքից, այսինքն` այն Ուղղափառությունից, որն այսօր, հետնյալ թվով, ինչ-որ Ալեքսիյներ, թիկունք տված «կրոնների համերաշխության ու միջէթնիկ մշակույթների պաշտպանության» ֆղամիդ հագած Մեհրիբան խանումին` փորձում են վերականգնել եւ օգտագործել հօգուտ Ռուս ուղղափառ եկեղեցու քաղաքակա՛ն շահերի:

Աղվան ժողովուրդը, որը հայերի հետ դարավոր նույնականությամբ տիրապետել է Փայտակարանից մինչեւ Դերբենդ` ներառյալ Բաքու նահանգը, համաձուլվել է հայ ժողովրդի հետ, տառապել, աղոթել, կռվել ու պայքարել միասին ընդդեմ թուրք-թաթարական ներխուժողների:

Ո՛չ մեզ եւ ոչ էլ ձեզ կոկորդիլոսի արցունքներ պետք չեն: Աղվանները հայեր են, քրիստոնյա եւ առաքելական հայեր: Մի՛ փորձեք տարանջատել մեզ իրարից: Եթե իսկապես քրիստոնյա եք, ապա ձեր պետությունն ու պատրիարքությունը պետք է օգնեն մեզ: Դրանով առաջին հերթին օգնած կլինեք ձե՛ր պետությանն ու ձե՛ր եկեղեցուն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## «Նարատիվ» վիճակ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Միանգամից բացենք վերնագիրը. այս բառը, որ վերջերս հաճախ են օգտագործում հատկապես արեւմտամետ համբավ ունեցող հայ գործիչները, հայերենի եւ հայկական մտածողության համար բացարձակապես խորթ, կեղծ (օտար) բառ է (*), հետեւաբար անտեղի եւ անիմաստ, իսկ իշխող կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար **Հայկ Կոնջորյանի** կողմից որպես հիմնավորում օգտագործումը մեկ օր առաջ, երբ մերժվեց պետության համար այս պահին շատ կարեւոր հայտարարության ընդունումը` հենց այդ կեղծ բառով հիմնավորելով, ցույց է տալիս այս պահին երկրի օրակարգային իրականության հեղինակությունն ու վտանգավորությունը հայերիս համար, որից հենց իշխող մեծամասնությունը պետք է հետեւություններ աներ իրականում:



Մանրամասնենք` ընդհատակյա սողացող հայ-ռուս-ադրբեջանական բանակցությունների ֆոնին, որոնց ո՛չ ճշգրիտ բովանդակությունն է հայտնի, ո՛չ էլ դրա արդյունքում սպասվելիք փաստաթղթերի շրջագիծը, խորհրդարանական ընդդիմությունը քննարկման դրեց մի շատ կարեւոր հայտարարության նախագիծ այն մասին, որով Հայաստանի սահմանների փոփոխությունն առանց Հայաստանի Սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերի անընդունելի է համարվում եւ դատապարտվում Արցախի բռնազավթումը, իսկ ահա իշխող մեծամասնությունը, Կոնջորյանի հակափաստարկով, հայտարարության մեջ ներքաղաքական բովանդակության ձեւակերպումներ եւ ընդդիմության քաղաքական «նարատիվի» մաս հանդիսացող մոտեցումներ տեսնելով` չքվեարկելով մերժեց այն:

Այ քեզ բան, ախր այս հայտարարությունը, որպես բանակցությունների մասնակից կառավարության ներկայացուցիչների գործողությունների զսպաշարիկ, հենց խորհրդարանական մեծամասնությունը պետք է նախաձեռներ` երկրի համար վտանգավոր պարտադրանքների այս ժամանակահատվածում ի վերջո իրոք ստանձնելով զսպողի եւ հավասարակշռողի իր գործառույթը եւ հասկացնելով պարտադրողներին, որ գործադիրի ղեկավարը կամ կառավարությունը չեն կարող Հայաստանի իշխանական մյուս թեւերին անտեսել, միայնակ դրսի պարտադրանքներ կատարել, ու այդպես գոնե զսպել նաեւ պարտադրողներին: Ավելին, կառավարությունն ու վարչապետը պետք է այդպիսի հայտարարության առկայությունն իրենց օգնող համարեին:

⇨7

## Ոչ թե Հեյդար Ալիեւը, այլ` Ռասուլզադեն

### Ադրբեջանի փոփոխված անկախության օրվա ուղերձները

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Դիվանագետ

Թուրքիայի նախագահը հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Հանրապետության անկախության տոնի կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել, որի մեջ մասնավորապես գրված է. «Ի սրտե շնորհավորում եմ Ադրբեջանի անկախության օրվա առիթով, որի լուսավորությունը մեր լուսավորությունն է, խանդավառությունը մեր խանդավառությունն է, ազատությունը մեր ազատությունն է, ճակատագիրը, մեր ճակատագիրն է, տխրությունը մեր...»:

Այս ջերմ խոսքերը տվյալ օրվա կապակցությամբ Ադրբեջանին ուղղված նախագահ Էրդողանի թերեւս վերջին շնորհավորական ուղերձն է: Էրդողանի վերջին ուղերձ ասելով, բնավ էլ նկատի չունենք նրա առողջական վիճակի վատթարացումը: Ոչ էլ մեր ակնարկը վերաբերում է արհեստածին Ադրբեջանի «անկախության» կորստին: Պարզապես Ադրբեջանի նախագահը որոշել է այդ օրն այլեւս չնշել որպես անկախության տարեդարձի օր, որի համար էլ իր դարակազմիկ որոշումը Միլլի Մեջլիսի միջոցով օրինականացրել է: Դրա փոխարեն, Ալիեւը ժամանակը 70 տարով հետ մղելով, հետայսու անկախության օրը փառաբանելու է մայիսի 29-ին: Բնականաբար, նման փոփոխության համար Ալիեւը, եթե ոչ հիմքեր, ապա գոնե ուղերձներ պետք է ունենար:

Ըստ երեւույթին, Իլհամն այդ փոփոխությամբ մտադիր է ապավինել ոչ թե իր հոր` Հեյդարի, այլ հակասական կենսագրությամբ հարուստ գործչի` Ադրբեջանի Հանրապետության հիմնադիր Ռասուլզադեի ժառանգությանը: Իսկ Ռասուլզադեի ժառանգությունն այնքան հակասական է, որ անկախությանը ձգտող քաղաքական գործիչն իր հիմնադրած «անկախ» Հանրապետությունը 1918-1919 թվականներին վստահել էր Մեծ Բրիտանիայի խնամակալությանը: Իսկ Մեծ Բրիտանիայի ազդեցությունը հեռագնա նպատակներով ստեղծված կեղծ հանրապետության վրա այնքան զգալի էր, որ այսօր էլ Ալիեւը վայելում է իր երբեմնի խնամակալի գրեթե բացահայտ աջակցության պտուղները:

1919 թվականից հետո, երբ Մեծ Բրիտանիան ստիպված եղավ լքել տարածաշրջանը, մուսավաթականների իշխանության հիմքերն ավելի խարխլվեցին: Մյուս կողմից, Լենինի հետ գործարքի մեջ մտած Աթաթուրքը, դադարեցրեց իր հովանավորությունը Ադրբեջանին, որի շնորհիվ էլ ռուսները կարողացան մտնել Բաքու: Այդ փոփոխությունների արդյունքում Ռասուլզադեն ապաստան գտավ Թուրքիայում:

⇨3

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Դառն ճակատագիր

Վերջերս մեր թերթին մէջ յօդուած մը կարդացի իրանահայ գրիչի մը ստորագրութիւնը կրող, ուր կը գովաբանէր Իրանեան իշխանութիւնները, որոնք Իրանի մէջ տասնեակ մը փողոցներ պաշտօնապէս անուանած են իրանահայ նահատակներու անուններով, որոնք 33 տարի առաջ Իրաք-Իրան պատերազմին զոհուած են: Յուշատախտակները «վկայում են յանուն իրանական հայրենիքի ազատութեան նահատակուած, Իրանի քաղաքացի հայերի անմնացորդ նուիրումի եւ հաւատարմութեան վէհ արժէքների մասին», ինչպէս կ՚ըսէ գրութեան հեղինակը:

1988-ին սկիզբ առած Իրաք-Իրան ութամեայ պատերազմին զոհ գացած են 106 իրանահայեր... Արդեօք քանի՞ իրաքահայ ալ զոհ գացած է նոյն պատերազմին. այդ մասին ես բան չեմ կարդացած: Պատահած կրնա՞յ ըլլալ, որ երկու կողմի հայ զինուորներ, առանց իմանալու դիմացինին ով ըլլալը, զիրար սպաննած են... Անկարելի վարկած մը չէ: Իրաքը Իրանի նման հայ նահատակները պատուելով անոնց անունները յաւերժացուցա՞ծ է, չեմ լսած: Կարեւորն այն է, որ Հայաստանէն դուրս որեւէ երկրի հայ քաղաքացի, երկրի օրէնքներուն համեմատ, պիտի ծառայէ բանակին մէջ ու պատերազմի ժամանակ ալ կռիւ մղէ ու դիմացինը սպաննէ, առանց հարցնելու, թէ դիմացինը բնիկ ի՞նչ ազգութեան կը պատկանի. ինք քաղաքացիութեամբ պատերազմող երկրին կը պատկանի, եւ վե՛րջ:

Սուրիական պատերազմին ալ մեծ թիւով նահատակներ տուինք: Բարեբախտաբար դիմացի ահաբեկիչներուն մէջ անհնար էր որ հայեր ալ ըլլային: Սուրիական պետութիւնը անմահացուց հայ զինուորի մը անունը արաբական դպրոց մը կոչելով անոր անունով: Արդեօ՞ք քաղաքացի, սակայն ուրիշ ազգի պատկանող զինուորի մը պարագային խտրականութիւն կը գործէ ու տեղացիէն աւելի կը գնահատուի անոր սխրանքն ու ի պատուի կ՚ըլլայ ան:

Աշխարհով մէկ ցրուած հայերուն ճակատագրի մէկ երեւոյթին մտահոգիչ եւ տխուր երեսն ալ այս է: ԱՄՆ-ի Իրաք ներխուժման 20 տարիներու ընթացքին ամերիկեան բանակին մէջ ալ հայեր եղած են, թերեւս նաեւ նախկին իրաքահայ, արդեօք անոնք կրակ բացա՞ծ են տեղացի՝ իրենց նախկին քաղաքակիցներուն վրայ: Վստահ եմ ուրիշ օրինակներ ալ կարելի է գտնել, պրպտելով զանազան երկիրներու հայկական համայնքները, սակայն թողունք օտար երկիրները ու խօսինք Հայաստանի մասին: Սփիւռքէն Հայաստան փոխադրուած քանի՞ ծնողք իր զաւակը հայկական բանակ ուղարկեց. Քանի մը բացառիկներ միայն, Հայաստան տեղափոխուածները սովորաբար երբ քաղաքացիութեան կը դիմեն ու կը ստանան, իրենց տղայ զաւակներուն համար միայն կեցութեան արտօնագիր կ՚առնեն, որպէսզի զօրակոչի չենթարկուին: Հակառակ որ Հայաստանի թշնամիները յստակ են՝ Ատրպէյճան եւ Թուրքիա: Ատրպէյճանը բացառուած է, որ հայ զինուոր ունենայ, սակայն Թրքական բանակին մէջ շատ հաւանական է, որ հայեր ալ ըլլան: Ուրե՞մն:

Երբ ծնող մը իր տղան, յատկապէս երբ ան մէկ հատիկ է, չ՚ուզեր բանակ ղրկել, ինծի կը թուի, որ ասիկա հայրենասիրութեան պակասէն չէ, այլ զաւակը կորսնցնելու սարսափէն, մասնաւորաբար՝ երբ աչքի առջեւ կ՚ունենայ Եռաբլուրը...

Հայու դառն ճակատագիր... Աստղափոշիի հատիկներուն նման ցրուեցանք աշխարհով մէկ. Շատ տեղեր մեր շուրջը լուսաւորեցինք մեր աստղային լոյսով, շատ տեղեր ալ մարեցան աստղալոյսերը ու ասուպներու նման վար ինկան: Հայու քանքարէն բաժին հանեցինք մեզ ընդունած երկիրներուն, անոնց տուինք արուեստագէտ նկարիչներ, դերասաններ, երաժիշտներ, երգիչներ, տուինք համալսարաններու դասախօսներ, գրողներ, գիտնականներ, գիւտարարներ, որոնցմէ ամենաթարմը՝ Նոպէլեան մրցանակի արժանացաւ: Եւ այս բոլորին կողքին ալ տուինք զինուորներ... կամայ, թէ՝ ակամայ... Անոնցմէ ոմանք անցեալին հասան բարձրագոյն աստիճաններու իրենց սխրագործութիւններով, ոմանք ալ, վերջին տասնամեակներուն, ակամայ դարձան «եղբայրասպան»... Դատապարտե՞լ, այպանե՞լ, ի՞նչ իմաստ ունի: Օտար երկիրներու մէջ մենք մեր ճակատագրին տէրը չենք: Բոլոր տեղաբնակ կամ եկուոր ազգութիւններու նման, մենք ալ կամայ, թէ ակամայ կ՚ենթարկուինք տուեալ երկրին օրէնքներուն, ինչպէս ըրած ենք միշտ:

Սա բազմաքաղաքացիութեան գունագեղ բեռը կրնա՞նք մեր վրայէն թօթափել ու մէկ երկրի քաղաքացի ըլլալ: Անշուշտ կրնանք, սակայն... տեսականօրէն միայն:

Հայու ճակատագիր... Դառն ճակատագիր:

# Էրդողանը հայտարարեց հավատարմագրված 10 դեսպաններին երկրից արտաքսելու մասին

## *Ինչո՞վ էր դա պայմանավորված, սանձարձակությա՞մբ, թե՞ շանտաժով*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ



Վերջերս Թուրքիայում չեն դադարում սկանդալները: Դրանց պատճառը, թերեւս, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի սանձարձակություններն են: Նա հոկտեմբերի 17-ին շրջագայությամբ ուղեւորվել էր Աֆրիկա, այցելելու Անգոլա, Տոգո եւ Նիգերիա: Հաջորդ օրը Թուրքիայում հավատարմագրված ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Կանադայի եւ Նոր Զելանդիայի դեսպանները հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Մինչ դրա բովանդակությանն անդրադառնալը նշենք, որ Էրդողանն Անգոլայի նախագահի հետ մամուլի համատեղ ասուլիսի ժամանակ ինքնազգացողության վատթարացման պատճառով հանկարծ քնել է, ավելին՝ իր առջեւ դրված տեքստը կարդալիս դժվարացել, ապա, ինչպես հոկտեմբերի 21-ին գրել է «Kozmik Oda» կայքէջը, արել է անհավասարակշիռ այնպիսի շարժումներ, որ պիտի չաներ:

Գալով վերոհիշյալ 10 երկրների դեսպաններին, ապա նրանք հոկտեմբերի 18-ին, երբ դեռ Էրդողանը շրջագայության մեջ էր, հանդես են գալիս հայտարարությամբ եւ թուրք առաջադեմ գործարար **Օսման Քավալային** ազատ արձակելու կոչ են անում թուրքական կառավարությանը: Նրանք պահանջում են նաեւ ազատ արձակել Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության նախկին համանախագահ **Սելահեթդին Դեմիրթաշին**, որը կալանվել է 3 տարի առաջ:

Թեեւ հայտարարության հրապարակումից հետո նշված դեսպանները հրավիրվել էին Թուրքիայի արտգործնախարարություն բացատրություն տալու, սակայն դա Էրդողանին, ըստ ամենայնի, չէր բավարարել, որը ավելի քան բուռն հակազդեցությամբ արձագանքեց համատեղ հայտարարությանը:

Էրդողանն ասաց. «Քավալա, հա Քավալա, ուրիշ բան չգիտեն: Այս «Սորոսի» ավելցուկ Քավալա կոչվածի միջոցով փորձ են անում դատաստանի առջեւ կանգնեցնել Թուրքիային: Ջանք չեն խնայում, որ ազատ արձակվի այդ արարածը, ինչպես նաեւ ահաբեկիչ Դեմիրթաշը: Ես մեր արտգործնախարարին ասացի, որ մենք սրանց մեր երկրում հյուրընկալելու խնդիր չունենք: Ի՞նչ եք ձեզանից ներկայացնում: Դուք ձեր երկրում ազատ արձակո՞ւմ եք ավազակներին, մարդասպաններին, ահաբեկիչներին: Մեր արտգործնախարարին կարգադրել եմ եւ ասել, որ անհապաղ լուծի այս 10 հատ դեսպանին «անցանկալի անձ» հռչակելու հարցը»:

Էրդողանի խոսքերի առնչությամբ պատասխանելով գերմանական «Deutsche Welle»-ի հարցերին, դեսպանները տարակուսանք են հայտնել, ասելով. «Իրավիճակն ահավոր է: Լրջորեն պետք է մտածել այս խոսքերը իմաստավորելու համար: Որ երկրում էլ գտնվեն, դիվանագետներն ընդամենը կատարում են իրենց գործը: Մենք Թուրքիայի ներքին գործերին չենք խառնվում, պարզապես հիշեցնում ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների մասին, որոնց գերակայությունը երկրի Սահմանադրական դատարանի որոշումների նկատմամբ եւ կիրառման անհրաժեշտությունն ընդունված է թուրքական Սահմանադրությամբ»:

Դեսպանների «մենք Թուրքիայի ներքին գործերին չենք խառնվում» արտահայտությունը Թուրքիայում իշխանամետ մամուլի կողմից գնահատվեց իբրեւ հետքայլ, թե նրանք ընկրկել են Էրդողանի առջեւ, այսպիսով դիվանագիտական ճգնաժամն ավարտվել է Թուրքիայի նախագահի հաղթանակով: Մինչդեռ ԱՄՆ-ի դեսպանն ասել էր, որ ինքը չի հրաժարվում համատեղ հայտարարությունից եւ դա շարունակում է մնալ դեսպանատան կայքէջում: Վերջինին միացան մյուս դեսպանները:

Սակայն, անկախ դրանից, միջազգային մամուլն այդ ընկրկումը վերագրեց հենց Էրդողանին, պատճառաբանելով, թե վերջինը դեսպաններին երկրից արտաքսելու հարցում խուսափում է խոսքից գործի անցնել: Ի վերջո, Գերմանիան Թուրքիայից առավել ներմուծում կատարող երկիրն է, Հոլանդիան՝ առավել ներդրում կատարած, իսկ ԱՄՆ-ը նպաստում է թուրքական ռազմարդյունաբերության զարգացմանը:

Այնուամենայնիվ Էրդողանի՝ դեսպաններին երկրից արտաքսելու հայտարարությունը հրարանցում էր առաջացրել Թուրքիայի քաղաքական եւ հասարակական շրջանակներում, մասնավորապես արտգործնախարարությունում: Իրականում խնդիրը սոսկ առեւտուրը կամ ռազմարդյունաբերությունը չէր, այլ Եվրոպայի խորհրդի նոյեմբերի 30-ին նշանակված համաժողովը, որտեղ քննարկման է դրվելու Թուրքիայի «ստանձնած պարտավորություններից հրաժարվելու» հարցը, ինչի մասին պաշտոնապես իրազեկվել է Անկարան, միաժամանակ նախազգուշացվել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եթե որոշի, թե Թուրքիան խուսափում է դատարանի որոշումները կիրառելուց, այդ թվում Քավալայի մասին, խախտելով Եվրոպայի մարդու իրավունքների կոնվենցիան, ապա Նախարարների խորհուրդը իրավունք է ստանալու սառեցնել Թուրքիայի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին, դիմելով նաեւ այլ պատժամիջոցների:

Ի դեպ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2019 թ. դեկտեմբերի 10-ի որոշումով Քավալային ճանաչել էր անմեղ, նրա կալանքը՝ ապօրինի եւ նրան «անհապաղ ազատ արձակելու» որոշման անտեսումը Թուրքիայի կողմից բնութագրել էր միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում:

Հարկ է նշել, որ թուրքական դատարանները բազմիցս անմեղ են ճանաչել Քավալային, սակայն երբ դատարանը նրան ազատ արձակելու որոշում էր ընդունում, նրա դեմ դեռ վճիռ չարձակված, իսկույն հարուցվում էր մեկ այլ գործ եւ նա մեղադրվում «Գեզիի համաժողովրդական շարժումը» ֆինանսավորելու, երկրում սահմանադրական կարգերը տապալելու, կառավարությանը կազմալուծելու եւ լրտեսության մեջ: Թեեւ նա 4 տարուց ի վեր կալանված է, սակայն նրա դեմ չկա դատարանի հարուցած որեւէ մեղադրանք: Նույնը վերաբերում է նաեւ Դեմիրթաշին:

Համենայնդեպս 4 տարվա կալանքը Քավալայի համար առաջինը չէ: Նա կալանվել էր նաեւ 2013-ին «Գեզիի» դեպքերի առնչությամբ եւ մի քանի տարի բանտարկվել: Դեսպանների համատեղ հայտարարությունից հետո Էրդողանը, որպես Քավալային մեղադրելու միջոց, շեշտը դրեց «Սորոս» հիմնադրամի վրա: Սակայն ապարդյուն, որովհետեւ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հիմնադիրներից, Թուրքիայի ազգային մեծ ժողովի երբեմնի նախագահ **Բյուլենթ Արընչն** ասաց, որ 2003-ին Սորոսն աջակցել է իրենց, նպաստելով երկրում կուսակցության իշխանության գալուն, եւ Էրդողանը լուսանկարներ ունի այդ անձնավորության հետ:

Թվում է, թե այս ճգնաժամը եթե անգամ չի հաղթահարվել, գոնե չարվեց: Մնում է սպասել Էրդողանի նոր սանձարձակություններին:

# «Իշխանական աբսուրդ» ժանրից

**Աբսուրդ 1**. «Կարտոֆիլը թանկացել է, որովհետեւ պահանջարկն ավելացել է»,- ԱԺ ամբիոնից հայտարարել է տնտեսագետ **Բաբկեն Թունյանը**:

**Աբսուրդ 2.** Հարցնում է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Գեղամ Մանուկյանը**.

-Փայլասարից ո՞ւմ հրամանով եւ ի՞նչ հիմքով է զորքը հետ նահանջել, ո՞վ է այս հարցի հասցեատերը, քանի որ գրավոր հարցմանը չեք պատասխանել:

Պաշտպանության նախարար **Արշակ Կարապետյանը** պատասխանում է.

-Քննիչ հանձնաժողով եք ստեղծել, պարզեք:

**Աբսուրդ 3.** «2020 թվականի սեպտեմբերի 25-26-ին ռադիոհետախուզությամբ տվյալ էր ստացվել, որը պատերազմի սկսվելու հարցում վստահելի էր»,- ԱԺ ամբիոնից ասել է **Նիկոլ Փաշինյանը**:

**Աբսուրդ 4.** «Սյունիքում զորքի հետքաշման հրամանը անձամբ ես եմ տվել, Վաղարշակ Հարությունյանը կատարել է միայն»,- ԱԺ հարցուպատասխանի ժամանակ հայտարարել է **Նիկոլ Փաշինյանը**:



**Աբսուրդ 5.** «Հայաստանը տարածքներ նվաճելու մտադրություն չունի». **Ն. Փաշինյան**:

ՆԱԻՐ ՅԱՆ

# Ալի Շամխանին արձագանքում է նաեւ Էրդողանին





Իրանի Իսլամական Հանրապետության իշխանական համակարգում կան դեմքեր, որոնց մատուցած ծառայությունները ակնառու են անցնող 42 տարիների ընթացքում: Իսլամական հեղափոխությանը մեծապես ծառայություն մատուցած առանցքային դեմքերից է ներկայիս ԻԻՀ անվտանգության խորհրդի քարտուղար Ալի Շամխանին, ում վերապահված է «ծանր հրետանու» դեր՝ Իրանին վերաբերող հայտարարություններին արձագանքելու համար:

Վերջին շրջանում Իրանի ու Ադրբեջանի միջեւ լարված հարաբերությունների կապակցությամբ հրապարակվող հայտարարություններին, ԻԻՀ ԱԳՆ-ից բացի, արձագանքում է նաեւ Ալի Շամխանին:

Թուրքիայի հանրապետության նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**, Ադրբեջանին սահմանակից տարածքներում Իրանի զորաշարժերի անցկացմանը վերաբերող հարցի կապակցությամբ հոկտեմբերի 20-ին Թուրքիայի զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, կարծիք է հայտնել, որ «Հանուն Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների, Իրանն Ադրբեջանի հետ առճակատման չի գնա»:

Էրդողանի համոզմամբ, Իրանում բնակվող թուրքերի թվաքանակը հաշվի առնելով, ԻԻՀ ղեկավարությունը կխուսափի բախման գնալ Ադրբեջանի հետ:

Ադրբեջանին իր տեղը ցույց տալու Իրանի հաստատակամությանը կասկածող Թուրքիայի նախագահի հայտարարությանը երկու օր անց, հոկտեմբերի 22-ին, պատասխանել է Ալի Շամխանին, նշելով, որ Էրդողանն իր խոսքերով ուռճացնում է Իսրայելի կարողությունները: ԻԻՀ պաշտոնյան ակնարկել է, որ Էրդողանը իսլամական աշխարհի առաջնորդը դառնալու հավակնություններ ունի:

Շամխանին նաեւ ընդգծել է. «Արդյո՞ք իսլամական աշխարհի առաջնորդի հավակնություններ ունեցող ղեկավարի կողմից սիոնիստական սին վարչակարգի կեղծ ակնածության ցուցադրումը ուժի վկայություն է, թե՞ մահմեդականության դրսեւորում»:

Շամխանին նաեւ մեղադրել է Էրդողանին՝ Թուրքիայում բնակվող էթնիկ փոքրամասնությունների թիրախավորելու մեջ: Իրանի անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի բնորոշմամբ, այդ իշխանությունները են ազգային փոքրամասնություններից վախենում, ովքեր նրանց նկատմամբ ճնշման խարան են օգտագործում: Ի հակադրություն Թուրքիայի, Շամխանին Իրանն անվանել է ազգությունների բուրաստան:

Իսկ մինչ այդ՝ հոկտեմբերի 15-ին, Շամխանին պատասխանել էր նաեւ **Իլհամ Ալիեւին**՝ Ադրբեջանի տարածքով դեպի Եվրոպա թմրանյութեր փոխադրելու հարցում Իրանին ուղղված մեղադրանքների համար: Ալիեւին հասցեագրված Շամխանիի կարճ, բայց բազմիմաստ հայտարարության մեջ նշված է. «Զգուշացե՛ք սատանաների ծախսատար որոգայթներից»: Շամխանիի նախազգուշացնող հայտարարության մեջ նաեւ ասված է. «Դրացիության պահանջներից բխող սկզբունքների նկատմամբ անտարբերությունը, ստահոդ ու ոչ կառուցողական արտահայտությունները չեն կարող բարի կամքի ու խոհեմության դրսեւորումներ համարվել»:

Եզրափակելով իր հակադարձումը, Շամխանին նշել է. «Միջազգային հանրության կողմից թմրանյութերի դեմ պայքարում հերոսի տիտղոսին արժանացած երկրի մասին հերյուրանքներ տարածող անձը նախեւառաջ վարկաբեկում է իր իսկ խոսքերը»:

ԳՐ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Ոչ թե Հեյդար Ալիեւը, այլ՝ Ռասուլզադեն

⇨1 Իսկ այսօր Իլհամ Ալիեւը, պահպանողական հոր քաղաքականության փոխարեն, ակնածանքով հիշում է Ռասուլզադեի արկածախնդրություններն ու դասեր քաղում նրանից:

Այս նախաբանը մեզ բնավ էլ առիթ չի տալիս ենթադրելու, որ Ռասուլզադեի քաղաքական ուղին որդեգրած Իլհամին սպասվում է իր «հեռակա ուսուցչի» ճակատագիրը:

Թերեւս հիշեցման կարիք էլ չկա, որ «Ադրբեջանի ժողովրդական Հանրապետություն» հորջորջված մուսավաթների պետական միավորումը ծնունդ է առել տվյալ ժամանակաշրջանի աշխարհացունց գեոքաղաքական իրադարձությունների հորձանուտում: Սակայն, Խորհրդային Միության փլուզումից երեսուն տարի անց դեռեւս գեոքաղաքական իրավիճակի կայունացման միտումները բացակայում են, եւ նոր աշխարհակարգի փնտրտուքը կարծես շարունակվում է:

Աշխարհաքաղաքական ցնցումների մեջ հայտնված տարածաշրջանում Թուրքիան այսօր հանդես է գալիս որպես վերածնման ենթակա աշխարհին ընդառաջ գնացող դերակատար, որի մեջ Անկարան կարեւոր տեղ է նախատեսել նաեւ Բաքվին:

Ոգեշնչվելով Ռասուլզադեի ժառանգությունից, Ալիեւը նկատի է ունեցել, որ իր «ոգեշնչման աղբյուրի» արժեհամակարգում իսլամը որպես քաղաքական ու սոցիալական գործոն գոյություն չի ունեցել: Լաիցիզմն արժեւորելու միտումը Ռասուլզադեի մոտ, ըստ վերջինիս կենսագիրների, նկատելի էր թե՛ Իրանի «Սահմանադրական շարժման» եռուզեռին որպես լրագրող հանդես գալու ժամանակ, եւ թե՛ Թուրքիայում ապրած տարիներին պանթուրքիզմին հարելով:

### Ի՞նչ ուղերձներ են թաքնված Հանրապետության օրը փոխելու որոշման մեջ

1. Անկախության օրացուցային փոփոխության հիմնական ուղերձներից մեկն այն է, որ մուսավաթների իշխանության ժառանգությանը տեր կանգնելով, Ալիեւը ցանկանում է հղում անել անորոշության շղարշի մեջ թաքնված այն փաստին, որը հորինվել է հայկական, վրացական եւ իրանական տարածքների բռնակցման նպատակով Թուրքիայի արեւելյան դաշնակիցը դառնալու եւ երիտթուրքերի պանթյուրքիստական հեռին մտադրությունները իրագործելու համար: Ալիեւը լավ է հասկանում, որ մինչեւ 1918 թվականը տարածաշրջանում «Ադրբեջան» անունով պետություն գոյություն չի ունեցել, որի կազմում ընդգրկված լիներ Ղարաբաղը: Ալիեւին նաեւ հաստատ պատմել են, որ Ռուսաստանյան կայսրության փլուզումից հետո 1918 թ. հուլիսին Շուշիում հրավիրված երկրամասի հայության 1-ին համագումարում Ղարաբաղը հռչակվել էր որպես վարչատարածքային անկախ միավոր: Իսկ մուսավաթականների արհեստածին հանրապետությունն այն մշուշապատ միջավայրն էր, որտեղ Բաքվի բռնապետը կարող է հղումներ անել կեղծ փաստեզներին:

2. Իլհամ Ալիեւը ցանկանում է իր ղեկավարած պետության անկախության երեսնամյա պատմությունը եւս 70 տարի հետ մղելով, հասնել իր երկրի շինծու պատմության այն ցանկալի դրվագին, որի ժամանակ Սյունիքը անօրինաբար, կարճ ժամանակով հայտնվել էր Ադրբեջանի սահմանների մեջ:

3. Անկախության օրը մայիսի 29-ին տեղափոխելով, Իլհամ Ալիեւը ազդարարում է նաեւ Ադրբեջանի Մեծբրիտանական խնամակալության տարիների փառաբանման ցանկության մասին:

4. Նկատի ունենալով սեփական «ոգեշնչման աղբյուրի»՝ Ռասուլզադեի գաղափարական հենքում քեմալական Թուրքիայի հիմքը հանդիսացող լաիցիստական հակվածությունը, Իլհամ Ալիեւը ցուցադրում է իր մերժողական վերաբերմունքն իսլամի եւ կրոնապետականության նկատմամբ:

# Կամարակապ ամրոցի առեղծվածը



*Նկարում իրանական Միյանե քաղաքի մատույցներում գտնվող ԱՂՋԿԱ ԿԱՄՈՒՐՋՆ է՝ (փոլ-է ԴՈԽԹԱՐ), կառուցված յոթ կամարների վրա, որին ավելի կպատշաճեր Կամարակապ կամուրջ (Փոլ-է ԹԱՂԴԱՐ) անվանումը*

Մի քիչ տաս չէ՞ն կանանց պատվին կառուցված ամրոցներն ու այլ շինությունները: Այդ ինչո՞ւ պատահեց, որ Իջեւան քաղաքից ոչ հեռու, անտառապատ սարի գագաթին, բոլոր կողմերից բարձր ժայռերով եզրված ամրոցը ժամանակին կոչվել է «Աղջկա բերդ», ու դեռ մի լեգենդ էլ է հորինվել, թե իբր իր գեղեցկությամբ բռնակալին խելահան արած հայուհու պատճառով, Լենկ Թեմուրն ավերակի է վերածել գեղեցկուհուն ապաստանած ամրոցը: Մի քիչ տարօրինակ չէ՞, որ 13-րդ դարից կանգուն մնացած Կոշ գյուղի ամրոցը նույնպես կոչվել է «Աղջկա ամրոց»: Զարմանալի չէ՞ արդյոք, որ մեր երբեմնի ծաղկուն քաղաքամայր Անիի՝ միջնաբերդից դեպի հարավ-արեւելք տանող ճանապարհին, անմատչելի ձորերով շրջապատված ամրոցը կոչվել է «Կույսի ամրոց»: Տարօրինակ չէ՞, որ «Կույսի» անունով է կոչվել նաեւ Հովհաննես Այվազովսկու ներշնչանքի առիթ դարձած Ստամբուլի Ուսքյուդար (Սկյուտար) թաղամասի փարոս-աշտարակը, որի մասին շրջանառվող լեգենդներից մեկը տաս նման է Ախթամարի վերագրված ավանդապատումին:

Բաքվի քաղաքամիջում (**իչերի շեհեր**) կառուցված պաշտպանական շինությունն անվանակոչելու համար քաղաքի նախկին տերերը տեսնես ինչո՞ւ են կենտրոնացել հենց ԱՂՋԻԿ անվան վրա ու պարսկերեն կոչել ՂԱԼԵ-Է ԴՈԽԹԱՐ (ghale-e dokhtar), որը հետագայում թուրքերենով այն կոչվեր ԿԸԶ ԿԱԼԵՍԻ ու Գերման Սարյանն էլ դրա անվանակոչման մասին մի լեգենդ հորիներ:

Հիմա գնանք դեպի հարավ ու տեսնենք Իրանի տարածքում ինչպես են «վերաբերվել» աղջիկներին ու ի՞նչ աստիճանի են «պատվել» գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին: Եվ ահա տեսնում ենք, որ այդ լայնատարած երկրում որքա՜ն տաս են ԱՂՋԻԿ անունը կրող ոչ միայն բերդերը, ամրոցներն ու սրբավայրերը, նաեւ կամուրջներն ու քարակերտ այլ շինությունները:

Այսպիսի շինություններ կան ամենուրեք՝ Արեւելյան Ատրպատականի Միյանե քաղաքում, Իրանի ամենամեծ նահանգում՝ Քերմանում, Շիրազից դեպի հարավ տանող Ֆիրուզաբադում, Թեհրանում Չալուս ամառանոցային շրջանում, Սպահանի Նային քաղաքի մերձակայքում, երկրի նավահանգստային քաղաքներից մեկում՝ Բուշեհրում եւ բազմաթիվ այլ վայրերում: Թերեւս ավելի հեշտ կլիներ թվարկել Իրանի, նույնիսկ Աֆղանստանի ու Տաջիկստանի այն շրջանները, որտեղ բացակայում են պարսկերեն DOKHTAR կամ թուրքերեն ՔԸԶ / ԿԸԶ (աղջիկ) անունը կրող շինությունները: (Ի դեպ, մեր «դուստր» բառը փոխ է առնված պարսկերեն Dokhtar-ից):

Իմ համեստ կարծիքով, առեղծվածը կարելի է բացահայտել ուսումնասիրելով պարսկական վաղ շրջանի ճարտարապետության առանձնահատկությունները:

Խնդիրը պարզելու համար պետք չէ շատ խորանալ: Միայն հիշենք, որ Աքեմենյան շրջանի Պարսկաստանում տարածված է եղել այսպես կոչված՝ ԿԱՄԱՐԱԿԱՊ (me mari-e taghdar) ճարտարապետությունը: Այն ավելի լայն տարածում է ստացել Սասանյանների ժամանակաշրջանում: Իսկ «աղջիկ» նշանակությամբ պարսկերեն dokhtar բառը շատ նման է «ԿԱՄԱՐԱԿԱՊ» իմաստով taghdar բառին, ինչը ժողովրդական ստուգաբանության «թեթեւ ձեռքով» հնչյունափոխվել ու դարձել է dokhtar: Եվ այլոց մշակութային ու պաշտպանական ժառանգության յուրացման հարցում բարձունքներ նվաճած «հնարամիտ» թյուրքերին մնում էր միայն թարգմանել արդեն իսկ աղավաղված բառը եւ ստանալ ՔԸԶ / ԿԸԶ (աղջիկ) հորջորջումը:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Աշխարհաքաղաքական ուժերի մրցակցություն Կովկասում

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

*Դետրոյթ, ԱՄՆ*

Ինչքա՞ն հետեւողական կարող է լինել **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** Զանգեզուրի միջանցքի իր պահանջներում: Հոկտեմբերի 26-ին ծրագրված էր, որ Ադրբեջան այցելի մասնակցելու 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական զորքի գրաված Վարանդայի օդանավակայանի հանդիսավոր բացման արարողությանը: Նախքան մեկնելը նա կրկնեց Հայաստանի ինքնավար տարածքից այդ միջանցքը պահանջելու միտքը, ասելով, որ Թուրքիան այդ հարցում մտափոխ չի եղել: «Մենք դեռեւս վճռական ենք այդ միջանցքը բացելու հարցում», ասաց նա:

Նրա հոգեւոր սանը՝ Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը**, որ սպառնում էր ուժի գործադրմամբ ձեռք բերել այդ միջանցքը, լուռ էր վերջերս: Նա նույնիսկ հինգ հայ ռազմագերիների է ազատ արձակել եւ լուրեր են պտտվում, որ մինչեւ նոյեմբեր ուրիշներին էլ է վերադարձնելու Հայաստանին:

Այս զարգացումները չէին կարող տեղի ունենալ առանց որոշակի պատճառների: Հստակ է, որ քաղաքական մթնոլորտում փոփոխություններ են կատարվում: Նախ նշենք, որ միջանցքի հարցը այլեւս Հայաստանը չէ, որ պետք է լուծի: Այն արդեն դարձել է գլոբալ, համընդհանուր խնդիր: Թուրքիան այդ միջանցքը պահանջում է որպես մասնաբաժին իր պանթուրանական ծրագրերի, բայց տարածաշրջանային այլ դերակատարներ մտահոգված են նրա ծավալապաշտական փառասիրություններով: Զանգեզուրի միջանցքը կարմիր գիծ է դարձել Իրանի համար, որը պատրաստ է պատերազմ մղել Ադրբեջանի դեմ: Հնդկաստանը նույնպես շահագրգռված է եւ դա ցույց է տալիս իր ավելի ակտիվ ներկայությամբ տարածաշրջանում:

Մեկ այլ գործոն է նաեւ նախագահ Էրդողանի հնարավոր վատառողջությունը: Նրա հավանական հաջորդը պաշտպանության նախարար **Հուլուսի Ակարն** է, որի անունը վերջերս հիշատակվում է միջազգային լրատվամիջոցներում եւ որին վերագրում են Թուրքիայի զինված ուժերի նոր կազմավորումը:

Ի հակադրություն այդ զինված ուժերի, Թուրքիայի տնտեսությունը անկում է ապրում, եւ ընդդիմությունը Էրդողանին է մեղադրում, որ իր արտասահմանյան թանկ արկածախնդրությունների հետեւանքով հարազատ երկիրն է տուժում: Սրան գումարած՝ շարունակվում է նաեւ հարաբերությունների վատթարացումը Թուրքիայի եւ Մ. Նահանգների միջեւ F-35 տիպի կործանիչ ինքնաթիռների վաճառքի առնչությամբ:

Մթնոլորտի փոփոխության մեկ այլ գործոն են հանդիսանում 3+3 ձեւաչափի բանակցությունները, որոնք արդեն սկսել են կորցնել իրենց նշանակությունը: Այդ ձեւաչափը առաջ էին քաշում Թուրքիան ու Ռուսաստանը: Նպատակը տարածաշրջանային խնդիրների լուծումն էր Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի մասնակցությամբ:

Վերջերս Վրաստան կատարած իր այցի ընթացքում Մ. Նահանգների պաշտպանության քարտուղար (նախարար) **Լոյդ Օստինը** քննադատեց այդ ձեւաչափը՝ նշելով, որ դրա մասին խոսելուց առաջ Ռուսաստանը պարտավոր է Վրաստանին վերադարձնել նրանից խլած տարածքները: Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար **Արմեն Գրիգորյանն** էլ զգուշավոր արտահայտություն արեց՝ ասելով, որ իր երկիրը ուսումնասիրում է այդ առաջարկը, բայց դեռ վաղ է որեւէ մեկնաբանություն անելը, քանի որ այդ ձեւաչափը նախատեսում է Արեւմուտքին հեռու պահել Կովկասից:

Ավելացնենք, որ այդ ձեւաչափում ընդգրկված երկրներից ոչ մեկը շահագրգռված չէ բանակցությունների միջոցով լուծելու Արցախի կարգավիճակի հարցը: Ռուսաստանը հանկարծ ետ քաշվեց այդ ծրագրից: Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակ **Մարիա Զախարովան** նշել է, որ այդ գաղափարը Մոսկվայում չի առաջացել, այլ առաջարկվել է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից, իսկ Ռուսաստանը պարզապես համաձայնել է դրան:

Այս զարգացումները ցույց են տալիս, որ աշխարհաքաղաքական ուժերի միջեւ մրցակցություն է ծավալվում. մի կողմը ցանկանում է Արեւմուտքին դուրս մղել Կովկասից, մյուս կողմը փորձում է մասնակցություն ունենալ տարածաշրջանի խնդիրների լուծման հարցերում:

Ամենայն հավանականությամբ այս ներքին տարաձայնությունն է, որ հետաձգում է ԵԱՀԿ Մինսկի խմբի նիստերի գումարումը, որի հույսին է մնացել Հայաստանը՝ լուծելու համար Արցախի կարգավիճակի հարցը:




Գործողությունների առաջխաղացմանը զուգահեռ որոշվել է երկու համաձայնագիր ստորագրել նոյեմբերի 9-ին, խորհրդանշելու համար հրադադարի հայտարարության առաջին տարելիցը: Համաձայնագրերը ստորագրելու են Ռուսաստանի նախագահ **Վլադիմիր Պուտինը**, Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** եւ Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանը**:

Առաջին համաձայնագիրը վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման եւ սահմանազատման հարցերին՝ ԽՍՀՄ հին քարտեզների վրա հիմնվելով: Երկրորդը՝ ճանապարհների եւ հաղորդակցության ուղիների բացմանը, որի շուրջ բանակցում էին վերոնշյալ երեք երկրների վարչապետների տեղակալները:

Երկու փաստաթղթերում էլ գոյություն ունեն հնարավոր վտանգներ: Անհրաժեշտ է պարզել, թե երկու երկրների (Հայաստան, Ադրբեջան) տարածքային ամբողջականությունը ճանաչող փաստաթղթում որեւէ նշում կա՞ Արցախի վերաբերյալ, հաշվի առնելով նախագահ Ալիեւի պնդումներն այն մասին, որ Հայաստանը պետք է ընդունի, որ Արցախը Ադրբեջանի մաս է կազմում: Երկրորդում խնդրո առարկան միջանցքի հարցն է:

Զգուշավորությունը այս հարցերում չափազանց կարեւոր է: Չմոռանանք նախագահ Պուտինի վերջերս կատարած երկդիմի արտահայտություններն այն մասին, որ երկու կողմերը զիջումների պետք է գնան: «Կան բաներ, որոնք փոխադարձ զիջումներ են պահանջում, կան վայրեր, որոնք պետք է փոխադարձվեն», ասաց նա:

Ցավալի ճշմարտությունն այն է, որ Հայաստանն այլեւս ի զորու չէ հավելյալ զիջումներ անելու՝ այն բանից հետո, երբ կորցրել է Արցախի 75 տոկոսը եւ հարցականի տակ է դրել իր սահմանների անվտանգությունը: Միեւնույն ժամանակ փաստաթղթեր են շրջանառության մեջ դրվում պատերազմի եւ այդ պատերազմում Ադրբեջանի զոհերի մասին: Բաքվի իշխանությունները ցարդ խոստովանել են, որ պատերազմում 2.700 զոհ են ունեցել: Բայց ՀՀ նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանը** պնդում է, որ Ադրբեջանի զոհերը գերազանցում են 18 հազարը: Նա հիմնավորում է իր տեսակետը՝ մեջ բերելով հոլանդական մի կայքի եւ ընդդիմադիր լրատվամիջոցների տվյալները: Եվ իրոք, Ադրբեջանի ընդդիմադիր ներկայացուցիչները վերջերս այցելել են գերեզմանատները եւ հաշվել թարմ հողակույտերի վրա ծածանվող դրոշները: Բագրատյանը նաեւ համոզված է, որ Ադրբեջանն ու Թուրքիան այլեւս զինվորներ չունեին գրավելու համար Շուշին, որն իրենց արծաթե սկուտեղի վրա մատուցեց Ռուսաստանը:

Եթե անգամ ընդունենք, որ Ադրբեջանը երեք անգամ ավելի զոհեր է տվել, քան Հայաստանը, ապա դա մխիթարվելու որեւէ հիմք չպետք է տա մեզ: Բայց դա նշանակում է, որ Հայաստանի բանակը իրոք արժանի է Կովկասում ամենամարտունակը լինելու իր համբավին: Անթիվ-անհամար թշնամի ուժերի դեմ 44 օր պատերազմը շարունակելն ու ամենաարդիական մահասփյուռ ռազմատեխնիկական զինամթերքին դիմակայելն իսկապես աննշան բան չէ: Ճիշտ է, հայկական բանակի որոշ ստորաբաժանումներ շփոթմունքի զոհ գնացին, բայց մյուսները արիաբար պայքարեցին մինչեւ վերջ:

Ռազմական իմաստության համաձայն, պատերազմներում կորուստների ընդունված տոկոսը հետեւյալն է. հարձակվող կողմը երեք անգամ ավելի զոհ պետք է ունենա, քան պաշտպանվող կողմը: Եթե այդ պրիզմայով առաջնորդվենք, ապա Բագրատյանի հաշվարկները պետք է ռեալ լինեն:

Չափազանց հեղհեղուկ իրավիճակը շարունակվում է: Կրակոցները տեղի են ունենում, եւ հայկական կողմը անընդհատ կորուստներ է ունենում ինչպես զինծառայողների, այնպես էլ քաղաքացիական անձանց շրջանակներում: Իսկ Ռուսաստանի խաղաղապահ ուժերին կարծես հրամայել են չպաշտպանել հայկական կողմին: Եթե վերջին լուրերը ճշգրիտ են, հայկական զինուժը դիմակայում է ադրբեջանական բանակի հարձակումները երկու ճակատներում, մեկը Հայաստանի սահմաններում, մյուսը՝ Արցախում, մինչդեռ ռուսական խաղաղապահ զորքերը տեղակայված են ոչ թե երկու հակամարտող կողմերի միջեւ, այլ հայկական բանակի ետեւում:

Ոչ ոք չի հավատում, որ ռուսական զորքերն այնտեղ են խաղաղությունը պահպանելու համար, մինչդեռ նախագահ Պուտինն ու արտգործնախարար **Սերգեյ Լավրովն** անընդհատ հպարտանում են, որ ի՛նչ հիանալի գործ են կատարում խաղաղապահները: Ռուսաստանը երկար ժամանակ է, ինչ սպասում էր հարմար առիթի, որպեսզի իր զորքերը տեղակայի Ադրբեջանի տարածքում: 44-օրյա պատերազմն ընձեռեց այդ հնարավորությունը: Այդ օպերացիայի կազմակերպված բնույթը հուշում է, որ Ռուսաստանն այդ քայլին վաղուց էր նախապատրաստվում:

Հայերի մտքում մի հարց հանգիստ չի տալիս. ի՞նչ է տեղի ունենալու, եթե Ադրբեջանը Մոսկվային խնդրի վերացնելու խաղաղապահներին: Ի դեպ, Բաքուն նույնիսկ չի էլ ստորագրել ռուսական խաղաղապահ զորքերի տեղակայման պայմանագիրը, որպեսզի հնարավորություն ունենա հարմար պահին մերժելու ռուսական զինուժի ներկայությունը իր տարածքում:

Հայաստանն ու սփյուռքը հնարավոր ամեն միջոցներով փորձում են նեցուկ կանգնել Արցախին, կամ նրանից մնացած հատվածին: Տեղահանված փախստականների վերաբնակեցումը իսկայական աշխատանք է, բայց անշուշտ անհրաժեշտ մի ծրագիր, որպեսզի բնակչությունը մնա Արցախում: Սակայն Ռուսաստանն այլ մտադրություններ ունի: Մոսկվայի պնդումներն այն մասին, որ Արցախի կարգավիճակի հարցը չպետք է ներկայիս քննարկվի, շատ լուրջ ենթատեքստեր է իր մեջ պարունակում:

Ռուսաստանն իր շուրջը գտնվող «մոտիկ հարեւանների» հետ գործելու ուրույն ձեւն ունի: Նախքան Վրաստանից Հարավային Օսիան եւ Աբխազիան խլելը, Մոսկվան այդ երկու նահանգների բնակիչներին քաղաքացիություն շնորհեց: Հետագայում իր քաղաքացիներին պաշտպանելու քողի ներքո նվաճեց այդ տարածքները:

Նմանատիպ քաղաքականություն է նա այժմ վարում Արցախում: Ռուսական քաղաքացիություն է շնորհվում այնտեղ եւ ռուսերեն լեզուն դասավանդվում է հայերենի մակարդակով: Այնպես որ, եթե գործելու ժամանակը գա, Ռուսաստանը նույն խաղն է խաղալու եւ մնալու է Արցախում որպես իր քաղաքացիների պաշտպան: Ղարաբաղի ժողովրդի համար դա ընդունելի իրավիճակ է լինելու, հաշվի առնելով, որ անկախության կամ ինքնավարության բոլոր հույսերը մնալու են անիրականալի:

Նախքան այս գործընթացի առաջխաղացումը ԵԱՀԿ-ի նիստերը պետք է գումարվեն եւ Արցախի կարգավիճակի հարցը պետք է քննարկվի:

Ժամանակը արագորեն սահում է եւ գործում է Արցախի եւ արցախահայության ճակատագրի դեմ:

**Անգլ. թարգմանեց՝**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(Arm. Mirror-Spectator)**




## Ստացանք

Շնորհակալությամբ ստացանք ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի 75-ամյակի առիթով հրատարակված ժողովածուն՝ արխիվային փաստաթղթերից, պաշտոնական գրություններից ու մամուլի հրապարակումներից կազմված, Հոբելյարի մակագրությամբ: Նշանավոր լուսանկարիչ Գավուքի դիմանկարով ներկայացող գիրքը, 630 էջ, կազմել է Ավետիս Ավագյանը, խմբագրել՝ Աշոտ Սարգսյանը, հրատարակել՝ «Անտարես» հրատարակչատունը:

# «Վերականգնողականից Արցախն անցնում է զարգացման փուլ». Արտակ Բեղլարյան

Օրերս Արցախի պետնախարար Արտակ Բեղլարյանը հարցազրույց է տվել «Ռեգնում» գործակալությանը, որի ընթացքում բազմաթիվ կարեւոր դիտարկումներ է արել ինչպես արցախահայության ինքնորոշման, այնպես էլ սոցիալ-տնտեսական մի շարք կարեւորագույն հարցերի վերաբերյալ։ Այս մասին գրում է նաեւ «Արցախպրես» լրատվականը։

Անդրադառնալով՝ նախորդ տարեվերջին Արցախի դեմ թուրք-ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով վնասված եւ ոչնչացված ենթակառուցվածքներին՝ Բեղլարյանն ընդգծել է, որ Արցախի կառավարությունը, Հայաստանի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ հայկական սփյուռքի աջակցությամբ կարողացել է հնարավորինս արագ եւ արդյունավետ իրականացնել կառուցվածքների վերագործարկումներն ու կատարել այլ, առաջնային աշխատանքներ։

«Այն դպրոցներն ու հիվանդանոցները, որոնք թիրախավորվել էին Ադրբեջանի կողմից, հիմնականում վերանորոգվել, վերակառուցվել ու համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով։ Արցախում արդեն լիարժեք գործում են վնասված դպրոցները, մանկապարտեզները, հիվանդանոցները, բուժկետերը, եւ մնացել են մի շարք խոշոր ենթակառուցվածքներ վերականգնելու համար։ Հիմա հանրապետությունում ամենասուր հարցը բնակարանայինն է. ունենք գրեթե 40,000 տեղահանված, որը մեր բնակչության շուրջ 27 տոկոսն է կազմում։ Նրանց բնակտարածքով ապահովելը Արցախի իշխանությունների գերխնդիրն է, անշուշտ անվտանգության հարցերի լուծումից հետո։ Ստեփանակերտում եւ շրջաններում ձեւավորված են խոշոր շինհրապարակներ, եւ արդեն տարեվերջին կշահագործվեն բազմաբնակարան շենքեր ու առանձնատներ։ Պլանավորում ենք երեք տարվա ընթացքում ավելի քան 6,000 բնակարան կառուցել կամ ձեռք բերել, սակայն դեռեւս զգալի աջակցության կարիք ունենք նաեւ այդ ոլորտում», ընդգծել է նախարարը։

Նա անդրադարձել է նաեւ մինչ օրս չպայթած զինամթերքին, որը, նրա բնորոշմամբ, ամեն վայրկյան կարող է խաթարել մարդկանց կյանքը։ Հիշեցնենք, որ ինքը՝ Արտակ Բեղլարյանը մանուկ հասակում չպայթած զինամթերքի պատահական պայթյունի պատճառով առողջական անդառնալի խնդիրներ է ձեռք բերել։

«Կարեւոր եմ համարում ընդգծել նաեւ պատերազմի հետեւանքով տուժած անձանց ու ընտանիքների ֆիզիկական եւ հոգեբանական վերականգնման խնդիրը։ Պատերազմյան տրավմաների հաղթահարումը էական նշանակություն է ունենալու բոլոր ոլորտների վերականգնման ու հետագա զարգացման համար։ Այս ուղղությամբ որոշակի ծրագրեր իրականացվել են, սակայն ավելի մասշտաբային ու համակարգված ծրագրերի ու որակյալ մասնագետների կարիք կա դեռեւս։ Ֆիզիկական վերականգնման համար առողջապահության համակարգը եւ Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնն աշխատում են ակտիվորեն, բայց այդ առումով էլ ենթակառուցվածքների ու մասնագիտական կարողությունների ընդլայնման կարիք ունենք։ Մեկ այլ խնդիր է պատերազմի հետեւանքով նյութական մեծ կորուստների առկայությունը, որը շոշափելի սոցիալական խնդիրներ է հարուցել տասնյակ հազարավոր անձանց համար։ Արդեն Արցախի կառավարության կողմից սկսել են նյութական վնասների դիմաց աջակցության ցուցաբերման աշխատանքները, որոնք, մեր հաշվարկներով, հասնելու են շուրջ 5 մլրդ ռուբլու, սակայն պետք է պարզաբանել, որ դա ամենեւին վնասի իրական արժեքը չէ, եւ մենք փոխհատուցում չենք տրամադրում մասնավոր անձանց, այլ՝ աջակցություն, որպեսզի կարողանան դիմակայել ընթացիկ դժվարություններին ու ոտքի կանգնել»,- նշել է պետնախարարը։



Անդրադառնալով աշխատատեղերի հարցին՝ Բեղլարյանը նշել է, որ դա կառավարության գերակա խնդիրներից մեկն է, մանավանդ հիմա, երբ բռնի տեղահանված արցախահայերը մեծամասամբ ցանկություն են հայտնում վերադառնալ Արցախ, եթե ապահովվեն բնակֆոնդով եւ աշխատանքով։ Նա հայտնել է նաեւ, որ Արցախն այսօր վերականգնողական փուլից անցնում է զարգացման փուլ, եւ ամեն ինչ արվում է, որպեսզի մարդկանց կյանքն ավելի հարմարավետ լինի, քան պատերազմից առաջ էր։ Նա հատուկ շեշտել է, որ բացի ՀՀ-ից, ՌԴ-ն միակ երկիրն է, որն ուղիղ օգնություն է տրամադրում Արցախին, ընդգծելով, որ մյուս երկրների օգնությունները եղել են միջնորդավորված, հիմնականում Կարմիր Խաչի միջոցով, եւ անհամեմատ ավելի քիչ, քան՝ ՌԴ-ինը։ Նրա խոսքով, այն օգնությունը, որն այսօր տրամադրում է ՌԴ-ն Արցախին, անասելի մեծ կարեւորություն ունի

«Ես այդ աշխատանքների արժեքը շատ ավելի լավ գիտեմ, քանի որ ինքս կորցրել եմ տեսողությունս մանուկ հասակում 1990-ականների պատերազմից հետո մնացած ադրբեջանական ականի պայթյունի հետեւանքով։ ՌԴ-ն առայսօր էլ շարունակում է հումանիտար բեռների առաքումն Արցախ, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը։ Այնուամենայնիվ, քանի որ մեր բնակչության հումանիտար ու զարգացման կարիքները շատ ավելին են, քան Հայաստանի Հանրապետության, հայկական Սփյուռքի, Ռուսաստանի Դաշնության եւ ԿԽՄԿ կողմից ցուցաբերվող աջակցությունը։ Խիստ կարեւոր է, որ ՄԱԿ-ի համապատասխան գործակալությունները օր առաջ գործունեություն ծավալեն Արցախում՝ առանց ենթարկվելու ադրբեջանական անհիմն ճնշումներին ու սպառնալիքներին։ Ի դեպ, հիշեցնեմ, որ նրանց մուտքի վերաբերյալ հատուկ կետ կար պատերազմի ավարտն ազդարարող եռակողմ հայտարարության մեջ, բայց առայսօր այդ կետը նույնպես կյանքի չի կոչվել ադրբեջանական արհեստական խոչընդոտների պատճառով»,-ասել է Բեղլարյանը։

«Հարկ է ընդգծել նաեւ գերիների վերադարձի ու անհետ կորածների ճակատագրերի պարզման հետ կապված դժվարությունները։ Առայսօր Ադրբեջանը պատանդի կարգավիճակով պահում է տասնյակներով հայ գերիներ՝ չնայած միջազգային իրավունքով ու եռակողմ հայտարարությամբ ունեցած պարտավորությանը անմիջապես վերադարձնելու նրանց։ Հարյուրավոր անհետ կորած քաղաքացիական եւ զինվորական անձանց ճակատագրեր մնում են չպարզված, եւ մեր որոնողական խմբերը երբեմն-երբեմն հնարավորություն են ստանում աճյուններ որոնել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում։

Ավելի երկարաժամկետ հումանիտար խնդիրները բազմազան են՝ առողջապահության ու կրթության որակի ու մատչելիության մակարդակի բարձրացում, բոլոր երեխաների համար մանկապարտեզների հասանելիություն, բնակչության զբաղվածության եւ տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացում, հաշմանդամների ու վիրավորների լրիվ ինտեգրում հասարակության մեջ եւ այլն, եւ այլն։ Մենք նպատակ ունենք բոլոր խնդիրներին լուծում տալ դրանց առաջնահերթությունների ու մեր հնարավորությունների սահմաններում ակտիվորեն ներգրավելով բոլոր գործընկերներին ու աջակիցներին այդ գործում։ Հեշտ պայմաններում չենք, սակայն վստահ ու վճռական ենք մեր ընտրած ճանապարհի արդարացիության ու արդյունավետության մեջ»-, խոսելով գերիների վերադարձի եւ հումանիտար հարցերի մասին՝ հատուկ ընդգծել է պետնախարարը։

Արտակ Բեղլարյանը հարկ է համարել առանձին խոսել նաեւ Ստեփանակերտի օդանավակայանի մասին, որի գործարկման վերաբերյալ բազմաթիվ քննարկումներ են կայացել նաեւ Մինսկի խմբի շրջանակներում, սակայն ապարդյուն, որովհետեւ թշնամական Ադրբեջանն սպառնացել է խոցել այդտեղից թռչող նույնիսկ քաղաքացիական ինքնաթիռները

«Պատերազմից ու ՌԴ խաղաղապահ զորակազմի տեղակայումից հետո հույս ունեինք, որ օդանավակայանը կսկսի գործել, սակայն կրկին Ադրբեջանն ամեն ինչ անում է այդ ծրագիրը վիժեցնելու ուղղությամբ՝ առավելագույնս քաղաքականացնելով նման կարեւորության հումանիտար հարցը։ Ընդհանրապես, սա տեղավորվում է Ադրբեջանի իշխանությունների այն քաղաքականության շրջանակներում, որով ձգտում են առավելագույն չափով մեկուսացնել Արցախի բնակչությունը արտաքին աշխարհից, ինչն ինքնին դեմ է միջազգային իրավունքի ու քաղաքակիրթ աշխարհի նորմերին»,- ասել է Բեղլարյանը։

Ադրբեջանական հայատյացությանը նույնպես անդրադարձել է Բեղլարյանը, նշելով, որ այն օրեցօր ավելի մեծ չափերի է հասնում եւ ընդլայնում ախորժակը

«Ադրբեջանում հայատյացությունը առ այսօր մնում է պետական գաղափարախոսություն, եւ մենք այդ առումով որեւէ փոփոխություն չենք տեսնում»,- նշել է նա։

**Պատրաստեց՝**
**Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

# Արցախի թեմի առաջնորդ. «Կողմնակից եմ, որ բանակը հզորանա, քան թե նոր եկեղեցի կառուցենք»



Արցախի թեմի նոր առաջնորդը՝ Վրթանես եպս. Աբրահամյանը, «Սպուտնիկ Արմենիայի» հետ զրույցում մի շարք կարեւոր եւ ուշագրավ հայտարարություններ է արել։ Օրինակ՝ անդրադառնալով բանակ-եկեղեցի հարաբերություններին եւ բանակի հզորացմանը զուգահեռ նոր եկեղեցիների կառուցման խնդրին, նա ասել է, որ նախընտրում է նա՛խ հզորացած տեսնել բանակը, ապա միայն եկեղեցիներ կառուցել։

«Ես առավել կողմնակից կլինեմ, որ մեր բանակը հզորանա, քան թե մենք նոր եկեղեցի կառուցենք կամ վերանորոգենք։ Կառուցեցինք եկեղեցին, վերանորոգեցինք, հետո՞։ Եթե մեր բանակը տկար է, եկեղեցի վերանորոգելով չենք կարող շարունակել ապրել։ Եթե մարմնով հզոր չես, հոգեւոր առաքելությունդ էլ չես կարող կատարել։ Ես վստահ եմ. եթե Արցախը ամուր պարիսպներ ունենա, սահմանային գյուղերի բնակիչները աշխատանք ունենան, իրենք իրենց ձեռքո՛վ կվերանորոգեն իրենց տեղի վանքերը»,- ասել է նա։

Հոգեւոր առաջնորդի կարծիքով, առաջնային կարեւորությունն այսօր պետք է տրվի բանակաշինությանը, մարտական պատրաստվածությանը, հետո նոր հոգեւոր եւ մշակութային կյանքի հարստացմանը

«Եկեղեցին միշտ ասում է՝ ամուր հոգեւոր տան կողքին պետք է լինեն ամուր իշխանական տներ։ Իշխանական տներից մեկն էլ բանակն է։ Նրանք այդտեղ նախ կառուցեցին բերդը, ապա կամուրջը, հետո նոր՝ եկեղեցին։ Նույն առաջնահերթությամբ էլ մենք պետք է շարժվենք»,- իրավիճակը բացատրում է Վրթանես սրբազանը։

«Իշխանությունների ամեն որոշում ուղիղ հետեւանք է ունենում արցախցիների համար։ Եթե Արցախի ապագան, վաղվա օրը պարզ լինի, դու էլ հնարավորություն ունենաս, պետք է նոր եկեղեցիներ էլ կառուցես, իսկ ավելի լավ է՝ հները, որոնք խոնարհված վիճակում են, վերանորոգես։ Ես չեմ ասում, որ եկեղեցիներ պետք չէ վերանորոգել կամ հոգեւոր կյանքը պետք է առանձնանա բանակից, հակառակը՝ աղոթող զինվորը աննկուն զինվոր է, մեր պապերը խաչերը ձեռքին են գնացել հայրենիքը պաշտպանելու։ Ու մենք էլ ասում ենք՝ հույսը առ Աստված երբեք չի ամաչեցնում, բայց այդ հույսն ունեցողն էլ պետք է իր վաղվա, իր իշխանությունների որոշումների հանդեպ վստահություն ունենա», - ասում է Սրբազանը։

**Պատրաստեց՝**
**Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

ՆԱԻՐ ՅԱՆ

# Քովիդն իշխանություններին չի կպնում

Քովիդի հայաստանյան ցուցանիշները սարսափեցնող են. ամեն օր մեկ-երկու հազարն անցնող նոր վարակակիրներ, մի քանի տասնյակ մահացության դեպքեր: Դրան զուգահեռ՝ Առողջապահության նախարարությունից ամեն օր լսում էինք պատվաստվելու, դիմակ կրելու պարտադրանք ու հորդոր, բայց դրան զուգահեռ՝ հանրային միջոցառումների, հավաքույթների, փառատոների պակաս չկա:

Նախարար **Ավանեսյանն** անգամ հայտարարեց, թե չի բացառվում, որ ՊՇՌ թեստերը պահանջվեն ոչ թե երկու շաբաթը մեկ, այլ ամեն շաբաթ: Իսկ պոլիկլինիկաներում պատվաստման կաբինետների առջեւ կուտակումները 1990-ականների հերթերն են հիշեցնում:

Հանրային տրանսպորտը, խանութներն ու առեւտրի մյուս օբյեկտներն աշխատում են գերծանրաբեռնված, չեն պահպանվում հակահամաճարակային կանոնները, մի խոսքով՝ հանրությունն ապրում է քովիդի հետ հաշտ, մահերին՝ համակերպված, իշխանությունների հակաքովիդային կեղծ պայքարի քաղաքականությունը լիովին մարսած:

Ակնհայտ էր, որ ուսումնական տարվա մեկնարկի ու ընթացքի հետ, ինչպես եւ սպասելի էր, քովիդի թվերը կայծակնային աճեցին: Ակնհայտ էր նաեւ, որ հնարավոր էր անցնել հեռավար ուսուցման համակարգին, բայց կառավարությունը միտումնավոր չարեց այդպես, որովհետեւ նախորդ տարվա փորձը ցույց տվեց, որ հեռավարն ու սահմանափակումներն անհամեմատ կրճատում են քովիդի թվերը: Իսկ դա հայրենի իշխանությունների պլանների մեջ չէր մտնում: Այդ դեպքում պատվաստումների, թեստավորումների պարտադրանքը չէին կարող դամոկլյան սրի նման ճոճել ժողովրդի գլխին:

Միանշանակ չենք կարող ասել, թե պատվաստվողները պատվաստման ծրագրին լիարժեք վստահելո՞վ են այդ քայլին դիմում: Պատվաստումների համար հերթեր գոյացան այն ժամանակ միայն, երբ նախարարությունը դրամական տույժերի սպառնալիքի տակ սկսեց թեստերի ու պատվաստման սերտիֆիկատներ պահանջել: Դա արդեն խփում է ուղիղ քաղաքացու գրպանին: Եվ դա է հիմնական պատճառը, որ մարդիկ գլխացավանքից ազատվելու համար դիմում են անվստահելի պատվաստումներին՝ քաջատեղյակ, որ եթե անգամ նախարարությունը պատվաստված-վարակվածների մասին տվյալներ չհրապարակի, միեւնույն է՝ իրենց շրջապատում այդպիսի դեպքերը լիուլի են: Շատերն իրենց անձնական հետազոտության եւ ուսումնասիրության վրա են հիմնվում: Պատվաստումը, այո՛, չի ձերբազատում վարակվելուց,



պատվաստումը երբեմն ավելի ծանր ընթացք է ունենում, քան քովիդը, բայց պատվաստումը մեկընդմիշտ ազատում է թեստավորվելուց եւ դրա համար գումար վճարելուց:

Կառավարությունը հենց սրա վրա էր դրել գլխավոր խաղաքարտը եւ մինչեւ վերջերս որեւէ սահմանափակում չէր կիրառել, հեռավար ուսուցման չէր անցել. արդյունքում ունեցանք վարակվածության ու մահերի ամենօրյա ահագնացող թվեր, քովիդի դեմ անլուրջ պայքար եւ ֆինանսական տույժի սպառնալիքով պատվաստումների հերթեր:

Երբ պատկերը դարձավ գոհացնող եւ իշխանությունների՝ հակաքովիդային պայքարի հետ ուղիղ համեմատական, Առողջապահության նախարարը հրահանգեց, որ աշնանային արձակուրդները կերկարաձգվեն եւս մեկ շաբաթով՝ մինչեւ նոյեմբերի 7-ը ներառյալ, իսկ բուհերը կանցնեն հեռավար ուսուցման:

Դրանից մոտ երկու ժամ առաջ ՀՀ նախագահի նստավայրում «Մտքերի հայկական գագաթաժողովի» շրջանակում հատուկ ընդունելություն էր կազմակերպվել. ներկա էին հարյուրավոր հյուրեր, այդ թվում՝ իշխանությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը**: Բոլորն՝ առանց դիմակի, բացառությամբ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար **Վահագն Խաչատրյանի**: Բոլորը՝ մեկ տեղում, կողք-կողքի:

Երբ իշխանությունների խոսքն ու գործն իրար չեն բռնում, պատվաստումների ու թեստավորման ծրագիրն ուղղակի բղավում, ճչում է, որ ամեն ինչ բլեֆ է, մեծ մաֆիայի սարքած բլեֆը:

Աբսուրդն այն աստիճանի է հասել, որ նախարարը, թերեւս լսելով իրեն ու բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղված բողոքը՝ ինչո՞ւ նախագահականում բազմամարդ ընդունելության ժամանակ ոչ ոք դիմակ չի կրել, հոկտեմբերի 26-ի երեկոյան հրաման է արձակել, թե բոլորը պետք է դիմակ կրեն, բացառությամբ՝ ՀՀ նախագահի, Ամենայն հայոց կաթողիկոսի, ԱԺ նախագահի, Սահմանադրական դատարանի նախագահի, Բարձրագույն դատական խորհրդի նախագահի գլխավորությամբ անցկացվող արարողակարգային միջոցառումների ժամանակ ելույթ ունեցողների եւ միջոցառման անմիջական մասնակիցների, բացառությամբ՝ լրագրողների եւ սպասարկող անձնակազմի:

Ծաղրելն ու նվաստացնելն էլ ինչպե՞ս է լինում, այսինքն՝ բարձրաստճան պաշտոնյաների արյունը մյուս մահկանացուներից ավելի կարմիր է, իրենք արտոնյալ են, դիմակ չպիտի կրեն, մյուսները պիտի կրեն, դե իսկ քովիդն անվրեպ տարբերակում է՝ ով է պաշտոնյա, իսկ ով՝ հասարակ ժողովուրդ. քովիդը իշխանություններին շրջանցում է:

# Վազգեն Մանուկյանի արհամարհված կոչը

Անցյալ տարի՝ այս օրերին, Հայաստանն ու Արցախը լայնածավալ պատերազմի մեջ էին: Մենք անվերապահորեն հավատում էինք պաշտոնական տեղեկություններին, որոնք շարունակ սուտ ու կեղծիք էին տարածում, թե «Հաղթելու ենք, հաղթում ենք, թշնամուն զգետնում ենք, թշնամին գյոռբագյոռ է լինում»:

Հաղթանակի իմիտացիայի պատկերին զուգահեռ՝ պտրդում էին նաեւ տեսանյութեր՝ Ջրականի, Վարանդայի, Հադրութի, Աղդամի հանձնման, պատերազմի դժոխքի մասին:

Զուգահեռաբար՝ «Էրատո» ջոկատը ֆոտոսեսիաներ էր անում իբր զորավարժություններից, իբր Արցախից: Հայությունը, թմբիրի, խաբկանքի, կեղծիքի մեջ, հակասական լուրեր էր լսում՝ մեկ վայրկյան անգամ չկասկածելով մեր հաղթանակին:

Եվ հանկարծ հոկտեմբերի 27-ին տարածվեց ՀՀ նախկին վարչապետ, Պաշտպանության նախկին նախարար Վազգեն Մանուկյանի կոչ-հայտարարությունը.

*«Հայրենակիցնե՛ր,*

*Մենք այժմ, չնայած մեր ժողովրդի հերոսական պայքարին, ապրում ենք մեր պատմության ամոթալի եւ կործանարար էջերից մեկը:*

*Վտանգված է ոչ միայն Արցախը, այլեւ Հայաստանը եւ հայության ապագան:*

*Կարելի՞ է արդյոք փոխել իրավիճակը, բեկում մտցնել: Այո՛: Բայց ոչ ներկա կառավարման օրոք;*

*Ի՞նչ է պետք անել:*

*1. Այս կառավարությունը պետք է հրաժարական տա՝ բանակին հանձնելով ողջ իշխանությունը, ընդ որում՝ դա պետք է անի կամավոր, առանց ցնցումների, որոնք կարող են կործանարար լինել:*

*2. Բանակը, իր ձեռքը վերցնելով ողջ իշխանությունը, պետք է կազմի միասնական Պաշտպանության կոմիտե Արցախի հետ միասին՝ կազմակերպելով պատերազմական ներկա իրավիճակին անհրաժեշտ միջոցառումները, ապահովելով վստահություն եւ գնալով բանակցությունների շահագրգիռ պետությունների, միջազգային կառույցների հետ:*

*Սա միակ փրկությունն է: Հակառակ դեպքում մենք կարող ենք կորցնել ամեն ինչ:*

*ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ»*

Բարոյականության, դաստիարակության փոքրիկ նշույլ ունեցող մարդն ամոթից կկարմրի վերհիշելով, թե մեկ տարի առաջ սոցցանցերում ինչ օրը գցեցին Վազգեն Մանուկյանին նրա հայտարարության տարածումից վայրկյաններ անց:

Հաղթանակի էյֆորիայի մեջ՝ ժողովուրդն այդպես էլ չսթափվեց այս կոչից, ընդհակառակը, վայրի գազանի պես վիրտուալ հարձակում գործեց քաղաքական մեծ փորձառություն, հոտառություն ունեցող, հաղթած երկրի վարչապետի ու Պաշտպանության նախարարի վրա:

Մեր պարտությունը քայլ առ քայլ իրականացնող իշխանությունները դեռ պատերազմի ժամանակ էին ծրագրում պարտությունից հետո երկրի ղեկին ամեն գնով մնալու իրենց հետագա գործողությունները, իսկ Վազգեն Մանուկյանը սին հույսեր էր փայփայում, թե Փաշինյանի գլխավորած կառավարությունն անհապաղ հրաժարական կտա, կամ ժողովուրդը կպահանջի այդ հրաժարականը՝ հայրենիքը փրկելու վերջին ձգտումով:

Վազգեն Մանուկյանի կոչը հետագայում էլ անուշադրության մատնվեց անգամ ընդդիմադիր դաշտի կողմից, այնինչ նրա ամեն բառը հայրենափրկության, թմբիրից դուրս գալու, իրավիճակը ճիշտ ու անվրեպ գնահատելու ուղերձներ էր պարունակում:

Միգուցե գա ժամանակը, եւ մենք այնքան ողջամիտ դառնանք, որ Վազգեն Մանուկյանի չիրականացված կոչը գոնե ընդգրկենք պատմության դասագրքերում:

ՆԱԻՐ ՅԱՆ

# Իրավական նիհիլիզմ





Ուղիղ մեկ ամիս է անցել, սակայն պրոֆեսոր **Արմեն Չարչյանի** առողջական վիճակի մասին եզրակացություն չկա. դատարանի կողմից փորձաքննություն նշանակելուց հետո լռություն է տիրում: Խոսում, բողոքում են միայն փաստաբանները, որոնք պարբերաբար բարձրաձայնում են, որ Արմեն Չարչյանի առողջական վիճակը կալանքի հետ անհամատեղելի է, բայց խափանման միջոցը փոխելու համար առողջապահական հանձնաժողովի եզրակացությունն է պետք: Իսկ հանձնաժողով դեռ ստեղծված էլ չէ, թեեւ դատարանն էր որոշում կայացրել դրա անհրաժեշտության վերաբերյալ: Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը** մինչ օրս չի արձագանքել:

«Փաստացի մեկ ամիս իրավասու մարմինն անգործություն է ցուցաբերում, իսկ ՀՀ առողջապահության նախարարությունն էլ իր հերթին ոչ մի կերպ դրան չի արձագանքում: Ստեղծված իրավիճակը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Հայաստանի իշխանություններն ունեն նպատակ պրոֆեսորին ամեն գնով երկար պահել բանտում, ինչը պարզապես իրավական նիհիլիզմի տարր է պարունակում»,- հայտարարել է փաստաբան **Էրիկ Ալեքսանյանը**:

Նա հորդորում է Առողջապահության նախարարին հրատապ պատասխանել դատարանի գրությանը եւ բժշկական հանձնաժողով ստեղծել:

«Հակառակ դեպքում պարոն Չարչյանի համար անդառնալի հետեւանքների ամբողջ պատասխանատվությունը Դուք եք կրելու, տիկի՛ն»,- նշել է փաստաբան Ալեքսանյանը:

Արմեն Չարչյանի գործով դատական նիստը հետաձգվել է մինչեւ նոյեմբերի 22-ը:

ՆԱԻՐ ՅԱՆ

ԱԶԳ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 40(5680)
29 ՀՈԿՏԵՄԲԵՐ
2021

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հրաժեշտ Շահեն Խաչատրյանին



## Մեր անկրկնելի Շահենը

**Նա մաս էր կազմում արվեստագետների, արվեստաբանների, գրողների՝ նույնպես անկրկնելի խմբին, որը սկսած 1996 թ.-ից դարձել էր մեր թերթի խիղճը, ճաշակը եւ հսկիչը միանգամայն: Մի տեսակ՝ խմբագրություն խմբագրության մեջ: Ինքը կանոնավոր պարբերականությամբ լինում էր խմբագրությունում, հատկապես արտասահմանյան ուղեւորություններից վերադարձին, ձեռքին՝ հոդված կամ թղթակցություն, գիրք կամ կատալոգ, բոլորն էլ իր մակագրությամբ: Պատմում էր գտած ընդունելության, կատարած գործերի, բերած նկարների մասին: Խոսում էր Ազգային պատկերասրահում եւ Սարյան թանգարանում դեռ անելիք իր շատ գործերից պարտադրաբար զրկված մարդու դառնությամբ, թախծոտ ու վիրավորված: Մեկ անգամ միայն եկավ ճակատամարտը հաղթած զորապետի պես՝ Սանկտ Պետերբուրգում հաջողվել էր ապացուցել, որ Այվազովսկին «հայ է»...**

**Անկրկնելի մեր Շահենը:**

**Ու պատկերացնել, որ նրա հուղարկավորությանը ոչ մի պաշտոնատար անձ ներկա չէր, միայն ընտանեկան պարագաներ եւ մի քանի ընկերներ: Մեկ էլ՝ Մայր աթոռից Ասողիկ վարդապետը՝ Ամենայն հայոց հայրապետի ծաղկեպսակով...**

«ԱԶԳ»

Իր մահկանացուն կնքեց Շահեն Խաչատրյանը: Նա մեկն էր մեր այն հազվագյուտ անձանցից, որոնք իրենք են ստեղծում իրենց անուն-ազգանունը, որոնք անուն ունեն, որ միշտ հարգանք է ներշնչում եւ ավելին է, քան որեւէ աստիճան եւ կոչում: Նա իր անունը ստեղծել է իր անխոնջ ու անդուլ գործունեությամբ:

Եղեռնից հրաշքով փրկված էրզրումցի ծնողների զավակը ծնվել էր Հալեպում: 1946 թվականին ընտանիքով եկել էին Հայաստան: Այստեղ Խաչատրյանների ընտանիքը թեեւ լիովին ճաշակել էր հայրենադարձներին բաժին ընկած բոլոր տեսակի դառնությունները, այնուամենայնիվ Շահենը եղավ ու մնաց Հայաստանին խորունկ ու անվերադարձ նվիրված ու սիրահարված անձնավորություն:

Շահեն Խաչատրյանը հայ արվեստաբանության ասպարեզը մտավ 1960-ական թվականներին. 1959 թվականի դեկտեմբերից աշխատանքի էր անցել Հայաստանի պետական պատկերասրահում: Շահենը պատկանում է 1960-ական թվականների մեր այն տաղանդավոր արվեստագետների փաղանգին, որը բերեց նոր ժամանակների հայ գեղանկարչության փառքը: Դա Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Հովհաննես Մինասյանի, Արտո Չաքմաքչյանի, Երվանդ Գոջաբաշյանի, Հակոբ Անանիկյանի, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի, Ռոբերտ Էլիբեկյանի եւ էլի մեծ թվով տաղանդավոր արվեստագետների սերունդն էր: Շահեն Խաչատրյանը նրանց ընկերն էր, բարեկամը եւ արժանավոր ժամանակակիցը: Այսօր անկարելի է արվեստագետների այդ խմբի մասին խոսել առանց նրանց արժանավոր ուղեկցի՝ Շահեն Խաչատրյանի անունը տալու: Մեր արվեստագետները պետք է ունենային իրենց արվեստը ժողովրդին տանող-հասցնող-մատուցող միջնորդը, արվեստաբանը, կերպարվեստը դեպի դպրոցները, լսարանները, ժողովրդի ամենատարբեր հատվածներին տանող անձի, եւ այդ անձը եղավ Շահեն Խաչատրյանը: Իբրեւ մեր արվեստը ժողովրդականացնող անձ նա չունեցավ իր հավասարն ու մրցակիցը: Երանի էր, որ մեր մշակույթի այլ ասպարեզներում՝ գրականության-երաժշտության կամ թե թատրոնի, լիներ Շահեն Խաչատրյանի նման մի գործիչ:

Հիմա, երբ ես ետ եմ նայում, նայում եմ իր անցած ուղուն, իր հսկայածավալ գործունեությանը, որի թեեւ ականատեսը, վկան ու երբեմն նաեւ մասնակիցն եմ եղել իր թանգարանային եւ արվեստաբանական գործունեության, այնուամենայնիվ մնում եմ ապշած ու զարմացած: Շահեն Խաչատրյանը մեն-մենակ արել է մի ինստիտուտի աշխատանք:

Շահեն Խաչատրյանը հեղինակ է հարյուրավոր ցուցահանդեսների եւ հաճախ ոչ սովորական, այլ բացառիկ ցուցահանդեսների, եւ տասնյակ ու տասնյակ ալբոմ-պատկերագրքերի եւ մասամբ ոչ սովորական, այլ ընտիր, ուղղակի հանրագիտարանային պատկերագրքերի:

Նա, ով կյանքում գեթ մեկ անգամ փորձել է ցուցահանդես կազմակերպել կամ մասնակից է եղել ցուցահանդես կազմակերպելու գործին, ճիշտ կպատկերացնի, թե ինչ ասել է ցուցահանդես կազմակերպելը, ինչ ծանր, դժվարին ու արտամաշ աշխատանք է դա, ինչ ջանքեր է պահանջում: Շահենը իր շատ ցուցահանդեսները կազմակերպել է բոլորովին մեն-մենակ, անելով ցուցահանդեսի հետ կապված ամեն մի բան՝ սկսած ցուցանմուշները հավաքելուց եւ շրջանակ ու պաստառներ պատրաստելուց մինչեւ բացման ոգեշունչ խոսքը: Շահեն Խաչատրյանը հարյուրավոր, ուղղակի հարյուրավոր ցուցահանդեսներ է կազմակերպել Հայաստանում, Խորհրդային երկրի տարբեր մեծ ու փոքր քաղաքներում, ինչպես նաեւ արտասահմանյան երկրներում:

Լինելլո Վենտուրին մի առիթով ասում է, որ ալբոմ-պատկերագիրք կազմել-ստեղծելը հավասարազոր է մենագրություն գրելուն: Դա նույնպիսի ծանր ու դժվարին գործ է, ինչպես ցուցահանդես կազմակերպելը, դեռ դրան գումարած նաեւ տեսական-ուսումնասիրական աշխատանքը: Ապշեցուցիչ է Շահեն Խաչատրյանի հեղինակած մեծ ու փոքր ալբոմների եւ կատալոգների թիվը: Դրանց սոսկ թվարկումը հսկա տեղ կզբաղեցնի: Իր հետ աշխատում էին խորհրդային երկրի լավագույն հրատարակչությունները՝ Լենինգրադ-Սանտ-Պետերբուրգի «Ավրորա»-ն, Մոսկվայի «Սովետսկի խուդոժնիկ» («Խորհրդային նկարիչ») եւ այլ հրատարակչություններ, ալբոմ էին պատվիրում եւ հրատարակում էին մեծ սիրով: Մի քանիսը չեմ կարող չհիշել: Իր ալբոմներից առանձնանում է 1987-ին հրատարակած մեծադիր եւ մեծածավալ- ուղղակի հանրագիտարանային «Սարյան»-ը՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, սերբերեն եւ այլ լեզուներով, իր փառահեղ «Մինաս»-ը, իր քանի «Այվազովսկի»-ներից վերջին մեծածավալը... Չեմ կարող չհիշել Փարիզի «Գալիմար»-ի հրատարակած իր «Սարյան»-ը: Շատ մարդ կերազեր, որ «Գալիմար»-ը հրատարակեր իր ալբոմը կամ գիրքը: Դրանք չունեն իրենց նմանն ու հավասարը...

⇨ Բ



Ընկերների հետ Վանում, Վարագավանքում

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Արվեստաբան

# Կյանքից հեռացավ «Թանգարանի զինվորը»

Վախճանվեց Շահեն Խաչատրյանը՝ հայ արվեստաբանության եւ արվեստի քննադատության վերջին մոհիկանը:

«Թանգարանի զինվոր»: Այսպես է կոչել նրան Սարյանը, այսպես է Շահենը խորագրել իր գիրքը, որի էջերում պատմում է իր ամենեւին էլ ոչ թեթեւ կյանքի մասին:

Շահենի ընտանիքը հայրենադարձվել է 1946 թվականին եւ այստեղ՝ Հայաստանում նա ճաշակել է այս կյանքի լեղին, նրան դաժանորեն ծեծել են Չարենց արտասանելու եւ «Կիլիկիա» երգելու համար:

Շահենի հայրական ընտանիքը ազնիվ ու պարկեշտ ընտանիք էր. քարգործ-վարպետ հայրը իր հացը վաստակում էր իր արհեստով: Այդպիսի աշխատավոր էր նաեւ Շահենը իր ողջ գիտակցական կյանքում:

Երկար տարիներ նա եղել է նորաստեղծ Սարյան թանգարանի տնօրենը:

«Խնդրում եմ Շահենին նշանակել թանգարանի տնօրեն...»,- գրել է Վարպետը մշակույթի նախարարին: Եվ չի սխալվել: Շահենը բառացիորեն իր ողջ օրը, իր քաղցրու ժամը, ցերեկ թե գիշեր, անց էր կացնում թանգարանում, աշխատելով ոչ թե պարտավորվածությամբ, այլ խղճի մտոք: Թանգարանի կայացումը երկար ու ծանր ընթացք է, եւ Շահենը լիովին նվիրվեց այդ գործին, ծառայելով մեծ Վարպետին ու նրա արվեստին:

Բավարար չափով տիրապետելով ռուսերենին, Շահենը ընդունվեց Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան՝ դառնալով իսկական պրոֆեսիոնալ: Նրան զարմանալիորեն հաջողվում էր համադրել գրասեղանային-գրասենյակային աշխատանքը թանգարանային եւ ցուցահանդեսային գործնական գործունեությունը: Նա կազմակերպում էր ցուցահանդեսներ եւ ցուցադրություններ, գրում էր անհաշիվ հոդվածներ, դասախոսություններ էր կարդում, հրատարակում էր գրքեր եւ ալբոմներ:

Շահենը արվեստում ուներ իր նախընտրությունները եւ համակրանքները: Ամենից առաջ դրանք Մարտիրոս Սարյանը, Այվազովսկին, Մինասը, Հակոբ Հակոբյանն էին եւ սփյուռքահայ նկարիչները: Թե քանիսին է նա հանել անհայտությունից, քանիսին է գտել ու հայտնաբերել, նրանց որքան գործերն է բերել Հայաստան, դժվար է հաշվել ու ասել: Հայաստանի ազգային պատկերասրահը նա հարստացրել է չորս հարյուր գործով, որոնցից շատերը հայ արվեստի գլուխգործոցներ են:

Շահենը չէր խորշում ոչ մի աշխատանքից: Ե՛վ պատկերասրահում, ե՛ւ Մարտիրոս Սարյան թանգարանում, նա՝ հիմնարկի տնօրենը, բարձրանում էր բարձր աստիճանին եւ նկարներ էր կախում, շրջանակներ էր նորոգում եւ, եթե դա պետք էր, առնում էր ներկարարի թիակն ու վրձինը: Այդպիսի մարդ էր: Բարեհոգի էր, բարեկիրթ եւ օրինավոր: Կարող էր եւ սխալվել,- արվեստաբաններից ո՞վ չի սխալվել, բայց նրան մեղադրում էին, ինչքան կարող էին: Ընդ որում, մեղադրում էին մարդիկ, որոնք արվեստում իրենցից ոչինչ չէին ներկայացնում: Շահենը վաղուց մոռացել էր նրանց, ներել էր:

2004 թվականից հետո, երբ Շահենը հարկադրաբար,- այդպես էր պահանջել իշխանությունը,- թողեց պատկերասրահում իր աշխատանքը «..... իր ...... Կաթողիկոսի հրավերով զբաղվեց Մայր աթոռում «Խրիմյան» թանգարանի կազմակերպումով: Նրան հաջողվեց ժամանակակից հայ նկարիչների, այդ թվում՝ սփյուռքահայ նկարիչների մեծ թվով գործեր հավաքել: Դրանք հիմնականում նվերներ էին:

Շահենը, ինչպես ոչ ոք, կարողանում էր համոզել նկարիչներին կամ նրանց ժառանգներին նկարներ նվիրել հարազատ երկրին: Նրա ամեն այցը արտասահման,- նախաձեռնություններն ու չարախոսները շատ էին,- ավարտվում էր մեր թանգարաններին տրված նոր նվերներով: Իհարկե, նախ եւ առաջ Ազգային պատկերասրահին: Եվ, իհարկե, անշահախնդրորեն:

Եվ այդպես էլ ընկերություն եւ բարեկամություն էր անում: Նվիրվում էր անմնացորդ ձեւով, փոխարենը ոչինչ չպահանջելով ու չակնկալելով:

Շահենի հեռացումով մի անլցելի անդունդ գոյացավ: Արվեստի այդպիսի ջատագով մեր մշակույթի մեջ մեզ պատկերվող ապագայում չի էլ լինելու: Կմնան իր գրքերը, կմնան այն թանգարանները, որտեղ նա աշխատել է, կմնա իր բարեշնորհ հուշը:

Գնաս բարով, Շահեն, հալեպցի բարի հա՛յ մարդ:

***Հ.Գ.-*** *Մի անգամ Շահենն ասաց, որ ինքը ապրելու է 87 տարի: Այդպես էլ եղավ:*

## Մեր թանկագին Շահէնը ալ չկայ

Հայկական արուեստին խորհրդանիշն էր ան ու ամբողջ աշխարհին մէջ տարածեց ու ծանօթացուց հայ արուեստը:

Որոշ չար լեզուներ իր կեանքը կերան, ու իր վերջին տարիները ան կրակի պէս ապրեցաւ:

Ուզեն-չուզեն, իր պայծառ կերպարը ու անբաղդատելի անձնաւորութիւնը անմահ է:

***ԱՐՄԷՆ ՄՈՒԹԱՓԵԱՆ***

ՀՐԱԶԴԱՆ ԹՈՔՄԱՋՅԱՆ

# Աստծո սիրելին եւ Սարյանի ընտրյալը

## *Անմնացորդ այրվող մարդը*



Պարտված ապրելը աստիճանաբար դարձավ սովորական: Պարտված ոչ միայն թշնամուց, այլեւ համավարակից: Պարտված՝ մեր օրերում անցյալի ու ներկայի անպտուղ բախումից ու ապագայի անորոշությունից: Պարտված՝ անցած օրերը ջերմությամբ ու ուրախությամբ լցրած մարդկանց կորստով:

Շահեն Խաչատրյանը իր սերնդի ամենահայտնի հայերից մեկն էր: Իր արվեստագետ ընկերների ստեղծած «լեգենդի» անբաժանելի մի մասնիկը: Մեր կերպարվեստում մի հաղթական շրջան կա, որին մի շարք հրաշալի նկարիչների ու քանդակագործների, արվեստաբանների կողքին իր կարեւոր մասնակցությունն է բերել Շահենը: Այն Շահենը, որը դեռեւս պատանի, հայրենադարձվել էր Սիրիայից ու հայտնվել Խորհրդային Հայաստանում:

Նվաղուն ձայնով տասնամյակներ շարունակ ազգային մշակույթը գովերգող, ամեն տեղ հասնող եւ իր ներկայությամբ գոտեպնդող Շահենը նմանը չուներ: Գործին նվիրված, կենսասեր, եռանդուն հայի իսկական օրինակ: Մեր՝ ուսանողներիս համար նրա խոսքն ու գաղափարները ամբողջությամբ ներդաշնակ էին իր ռոմանտիկ մարդկային կերպարի հետ: Նրա խոսքը համոզիչ էր ու վարակիչ:

Տարիներ անց Շահենի առաջարկով ես աշխատանքի մեկնեցի Սիրիա՝ իր ծննդավայր Հալեպ քաղաքը: Այլ խոսքով ասած՝ կյանքիս ամենամեծ փոփոխությունը կապված է իր հետ: Այժմ, երբ սիրելի Շահենը մեզ հետ չէ, սրտի ցավով, ափսոսանքով, ջերմությամբ ու կարոտով եմ հիշում իր բազմաթիվ այցելությունները Սիրիա: Նրա մարդկային հմայքը կախարդում, ճանապարհ էր բացում յուրաքանչյուր նոր գաղափարի համար: Անթիվ-անհամար դասախոսությունները, շնորհանդեսները, հրատարակությունները, ցուցահանդեսները իմաստավորում էին մեր ծանրաքայլ առօրյան:

Չգիտեմ՝ արվեստաբանության մեջ կա՞ ուրիշ մեկը, որ այդքան մեծ ներդրում ունենա սփյուռքահայության՝ սեփական մշակույթի հետ կապը ամրապնդելու գործում: Բազմաթիվ կազմակերպությունների, անհատների առաջարկ-խնդրանքների ոչ մի մերժում չեմ հիշում: Չէր մերժում ոչ ոքի: Գրեթե միշտ մոռանալով Ազգային պատկերասրահի եւ Սարյան թանգարանի տնօրենի լրջագույն հանգամանքը՝ ընդառաջ էր գնում բոլորին: Մարդկանց հետ հարաբերվելու մի զարմանալի ազատություն (անզգուշություն) ուներ:

Մենք արվեստաբաններին հաճախ արժեւորում ենք իրենց ակադեմիական աշխատություններով, սակայն, կարծում եմ, նվազ տաղանդ պետք չէ ժողովրդի հետ հմտորեն աշխատելու համար: Քանի՜-քանի՜ խանդավառ դահլիճներ է տեսել Շահենը: Իր խոսքի ուժով քանի՜-քանի՜ անտարբեր սրտեր են վառվել արվեստի հրով: Քանի՜-քանի՜ կյանք տեսած, ամեն ինչից ձանձրացած ունկնդիրներ են վառվող աչքերով մոտեցել դասախոսությունը ավարտած Շահենին: Այն, ինչի մասին հաճույքով հիշում եւ գրում եմ, չի վերաբերում միայն Հալեպին, Դամասկոսին, Բեյրութին: Նրան սպասում էին Կանադայից Ֆրանսիա, Միացյալ Նահանգներից Ռուսաստան եւ այլուր: Նրա եռանդն անսպառ էր: Իր սրտին խոսող որեւէ գաղափարի համար օվկիանոսներ ու մայրցամաքներ անցնելը՝ սովորական բան:

Վերջին գոնե երեսուն տարիներին Շահեն Խաչատրյանը եղել է իմ ընտանիքին հարազատ, ամենասիրելի մարդկանցից մեկը: Այդ պատճառով հասու ենք եղել ոչ միայն նրա ուրախություններին ու հաջողություններին, այլեւ ցավերին ու դառնություններին: Նա Հալեպ գալիս էր ոչ միայն որպես պետության ներկայացուցիչ՝ միջպետական ծրագրերով ու այլազան կազմակերպությունների հրավերով: Երբեմն գալիս էր մենակ, երբեմն՝ ընկերների խմբով: Ամեն անգամ նախեւառաջ նա գալիս էր իր ծննդավայրը: Աշխարհի ցավերից ու դավերից հեռու (այն ժամանակ) իր «սկիզբը»: Աստծո ողորմածությամբ շեն ու առատ այս քաղաքը մի լուսավոր կետ էր իր համար:

Հիմա չեմ հիշում՝ քանի անգամ, բայց յուրաքանչյուր այցի ժամանակ, երբ Նոր Գյուղում՝ մարաշցիների ակումբի մոտ, իջնում էինք մեքենայից, մի քանի քայլ ես գնալով ցույց էր տալիս այն տեղը, ուր եղել է իր հայրական տունը: Սա փոքրիկ ծեսի պես մի բան էր դարձել: Ես էլ, ինքն էլ լավ հիշում էինք տան տեղը: Բայց միասին մի քանի րոպե պետք է կանգնեինք փողոցում եւ հետո հաստատեինք, որ այստեղ է եղել տարագրության օրերին Վարպետ Գեւորգի շինած տունը: Ինձ թվում է՝ Հալեպը Շահենի մանկության «պաղ աղբյուրն» էր, որտեղից խմած ու եռանդ ստացած հեռանում էր:

Մարդկանց լավ գործերը եւս մոռացվում են, երբեմն՝ շատ արագ: Առավել եւս մոռացվում են պայմանները, որոնցում գործել են մեզ նախորդող սերունդները: Քարի վրա քար դնելու համար պետք էր ապրել ստալինյան ռեժիմը, խորհրդային կարգերը, նորանկախ Հայաստանի դժվարությունները:

Մեր տուն վերջին այցելություններին Շահենը արդեն վատառողջ էր, շատ չէր խոսում: Մի անգամ գրպանից հանեց նոր տպված հայկական քսանհազարանոց թղթադրամը, որի վրա Հովհաննես Այվազովսկու նկարն էր... Այո՛, փոխվել էին ժամանակները: Տարիներ առաջ ո՞վ կմտածեր, որ հայերը դրամ կտպեն՝ այն էլ՝ Այվազովսկու նկարով: Չգիտեմ՝ հիշվելո՞ւ է Շահենի՝ տասնամյակներ շարունակ տարած աշխատանքը Այվազովսկու հայկական ինքնության հաստատման եւ տարածման գործում:

Այսօր, երբ հրաժեշտի պահն է, սիրելի Շահենի մասին մտածում եմ հետեւյալը. իր նորաստեղծ թանգարանը Սարյանը վստահել էր Շահենին: Նրան ընտրել էր մեծն Սարյանը: Նա Սարյանի ընտրյալն էր: Իսկ այն, ինչ կապված է Սարյանի հետ, իր մեջ անպայման խորհուրդ ունի: Եթե կարելի է այդպես ասել, ինքը «ձեռնադրվել» էր մեծ Վարպետ Սարյանի կողմից:

Երկրորդ բանը, որ մտածում եմ իր մասին, այն է, որ Շահենը որոշակի ներքին զգացողություն, պայծառատեսություն ունեցող, Աստծո սիրելի մարդ էր: Իր հախուռն կյանքին հակառակ՝ քայլ առ քայլ, աստիճանաբար հեռացավ մեզանից: Թերեւս չզգաց ո՛չ մեր հայրենիքի ծանր վիճակը եւ ոչ իսկ իր մոտալուտ վախճանը:

Վերջին տարիներին Չարենցից մի քառյակ էր շուրթերին: Երբեմն հուսահատ օրերին կրկնում էր քթի տակ, երբեմն սեղանի շուրջ, բաժակը ձեռքին, որպես կենաց, ամենայն ապրվածությամբ արտասանում էր.

*Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,*
*Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք,*
*- Մենք կժպտանք, գո՜հ կժպտանք մեռնելիս,*
*Որ երազում երազեցինք ու անցանք»:*

Դու էլ, սիրելի Շահեն, ամբողջ հոգով վառվեցիր, երազեցիր ու անցար...

# Հրաժեշտ Շահեն Խաչատրյանին

⇨Ա Բացառիկ է Շահեն Խաչատրյանի հավաքչական գործունեությունը: Որքա՜ն արժեքավոր կտավներ է նա հայտնաբերել եւ բերել Հայաստան, որքան գործերով է հարստացրել մեր թանգարանները: Իր «Թանգարանի զինվորը» ազնիվ ու անմիջական գիրքը դա ներկայացնում է մանրամասնորեն:

Շահեն Խաչատրյանի կյանքում մեծ շրջադարձ եղավ իր աշխատանքը «Սարյան» թանգարանում: «Մարտիրոս Սարյան» թանգարանը հիմնադրվեց եւ բացվեց 1967 թվականին: Նույն տարվա սեպտեմբերի 14-ին մեծ նկարիչը նամակ է ուղղում այն ժամանակվա մշակույթի նախարարին՝ խնդրելով նոր ստեղծվող թանգարանի տնօրեն նշանակել պետական պատկերասրահի երիտասարդ աշխատակից Շահեն Խաչատրյանին:

*«Վերջապես գտնվեց թանգարանային աշխատանքի շատ լավ փորձ ունեցող մի երիտասարդ արվեստաբան, որը կարող է ղեկավարել թանգարանը եւ ծավալել իսկական աշխատանք:*

*Դա Շահեն Խաչատրյանն է:*

*Խնդրում եմ Ձեզ նրան թանգարանի դիրեկտոր նշանակել...»:*

Մեծ նկարչի «խնդրում եմ» քաղաքավարի-պահիպատշաճ բառը ուղղակի հավասարազոր էր անառարկելի պահանջի: Այսպես Շահեն Խաչատրյանը դարձավ «Սարյան» թանգարանի տնօրեն: Թանգարանում նա աշխատեց, ես կասեի՝ ծառայեց ինչպես եկեղեցուն ծառայում է ազնիվ վանականը, եւ կատարեց Սարյանի խոսքով ասած՝ «իսկական աշխատանք»: Շահենի համար թանգարանը եղավ հարազատ տուն: Ես յոթ տարի աշխատել եմ «Սարյան» թանգարանում Շահենի հետ կողք-կողքի: Եվ համոզվեցի, որ թանգարանագիտությունը իրոք գիտություն է, թանգարանային աշխատանքը՝ առանձնակի նվիրվածություն ենթադրող ու պահանջող աշխատանք:

Շահեն Խաչատրյանը ավելին եղավ, քան սոսկ թանգարանային աշխատողը: Տարիներ շարունակ նա լվաց թանգարանի ապակիներն ու գործերը, լվաց իր ձեռքերով (թանգարանը դրա համար աշխատող չուներ), մաքրեց ձյունը, ջարդեց ու մաքրեց մուտքի դռան առջեւի սառույցը եւ նման հազար ու մեկ մանր ու մեծ աշխատանք:

Շահեն Խաչատրյանի տնօրինության տարիներին «Մարտիրոս Սարյան» թանգարանը մշակութային կյանքի բացառիկ կենտրոն էր, մշակույթի բարձր ու յուրահատուկ ակումբի պես մի վայր: Մեր գրականության ու մշակույթի նշանավոր մարդկանց համար թանգարանը դարձել էր պարտադիր այցելության վայր: Այստեղ այցելության էին գալիս նաեւ խորհրդային երկրի նույնիսկ ամենահեռավոր վայրերից: Մշակույթի մարդկանց ձգում էր, իհարկե, նախ Սարյանի մեծ արվեստը, բայց եւ թանգարանում գոյություն ունեցող մշակութային ջերմ ու գրավիչ մթնոլորտը: Թանգարանում հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսները, մշակութային հանդիպումները առանձնակի շունչ էին տալիս թանգարանի գործունեությանը: Տարվա ընթացքում շատ հաճախ բոլորս էինք դառնում էքսկուրսավար,- ի՜նչ ֆոնդապահ, ի՜նչ գիտաշխատող,- որովհետեւ այցելուների խմբերը դրսում հերթ էին կանգնած:

Իսկ Մարտիրոս Սարյանի արվեստը առանձին ալբոմներով, կատալոգներով, զանազան այլ հրատարակություններով եւ ցուցահանդեսներով ներկայացնելու, տարածելու եւ ժողովրդին հասցնելու առումով Շահենի թանգարանային գործունեությունը ուղղակի լեգենդական է: Եթե ես փորձեմ մանրամասնաբար ներկայացնել այդ գործունեությունը, պատկառելի եւ շատ ուսուցողական գիրք կդառնա:

Հետո մեր կյանքում վրա հասան խայտառակ ժամանակներ: Ճարպիկներն ու ճարպկորդիները, անարժան ու հարաբերական մարդիկ, զանազան անազնիվ միջոցներով ու եղանակներով արժանավորներին դուրս էին դնում ասպարեզից ու գրավում նրանց տեղը: Դա տեղի էր ունենում ամենուրեք: Շահեն Խաչատրյանին դուրս դրեցին նախ պետական պատկերասրահից եւ ապա «Սարյան» թանգարանից: Ոչ ոք շնորհակալության կես բառ անգամ չասաց, ո՛չ մշակույթի նախարարություն կոչված դուքանը, եւ ո՛չ այլ ոք:

Սիրելի աշխատանքից եւ միջավայրից զրկվելը Շահենի համար եղավ ծանր դրամա: Թանգարանի զինվորը զրկվեց գործունեության ասպարեզից, եւ չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ իր աչքում նույնիսկ առօրյան կորցրեց իր իմաստը: Նա այլեւս շվարած, մոլորյալ, իր ճամփան կորցրած անցորդ էր:

Ճիշտ է, հետագայում նա թանգարանային աշխատանքի հնարավորություն ստացավ Մայր աթոռում: Այստեղ էլ նա շարունակեց իր հավաքչական գործունեությունը,- եւ իր անձնական կապերի եւ իր մարդկային հմայքի շնորհիվ կարճ ժամանակում մեծ թվով արժեքավոր կտավներ ու գործեր հավաքեց, բայց իրենից անկախ պատճառներով «Արշիլ Գորկի» թանգարանը այդպես էլ չկայացավ:

Այդ անհանգիստ մարդը մեկ վայրկյան անգամ հանգիստ չուներ: Կարճ ժամանակում նա հասցրեց դպրոցականների, ուսանողների եւ արվեստասեր լայն հանրության համար «Ճանաչիր եւ սիրիր» ընդհանուր խորագրով հայ կերպարվեստի քսան ալբոմ, քսան հատոր հրատարակել:

Նա ավելին կարող էր անել, բայց վերջին երկու տարում դաժան հիվանդությունը դիպավ նրան: Եվ Շահենը լուռ եւ անտրտունջ տարավ իր խաչը: Եվ, ի վերջո, իր հոգնած մարմինը հանգավ...

Վերջում չեմ կարող երկու բառ չասել մեր ընկերության եւ բարեկամության մասին: Շահենին ինձ ծանոթացրել է Մինասը 1967, թե՞ 1968 թվականին: Մենք միասին աշխատել ենք եւ հետագայում համագործակցել ենք արվեստաբանական մեր աշխատանքներում: Տարիների ընթացքում մեր միջեւ հաստատվել էր անկեղծ ընկերություն եւ ջերմ բարեկամություն: Նա իսկական ընկեր ու բարեկամ էր, միշտ անմնացորդ նվիրված ընկերությանը եւ բարեկամությանը: Մեր ընկերության եւ բարեկամության մանրամասներն ու պատմությունը այլեւս պատկանում են միայն ինձ, եւ եթե Աստված կամենա, մի օր դրանք գրավոր խոսք կդառնան...

Իսկ հիմա հավերժական հանգիստ իմ սիրելի ընկերոջ եւ անկեղծ բարեկամի խոնջացած մարմնին եւ խորին հարգանք իր անբասիր անունին եւ իր պատկառելի գործին:

# Կտավներ՝ ինչպես էքսպրոմտ գրված բանաստեղծություններ

## *Բացվեց Ռաֆայել Ջավախյանի անհատական ցուցահանդեսը*

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Էքսպրոմտը մտքի եւ զգացմունքի անսպասելի, հանկարծահաս, կտրուկ ժայթքումն է, պահի, իրադարձության կամ որեւէ երեւույթի թելադրած մարդկային արարչագործությունը՝ շնորհի անզսպելի հորդումով: Հանկարծաստեղծ, հանկարծագյուտ բարձրարվեստ արարումների հիմքում, սակայն, ընկած են ոչ միայն ստեղծագործողի աստվածատուր շնորհը, մտածումները, ապրումները՝ թվացյալ անջանք ձեւակերպելու, շարադրելու, մարմնացնելու, եղանակավորելու, պատկերելու ունակությունը, այլ նաեւ իր արվեստին տիրապետելու հմտությունն ու վարպետությունը:



**Ռաֆայել Ջավախյանի** անհատական ցուցահանդեսը մի անգամ եւս առիթ տվեց մտորելու հանկարծաստեղծ արարման շուրջ, քանի որ, ինչպես գեղանկարիչն է ընդգծում, իր բոլոր գործերը ստեղծել է առանց նախապատրաստության, շատ արագ՝ բացարձակապես վերանալով իրականությունից, ապրումի գերլարվածությամբ, ասես՝ ամեն անգամ հոգեպես պոկվելով իր իսկ մարմնեղեն էությունից: Հայաստանի Նկարիչների միության ցուցասրահում ներկայացված գործերը հայրենի աշխարհից ոգեշնչումներ են, որոնք վառ-բխուն, խիտ երանգներով ոչ միայն իրականության արտացոլանքն են, այլ երբեմն՝ աբստրահարման աստիճանի ընդհանրականացված գունապատկերներ: Սակայն հարազատ բնաշխարհի, գյուղաշխարհի անկյունները ճանաչելի են, երբեմն էլ այն տպավորությունն ունես, թե ուղղակի կտավին արձանագրում է այն թանկն ու անկրկնելին, որը վտանգված է, որը սիրելու, փայփայանքով պահելու, որը պաշտպանելու կարիքն ունի:

Լոռվա զավակ է Ռաֆայել Ջավախյանը. ոնց պահապան է եղել իր երկրին՝ Արցախյան շարժման ակտիվիստներից լինելով եւ ապա լրացնելով ազատամարտիկների շարքերը, այնպես էլ որդիական նվիրվածությամբ պահպանել է Ալավերդի քաղաքի պատկերասրահի գանձերը՝ համառորեն պայքարելով, որ մշակույթի այս օջախը չփակվի, չփոշիանա: Իր համոզմամբ՝ ցանկացած բնակավայրի դեմքն իր մշակույթն է, իսկ պատկերասրահը կորցնելը նշանակում էր կորցնել այդ յուրահատուկ դիմագիծը: Ու արդեն 35 տարի տնօրինելով Հայաստանի պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղի աշխատանքները՝ նա պահապանն ու մշակն է իրեն վստահված մշակույթի օջախի: Ասում է՝ շատ արվեստագետների է ներկայացրել նրանում, սակայն ինքը հաճախ է ձեռնպահ մնացել սեփական արվեստը ցուցադրելուց: Իր զավակների պնդմամբ է նախաձեռնել երեւանյան ցուցադրությունը, որ իմ գնահատմամբ, իր արվեստի համահավաք պատկերն է: Շրջելով սրահում եւ վայրկյաններ կանգնելով ամեն կտավի առջեւ՝ նա բարձրաձայնում էր այն ապրումները, որոնք ունեցել է այս կամ գործը ստեղծելիս: Ասենք, Արագածի վեհափառ գագաթներն իրեն երեւացել են մշուշված, ցերեկվա ժամին մութն ու լույսն այնպես են իրար հաջորդել, որ թվացել է երեկո է: Կտավին այս ամենի կենդանի արտացոլված է: Եվ դիմել է Աստծուն՝ աղերսելով՝ հնարավորությու՛ն տուր տեսնելու լեռանն իջած լույսը. եւ գագաթների վերեւ երկինքը պարզվել է…

Ալավերդու պատկերաշարերը մեկը մյուսից զանազան են՝ օրվա եւ եղանակների տարբերություններով, դիտակետերի ընտրությամբ, սրանցով պայմանավորված՝ Լոռվա լեռնաշխարհը գունեռանգների լայն սպեկտրով ներկայացնելով: Նույնը՝ գյուղաշխարհի պատկերներում է. անգամ լքված բնակավայրը կենդանի, շնչող գույներով է արված, ու ոչ թե սուգ ու ցավ կա նրանում, այլ՝ գեղեցկություն, գույնի պայծառություն: Ամեն կտավում նշմարվում է սերը, որ բազմազան արտահայտություններ ունի՝ գուներանգների ընտրության եւ զգացմունքների առատության առումով, բնաշխարհի անկրկնելիության ու վեհության ընդգծմամբ, գյուղաշխարհի պայծառ եւ անդրդվելի թվացող խաղաղությամբ…

Ռաֆայել Ջավախյանը նաեւ քանդակագործ է, եւ իր արած՝ փոքր չափի քանդակներից նույնպես ցուցադրված են երեւանյան ցուցասրահում: Իր համար նյութի ընտրությունը եւս պահի թելադրանքով է պայմանավորված: Հոր գլուխը քանդակել է հողից. այդ պահին հողից բերքահավաքով էր զբաղված, ու գաղափարը տվել է հենց հողը: Եվ սրանում ես մեծ խորհուրդ եմ տեսնում: Հողն է հուշում՝ դու՝ հողեղենդ, պահիր եւ սերունդներիդ փոխանցիր այն, ինչ անհիշելի ժամանակներից քեզ ժառանգել են նախնիներդ. այդ հողը քո նախնյաց փոշիացած ոսկերքն են, որ հումուս են դարձել վրան աճող ծառի, ծաղկունքի, պտղի: Արմատներ ձգիր այս հողում, որպեսզի մի օր քո հայ սերունդն ապագա պտղահավաքներին հող դարձած քո մարմինը քանդակեղեն պատկերով ներկայացնի՝ իբրեւ եկող ժամանակների նոր արվեստ…

# Կոնստանտին Պետրոսյանի ստեղծագործական երեկոն Երեւանում

ՌՈՒԲԵՆ ՓԱՇԻՆՅԱՆ





Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ ստեղծագործական երեկո՝ նվիրված հայտնի կոմպոզիտոր **Կոնստանտին Պետրոսյանի** 75 -ամյակին: Տոնական համերգին մասնակցեցին Հայաստանի պետական կամերային նվագախումբը **Հարություն Արզումանյանի** ղեկավարությամբ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի փայտափողային կվինտետը, « Նաիրյան »վոկալ անսամբլը, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատարներ **Մագդա Մկրտչյանը, Ալինա Փահլեւանյանը**, ինչպես նաեւ միջազգային փառատոների եւ մրցույթների դափնեկիրներ՝ թավջութակահար **Արամ Թալալյանը**, շեփորահար **Դանիել Մելքոնյանը**, ֆագոտահար **Նիկոլայ Պողոսյանը**, ջութակահար **Անի Խաչունցը**, բարիտոն **Արտակ Ստեփանյանը**, դաշնակահարներ **Լիլիթ Արտեմյանը, Լեւոն Ջավադյանը**, **Անահիտ Դիլբարյանը** եւ **Լիլիթ Զաքարյանը**: Կատարվեցին կոմպոզիտորի կամերային ստեղծագործությունները, ներկայացվեցին նաեւ նոր ստեղծագործություններ: Ողջույնի խոսքով հանդես եկան Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր **Արամ Սաթյանը**, Հայաստանի հայկական երաժշտական համաժողովի նախագահ, կոմպոզիտոր **Լեւոն Չաուշյանը:** Երեկոյին ներկա էին մշակույթի, արվեստի, գիտության հայտնի գործիչներ, հոգեւորականներ,հասարակության ներկայացուցիչներ:

Կոնստանտին Պետրոսյանի հեղինակային համերգը, անկասկած, նշանակալի իրադարձություն է դարձել Հայաստանի երաժշտական կյանքում: Կոմպոզիտորների միությունը հրատարակել է հատուկ հանդես նվիրված կոմպոզիտորին: Հիշեցնենք, որ Կոնստանտին Պետրոսյանն արդեն մի քանի տարի է, ինչ ապրում ու աշխատում է ԱՄՆ -ում, մեծ աշխատանք կատարելով ի նպաստ հայ արվեստի զարգացմանը եւ տարածմանը: Նա ակտիվորեն մասնակցում եւ օգնում է Կոմպոզիտորների միության եւ Հայաստանի երաժշտական ասամբլեայի նախագծերին: Նա Բոստոնում գործող «Երեւան» հայտնի երգչախմբի եւ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորն է, ելույթներ է ունեցել ՄԱԿ -ում, Կարնեգի Հոլում, Լինքոլն կենտրոնի համերգներում: 80-ականների կեսերին նա մեծ համբավ ձեռք բերեց որպես գործիքային, վոկալ եւ կամերային ստեղծագործությունների հեղինակ:




Կոնստանտին Պետրոսյանը հեղինակն է աշխարհում միակ Կոնցերտի ձայնի եւ ջազ նվագախմբի համար: Նա նաեւ բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է, այդ թվում ՝ սիմֆոնիկ, երգչախմբային, կամերային, գործիքային, վոկալ, որոնցից շատերը հրատարակվել ու կատարվել են աշխարհի տարբեր երկրներում:

Հայ մշակույթի զարգացման գործում ունեցած բացառիկ ավանդի համար Կ. Պետրոսյանը պարգեւատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով, Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ եւ Մեսրոպ» շքանշանով, Կոմիտասի անվան մրցանակով: Նա նաեւ ճանաչվել է Ռոդ Այլենդ նահանգի տարվա մարդը: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտը տպագրել է կոմպոզիտորի կյանքի եւ ստեղծագործության մասին մենագրություն:

Մեզ հետ զրույցում Կոնստանտին Պետրոսյանն ընդգծեց, որ առանձնահատուկ պատիվ ու պատասխանատվություն է իր երաժշտությունը, հատկապես նոր ստեղծագործությունների պրեմիերաները ներկայացնել Հայաստանում: Կոմպոզիտորը ունի ստեղծագործական մեծ ծրագրեր: Մաղթում ենք նրան հաջողություն եւ նորանոր նվաճումներ:

# Շաքե Մակարյան. Օպերա, դաշնամուր եւ իկեբանա՝ Իրանում

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*Իրանական օպերային արվեստի եւ դասական երաժշտության պատմության մեջ իր տեղն ունի երգչուհի (լիրիկական սոպրանո) եւ դաշնակահարուհի* ***Շաքե Մակարյանը****: Ծնվել է 1931 թվականին, Իրանի Քերման քաղաքում, դուստրն է հայ համայնքի գործիչ, Իրանի առաջին արհեստավարժ դիմահարդարուհի* ***Արաքս Մակարյանի*** *(1907-2010): Թեհրանի բարձրագույն երաժշտական դպրոցում ստանալով դաշնակահարի մասնագիտություն՝ 1951 թվականին մեկնել է Իտալիա, ուսանել Հռոմի Սանտա Չեչիլիա կոնսերվատորիայի դաշնամուրի եւ վոկալի բաժիններում: 1957-ին վերադառնալով Իրան՝ Շաքե Մակարյանը դասավանդել է դաշնամուր, որպես երգչուհի հանդես եկել Թեհրանի տարբեր դահլիճներում եւ հեռուստեսիլով, գործուն կերպով մասնակցել համայնքի միջոցառումներին: 1971-ին ավարտել է «Թեհրան» համալսարանի երաժշտագիտության բաժինը: 1973-1978 թթ. եղել է Թեհրանի «Ռուդաքի» համերգասրահի օպերային երգչուհի, մասնակցել մոտ տաս ներկայացումների: Նաեւ պարբերաբար վերադարձել է Իտալիա՝ կատարելագործվելու եւ երգելու: Ելույթներ է ունեցել Իտալիայում, Հունաստանում եւ ԱՄՆ-ում՝ կատարելով օպերային արիաներ եւ հայկական երգեր: Շուրջ 35 տարի Թեհրանում ուսուցանել է դասական վոկալ եւ դաշնամուր:*

Իմ հանդիպումը տեղի ունեցավ երգչուհու եւ նրա քրոջ՝ դաշնակահարուհի Ռուզաննա Մակարյան-Հովհաննիսյանի երեւանյան բնակարանում:

**-Սիրելի՛ տիկին Շաքե, ես մեծ հաճույքով կարդացի ձեր մոր հուշագրությունը՝ «Մոխրացած հուշերը», հրատարակված 1998-ին, Բոստոնում: Այն մեծապես հանձնարարելի գիրք է հայ Սփյուռքով ու իրանահայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:**

-Մայրս՝ Արաքս Մակարյանը, այդ գիրքը գրել է 82-83 տարեկանում, հիշողությամբ է գրել, առանց նոթեր ունենալու: Նա ապրեց 103 տարի եւ վեց ամիս: Այն բանի համար չեմ ասում, որ նա մայրս էր, բայց իրականում նա շատ փայլուն անձնավորություն էր, շատ ուժեղ, գիտեր լեզուներ, հաճախել էր հայկական եւ ֆրանսիական դպրոցներ, մեծապես մասնակցել գեղարվեստական եւ ազգային ձեռնարկների: Հորս մահից հետո նա մենակ գնաց Փարիզ, սովորեց դիմահարդարում եւ Իրանում Փարիզի մասշտաբով դիմահարդարման սալոն բացեց: Առհասարակ, մեր ընտանիքում քիչ չեն եղել ազգային եւ մշակութային գործիչները: Հայրական պապս 19-րդ դարի վերջին Ագուլիսից գաղթել է Պարսկաստան ու հիմնել երկրի երկրորդ հայալեզու թերթը՝ «Աստղ արեւելյան» անունով: Թեհրանի հայ համայնքի կյանքում իր հանրային ու մշակութային գործունեությամբ հայտնի է եղել նաեւ **Սաթենիկ Ասրյանը**՝ մեծ մորաքույրս:

**-Ինչպե՞ս կբնութագրեք օպերային երգչուհի լինելն Իրանում:**

-Սարսափելի դժվար էր: Թատերական սովորական ինտրիգներն անպակաս էին, բայց օպերային բեմն արտակարգ տեղ է, որի վրա մոռանում ես բոլոր այդ դժվարությունները :

**-Իսկ հանրությունն ի՞նչ աչքով էր նայում երգչուհիներին:**

-Նայած ի՛նչ դասակարգի էին, կախում ուներ մարդկանց մակարդակից: Հայերն ավելի շատ էին հետաքրքրված արվեստով, հարգում էին, պարսիկների մեջ էլ այդպիսիք բավականաչափ կային:

**-Ձեզ չե՞ն առաջարկել փոխել ձեր ազգանունը:**

-Ո՛չ, միգուցե այն պատճառով, որ համաշխարհային համբավ չեմ ունեցել: Օրինակ, թագավորի քրոջ ամուսինը, որն Իրանի կրթության նախարար էր, **Լորիս Ճգնավորյանին** առաջարկել է միայն Լորիս անունը գործածել: Այդուհանդերձ, մամուլի մեջ իմ մասին գրելիս առանձնապես չեն շեշտել իմ հայ լինելը, բայց անհրաժեշտության դեպքում հիշել են:

**-Այն թվականներին ընդունվա՞ծ էր, որ իրանցիները դասական արվեստի կրթության մեկնեն Եվրոպա:**





-Այո, շատերն էին գնում: Ես նախապես Իտալիա գնացի՝ քրոջս հետ դաշնակահարության մեջ խորանալու, բայց այնտեղ ձայնս հայտնաբերվեց, ու ես սկսեցի հաճախել վոկալի դասերի: Բախտ եմ ունեցել բեմ բարձրանալ իտալական օպերայի ճանաչված երգիչների հետ: Մի անգամ իմացա, որ իտալացի նշանավոր բարիտոն Ջուզեպպե Տադդեին հանդես է գալու Պուչչինիի «Ջանի Սկիկկի» օպերայում, խնդրեցի, որ փոքր դերերգերից մեկն ինձ տան: Զարմացան, որ նման փոքր դեր եմ խնդրում. ասացի՝ այո՛, Տադդեիի հետ բեմ բարձրանալն ինձ համար պատիվ է, ուզում եմ սովորել նրանից:



*Ռուզաննա Մակարյան-Հովհաննիսյան, Արծվի Բախչինյան եւ Շաքե Մակարյան*

Սանտա Չեչիլիա կոնսերվատորիայում ուսանելուց բացի՝ հաճախել եմ Սիենա քաղաքի ամառային երաժշտական ակադեմիան, նաեւ մասնակցել եմ  Տոսկանայի Բարգա քաղաքի միջազգային փառատոնին, որտեղ մեկ ամիս պատրաստվում էինք ելույթներին: Առաջին ներկայացումը, որին գլխավոր դերերգով մասնակցեցի, Բենջամին Բրիթենի «Եկեք օպերա ստեղծենք» օպերայի բեմադրությունն էր: Փառատոնի վերջին օրը մասնակիցներով գնացինք Բարգայի եկեղեցին՝ հոգեւոր երգեր երգելու: Այնտեղ մի շատ հին, լարից ընկած կլավեսին կար, ամենը սկսեցին Հայդն ու Բախ երգել: Ու քանի որ շատ վատ ակուստիկ էր, ես էլ նվագակցող չունեի, ասացի, որ հայ եկեղեցական երգեր կերգեմ: Նրանք շատ ուրախացան: Ես սկսեցի պտտվել դատարկ եկեղեցում՝ տեսնելու ո՛ր մասի ակուստիկն է լավ ու մեր պատարագի երգերը սկսեցի երգել: Այդ քաղաքում մեզ ճանաչում էին որպես օտարերկրացիներ եւ կուրսերի մասնակիցներ, ուստիեւ հաջորդ օրն ինձ ասում էին՝ ձեր պարսկական հոգեւոր երգերն ի՜նչ հետաքրքրական էին: Ստիպված բոլորին բացատրում էի, որ պարսիկները մահմեդական են, իմ երգածները հայկական են:

**-Ձեր մոր հուշագրքից իմացա, որ Հռոմում հանդիպել եք Արամ Խաչատրյանին:**

-1960-ականներին **Արամ Խաչատրյանը** մի շատ հրաշալի համերգ ունեցավ Վատիկանի գլխավոր համերգասրահում: Շատ զարմանալի էր տեսնել, որ Իտալիայի տարբեր քաղաքների հայությունը եկել էր այդ համերգին: Հայերս հավաքվեցինք մի սրճարանում՝ Խաչատրյանի հետ հանդիպման, ինձ ասացին, որ ապահովության համար նոտաներս վերցնեմ: Եվ երգելու առիթ եղավ, կատարեցի Կոմիտասի «Գարուն ա» երգը, իսկ **Նինա Մակարովան**՝ Խաչատրյանի կինը, նվագակցեց ինձ: Խաչատրյանն ինձ հարցրեց՝ ո՞րտեղ ես սովորել երգել: «Նախ Իրանում, հետո՝ Հռոմում»,- պատասխանեցի: «Մի՞թե Իրանում դուք կոնսերվատորիա ունեք»,- զարմացավ Խաչատրյանը: «Ունե՛նք»: «Մի՞թե համերգասրահ, սիմֆոնիկ նվագախումբ ունեք»,- նորից հարցրեց Խաչատրյանը: «Ունենք, մեզ մոտ ձեր դաշնամուրի կոնցերտը նվագել է **Ռաֆֆի Պետրոսյանը, Ռուբեն Գրիգորյանն** էլ ղեկավարել է: Բայց, ներողություն, վարպե՛տ, ինչո՞ւ եք զարմանում»: Արամ Խաչատրյանն ասաց. «Մոսկվայում մի անգամ հանդիպել եմ Իրանի շահի մի գեներալի հետ, որն ինձ ասաց՝ ափսոս, մենք համերգասրահ ու նվագախումբ չունենք, այլապես ձեզ կհրավիրեինք: Հիմա ես չգիտեմ ո՞ւմ հավատամ»: Ես էլ ասացի. «Կապ ունի քաղաքականության հետ»: Այդ խոսքիս վրա Արամ Խաչատրյանն ասաց. «Գնա տե՛ղդ նստի, ա՛խչի» (ծիծաղում է):

**-Իսկապես, հիմա էլ շատերը դժվարությամբ են հավատում, որ անցած դարի կեսին Թեհրանն ունեցել է եվրոպական դասական արվեստի կենտրոններ: Իրանի օպերայի թատրոնի պատմությունը գրվե՞լ է:**

-Կասկածում եմ: Շատ քչերի մոտ է ինչ-որ բան պահպանվել, քանի որ իսլամական հեղափոխությունից հետո մեր ձայնագրությունները, լուսանկարները ոչնչացրին: Հիմա որոշ երիտասարդներ հետաքրքրվում են, դռնեդուռ ընկած սկսել են ներկայացումների աֆիշներ, ծրագրեր եւ նկարներ հավաքել: Երեւի թանգարանի պես մի բան են ուզում ստեղծել: Ի դեպ, տարբեր ժամանակներում Իրանի օպերայում երգել են **Մարիցա Սանոսյանը, Հակինթ Վարդանյանը, Հիլա Ղարախանյանը, Ալենուշ Մելքոնյանը, Սարգիս Ղուկասյանը, Ռուբեն Աղաբեկյանը**՝ հորաքրոջս որդին, **Վահե Ադամյանը**: Իսկ առհասարակ գրելու շատ հետաքրքրական բաներ կան: Թեհրանի «Ռուդաքի» համերգասրահում օպերաներ են ներկայացվել ինչպես բնագրերի լեզվով՝ իտալերեն, չեխերեն, այնպես էլ երբեմն՝ պարսկերեն թարգմանությամբ: Ի դեպ, Սմետանայի՝ չեխերենով ներկայացված «Վաճառված հարսնացուն» օպերայում էլ կատարել եմ իմ ամենասիրած դերը: Երբեմն Իրանի հեռուստեսիլը նկարահանում էր օպերային բեմադրություններ, օրինակ՝ «Մադամ Բաթերֆլայը», որտեղ ես կատարել եմ Սուձուկիի դերը: Պարսիկ երգահաններն էլ գրել են օպերաներ, Դավիդ անունով մի ավստրիացի գրել էր պարսկերեն մի օպերա:

Ամենակարեւոր բանն այն էր, որ «Թեհրան» համալսարանում երաժշտագիտության գծով իմ թեզը ես պարսկերեն գրեցի Կոմիտասի մասին: Առաջին անգամ էր, որ այդ լեզվով թեզ գրվեց Կոմիտասի մասին: Առանձին գրքով հրատարակվեց մի 10-15 տարի առաջ. օրինակներ բերել եմ Երեւան, հանձնել եմ կոնսերվատորիայի գրադարանին, որպեսզի օգտվեն պարսիկ ուսանողները:

**-1978-ից հետո միայն դաշնամուր դասավանդեցիք...**

-Այո, չնայած համայնքում հազվադեպ համերգներ էին լինում: Գործունեությանս ամենալավ ժամանակ հեռացա բեմից, քանի որ երբեք չեմ սիրել, երբ ծերացած երգիչ-երգչուհիները բեմ են դուրս եկել, ժողովուրդն էլ ասել է՝ նրան պիտի ջահել ժամանա՜կ տեսնեիք...

**-Իսկ ինչպե՞ս մտերմացաք Շառլ Ազնավուրի ընտանիքի հետ:**

-Մայրս Փարիզ եղած ժամանակ ծանոթացել է մի հայ ընտանիքի հետ, որը շատ մտերիմ է եղել Շառլի մոր՝ **Քնարի** եւ քրոջ՝ **Աիդայի** հետ: Այդ ընտանիքն էլ մորս ծանոթացրել է Ազնավուրյանների հետ: Նրանք մի տարի մորս ու քրոջս՝ Ռուզանին, հրավիրել են Ֆրանսիայի հարավում գտնվող իրենց տունը: Ազնավուրի հայրը լավ երգում ու թառ էր նվագում, ու քանի որ մայրս նույնպես լավ էր երգում, մի անգամ երգի մրցում են կազմակերպել: Այդ ամառանոցում շատ հյուրեր են եղել, ամեն օր 30-40 հոգով են ճաշի նստել: Մի անգամ **Շառլը**, մայրս եւ Ռուզանը սեղանի շուրջ հայերեն են խոսել, ներկա գտնվող մի ֆրանսուհի ասել է. «Այսպես ճիշտ չէ, մի լեզվով եք խոսում, որը մենք չենք հասկանում»: Շառլն ասել է. «Սա հայի տուն է, մենք մեր տանը մեր մայրենի լեզվով ենք խոսում»:

Շառլը երբ Թեհրան եկավ, ամեն օր հանդիպում էինք: Նա շատ պարզ բնավորություն ուներ, առանց ավելորդ հովերի: Մի անգամ Շառլն ասաց, որ գնում է իր պատվին կազմակերպված կոկտեյլի մի շատ հարուստ հայ ընտանիքի ամառանոցում, որ գտնվում է Թեհրանի հայաբնակ Վանաք շրջանում: Գնաց, բայց 15 րոպեից հետ եկավ մեզ մոտ ու ասաց. «Ամենքն ուզում էին իրենց ունեցվածքն ինձ ցույց տալ, ես այնտեղ անելիք չունեմ...»:

**-Հայաստան հաճախ եք գալիս, այստեղ հանդես եկե՞լ եք մշակութային գործերով:**

-Մեկ բան հիշեմ: Ժամանակին Հայաստանում միշտ կար իտալական օպերաները երգել ռուսական առոգանությամբ: Մոտ 15 տարի առաջ մի անգամ այդ առթիվ մտահոգությունս հայտնեցի Հայաստանում Իտալիայի դեսպանատան մշակութային կցորդին: Նրա կնոջ՝ սինյորա **Նուչելլոյի** հետ գնացինք կոնսերվատորիա եւ ղեկավարությանն ասացինք, որ պատրաստ ենք իտալերենի ճիշտ առոգանության վարպետության դասեր տալ՝ անվճար: Վեց շաբաթ երկուսով դասավանդեցինք, բայց ո՛չ դասախոսները, ո՛չ ուսանողները շատ չոգեւորվեցին, բոլորը կարծում էին՝ իրենք ամեն ինչ գիտեն: Վերջում մի տարրական շնորհակալության էլ չարժանացանք:

**-Բացի երգից եւ դաշնամուրից՝ դուք գեղեցիկի մեկ այլ բնագավառում էլ եք հանդես եկել...**

-Իկեբա՛նան: Ճապոնիայում մի պարուհի մասնագիտացել էր իկեբանայի Սոգեցու դպրոցի մեջ ու վերադառնալով Թեհրան՝ դասընթացներ կազմակերպեց: Ութ-տաս տարի է տեւում այդ դասընթացը, բոլորը զարմանում են, որ ծաղիկն ու ճյուղը ծաղկամանի մեջ դնելը կարող է այդքան ժամանակ պահանջել: Ես մասնագիտացա ոչ միայն իկեբանայի մեջ, այլեւ արժանացա իկեբանայի դասավանդման բարձր տիտղոսի՝ դառնալով այդ կարգը ստացած առաջին հայուհին:

**-Շնորհակալությո՛ւն, տիկին Շաքե, հետաքրքրական զրույցի համար: Հուսով եմ, որ մի օր ձեր գործունեությունն ըստ արժանվույն կգնահատվի Իրանում:**

-Այո՛, արդեն գնահատում են: Հինգ տարի առաջ Իրանի Կրթության նախարարության եւ երաժշտության տան նախաձեռնությամբ տեղի ունեցավ դասական վեց հայտնի երգչուհիների, նաեւ իմ մեծարման երեկոն: Մեզ արժանացրին շքանշանների: Այդ վեցի մեջ մի ուրիշ հայ էլ կար՝ երգչուհի **Շաքե Հարությունյանը**...

-Կարծում եմ՝ հուսադրող է, որ մի երկրում, որտեղ կինն իրավունք չունի բեմ բարձրանալ, այսօր մեծարում են երգչուհիներին: Մաղթեմ, որ ավելի հաճախ լինեք հայրենիքում եւ առողջ հասնեք ձեր երջանկահիշատակ մոր տարիքին...

# «Նարատիվ» վիճակ

⇨1

Բայց ինչ եմ ասում՝ սա նորմալ խորհրդարանական երկրի դեպքում է, իսկ մերը ո՛չ նորմալ երկիր է, ո՛չ նորմալ խորհրդարան՝ մշտական դարձած հոլիվուդյան տեսարաններով, իրար արժանի իշխող եւ ընդդիմադիր պատգամավորներով, որտեղ մի քանի՝ անցած ճանապարհ եւ փորձառություն ունեցող պատգամավորների ողջամտությունը բոլորովին չի դառնում որակ եւ ձեռագիր, իսկ ԱԺ փոխխոսնակն էլ հրահրում է անվտանգության աշխատակիցների մասնակցությամբ կինոտեսարաններ:

**Ալիեւն** ու **Էրդողանը** երազում եւ հարթմնի միավորում են Թուրքիան եւ Ադրբեջանը՝ իրենց երազած Զանգեզուրի միջանցքը բաղձալով, **Պուտինը** Վալդայ ակումբում խոսում է խորհրդային քարտեզներով հայ-ադրբեջանական անխուսափելի սահմանազատման ու սահմանագծման մասին, արտահոսք է կազմակերպվում (իշխանությանը հարող լրատվամիջոցներում՝ նկատի ունեցեք), թե նոյեմբերի 9-ին **Փաշինյանն** ու Ալիեւը հանդիպելու եւ երկու թուղթ են ստորագրելու, ու գնում է քննարկումը, որ չարաբաստիկ հայտարարության մեկամյա տարելիցի օրը իբր ստորագրվելիք երկու համաձայնագրերը մեր դեպքում վերջնական կապիտուլյացիոն թղթեր են լինելու: Ու այս ֆոնին խորհրդարանը դեռ չի համարձակվում այս բոլորին դիմակայող հայտարարություն ընդունել, այլ այդ հայտարարության գլխավոր խաղափորձն է կազմակերպում միայն: Ի՞նչ են այս բոլորը, արդյոք մեր դիմադրական իմունիտետը ստուգելու փորձե՞ր, և՛ դրսից, և՛ ներսից, հասկանալու համար դեմ տա՞ն մեզ վերջնական կապիտուլյացիոն փաստաթղթեր հենց 44-օրյա պատերազմի տարելիցին կամ դրան մոտիկ, թե՞ դեռ մեր վերքը շատ է ցավում, ու դեռ ոտքի կանգնելու կարողություն ունենք...

Իսկ մենք մի հայտարարություն անգամ չենք կարողանում ընդունել խորհրդարանում, քանի որ և՛ իշխանությունը, և՛ ընդդիմությունը ամբիցիաների ավելցուկ ունեն եւ հանուն պետության, հանուն մեր զավթված սահմանային կետերի, հանուն ռազմագերիների, որոնց մեջ, ի դեպ, կանայք կան՝ հիշեցնեմ տաքուկ նստած մեր ղեկավարներին, չեն կարողանում հայտարարության տեքստի ինչ- որ դրույթներ զիջել իրար, կամ միասին նստել-աշխատել հանուն այս բոլորի:

Անկախ նրանից, թե ո՛ր ուժն էր խորհրդարան բերել այդ հայտարարությունը (ընդդիմադիր երկու խմբակցությունների նախաձեռնությունն էր), այն շատ անհրաժեշտ կլիներ պետությանն այս պահին: Ճիշտ է, վարչապետն էլ, ԱԳ նախարարն էլ այս պահին ժխտեցին, թե նոյեմբերի 9-ին ինչ-որ հանդիպման, թե համաձայնագրերի ստորագրման պայմանավորվածության առկայությունը, բայց եւ չժխտեցին, որ բանակցությունների արդյունքում առաջիկայում կարող են ձեւավորել այն փաստաթղթերը, որոնք կդրվեն սեղանին, վարչապետն էլ հաստատեց, որ խորհրդային քարտեզներով սահմանագծումն ու սահմանազատումը տարածաշրջանի երկարատեւ խաղաղության երաշխիքն են, նրա ականջին հավանաբար չի հասնում, թե ինչ է ասում Էրդողանը Վարանդայում, երբ միջանցքով Հայաստանի վրայով ուզում է միավորել Թուրքիան եւ Ադրբեջանը: Փաշինյանն անվերջ մեջ է բերում 2010 թվականին Հայաստանի խորհրդարանի՝ վարչատարածքային բաժանման օրենքից, ու չի ասում, որ նախկինների ընդունած այդ օրենքն ընդունելի չէ, ինքը կամ իր ղեկավարած քաղաքական ուժը պատրաստվում են փոխել այդ վատ օրենքը. է, եթե այդ օրենքն է խանգարում ձեզ, փոխեք, էլի, թե այդ օրենքը հենց օգնո՞ւմ է ձեզ:

Մի փոքր մանրամասնելով ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների՝ խորհրդարանի քննարկմանը չգիտենք ինքնուրույն, թե՞ նաեւ իշխանական շրջանակների դրդմամբ (քանի որ դերաբաժանում, այնուամենայնիվ, կա) դրած «Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծված վիճակի վերաբերյալ» հայտարարության նախագծից, առանձնացնենք մի քանի դրույթ, ցույց տալու համար, թե որքան կարեւոր էր այս պահին այդպիսի հայտարարության ընդունումը՝ անկախ «նարատիվից», անկախ նրանից, որ մեծամասնությանը չէին հրավիրել մասնակցելու այդ նախագծի պատրաստմանը, եւ նախագիծը կոնսենսուսային տարբերակ չէր մեծամասնության համար, ներքաղաքական բովանդակության դրույթները հանել իրենց չէր հաջողվել, իսկ դրա հիմնական դրույթների ուղղությամբ էլ ամեն օր աշխատում են:

Ընդդիմությունն էլ իր մեջ ուժ չգտավ մեկ-երկու բառ փոխելով՝ ներքաղաքական «նարատիվ» անվանվածը ուղղակի սահմանադրական ձեւակերպման մերկ տարբերակով մատուցել: Հասկանո՞ւմ եք՝ երկրի անվտանգության առումով կարեւոր նախագիծը, եթե մեծամասնությունը ձեւ չի անում եւ իրոք մտադրություն ունի երբեւէ այդպիսի հայտարարություն ունենալ ձեռքի տակ՝ որպես արտաքին ճնշումներին դիմակայող գործիքակազմի բաղադրիչ, չընդունվեց փոխադարձ անզիջումության պատճառով: Վերջապես խորհրդարանականների ընդդիմադիր հատվածը համարձակվել էր այսպիսի նախագիծ բերել, չէ՞ որ ընդդիմությունը երբեք նոյեմբերի 9-ի հայտարարությունը կասկածի տակ դնող նախագիծ չի բերել խորհրդարան, ինչպես , ի դեպ, վարչապետ Փաշինյանն էլ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ դա ընդդիմության երեսով տվեց: Ի դեպ՝ այս մեկ հայտարարության ընդունմանը հասնելն ավելի կարեւոր նախաձեռնություն կլիներ ընդդիմության համար, քան նորից վերսկսած փողոցային պայքարը հոկտեմբերի 30-ի հանրահավաքով, որը չենք կարծում, թե հաջողություն կունենա՝ դրա համար հանրային պատրաստակամության նախապայման առկա չէ:

Նախագծի մի քանի դրույթ առանձնացնենք, հուսալով, որ միգուցե հայտարարության ավելի կոնսենսուսային տարբերակ կրկին խորհրդարան բերվի, այս պահին հարկավոր հենց Հայաստանի պառլամենտի տեսակետը որպես զսպաշապիկ առկա դարձնելով:

Նախագծում ձեւակերպված է Ադրբեջանի եւ Թուրքիայի՝ Արցախի հանրապետության դեմ լայնամասշտաբ զինված ագրեսիայի դատապարտումը, Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններից հետո գերեվարման, պատանդառման եւ այլ հանցագործությունների արձանագրումը եւ բուն Արցախի տարածքի բռնազավթումը, ներխուժումը ՀՀ ինքնիշխան տարածք՝ սպառնալիքների ամենօրյա գործադրմամբ, Ադրբեջանի՝ պատերազմի հռետորաբանությունն եւ միջազգային հանրության մոլորեցումը, այս բոլորը շարունակվում է ՀՀ-ի եւ Արցախի տարածքների նկատմամբ ադրբեջանական հավակնություններով: Երկու դրույթ ամբողջությամբ մեջբերենք, որպես ելակետային.

*-Սահմանների որոշումը սահմանակից պետությունների բացառիկ իրավասության ոլորտն է, սահմանները որոշվում են սահմանակից պետությունների միջեւ միջազգային իրավունքի վրա հիմնված համաձայնության միջոցով՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969թ. Վիեննայի կոնվենցիայի համաձայն, ըստ որի, ի թիվս այլ դեպքերի, առ ոչինչ է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով ցանկացած միջազգային համաձայնություն:.*

-Արցախի ժողովրդի՝ իր պատմական տարածքում ինքնորոշման իրավունքի երաշխավորված իրացումը եւ Արցախի բռնազավթված տարածքների դեօկուպացիան տարածաշրջանում խաղաղության հաստատման գլխավոր նախապայմանն է՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահության ձեւաչափով:

Այս երկու դրույթից հետո հիշեցվում է ՀՀ Սահմանադրությունն, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են բացառապես հանրաքվեի միջոցով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսի 8-ի որոշմամբ, որով.

*ա) Հայաստանի Հանրապետությունը հետեւողականորեն սատար է կանգնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը եւ նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:*

բ) Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

Այս արձանագրումներին հետեւում է եզրակացություն, որ

*ա) Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետությանը ապօրինի բռնակցված Արցախը չի կարող ընդգրկվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում,*

բ) Հայաստանի Հանրապետությունը չունի որեւէ միջազգային-իրավական պարտավորություն՝ հիմք ընդունելու որեւէ քարտեզով արձանագրված սահմանները,

գ) Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ներկայացնող որեւէ անձ, այդ թվում՝ գործադիր իշխանության ղեկավարը կամ այլ ներկայացուցիչը, չի կարող գրավոր կամ բանավոր համաձայնության գալ՝ խախտելով Արցախի Հանրապետությանը եւ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող վերը նշված իրավական նորմերը: Այդպիսի ցանկացած համաձայնություն ի սկզբանե առ ոչինչ է:

Եւ նախագծով կա պահանջ Հայաստանի կառավարությանը՝ զերծ մնալ որեւէ բանակցությունից, գրավոր կամ բանավոր համաձայնություններից, որոնք կխախտեն ՀՀ Սահմանադրության պահանջներն ու հայ ժողովրդի հավաքական կամքը՝ արտահայտված Անկախության հռչակագրով, որին հետեւում են հարակից մի շարք այլ պահանջներ:

Իշխանական մեծամասնությունը ընդդիմադիր « նարատիվ» համարում է սահմանադրական դրույթի այս կերպ ձեւակերպումը, թե ՀՀ-ն պաշտոնապես ներկայացնող որեւէ անձ, այդ թվում՝ գործադիր իշխանության ղեկավարը կամ այլ ներկայացուցիչը, չի կարող գրավոր կամ բանավոր համաձայնության գալ՝ խախտելով Արցախի Հանրապետությանը եւ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող վերը նշված իրավական նորմերը: Չնայած սա սահմանադրական նորմի ուղղակի վերախմբագրում է, չենք կարծում, որ հանուն հայտարարության ընդունման ընդդիմությունը հենց տեղում չէր կարող հրաժարվել այս ձեւակերպումից, որովհետեւ վերը նշվածները հենց սա էլ նշանակում են:

Սա շատ կարեւոր հայտարարություն կլիներ, որ Վալդայներում մեկ մարդ չկարողանար անառարկելի տոնով խոսել այլ պետության սահմանազատումից, որպես պարտադիր իրողություն, եւ նույն տրամադրվածություն ունեցող վարչապետն էլ նույն անառարկելի տոնով չխոսեր խորհրդային քարտեզներով սահմանազատման ընդունելիությունից: Մնացյալն աղմուկ է, ինչպես խորհրդարանում ամեն բան: Ներառյալ այն, որ ընդդիմության հնաբնակներից **Արմեն Ռուստամյանի** եւ **Արծվիկ Մինասյանի**՝ Հայաստանի եւ Արցախի շուրջ իրավիճակը քննարկելու խոսքին ի պատասխան վարչապետի՝ երկխոսության հրավերն ընդդիմությանը, եւ անմիջապես դրան հետեւած ընդդիմադիր երկու խմբակցությունների պաշտոնական հայտարարությունները, թե Փաշինյանի հետ մեկ հարց կա քննարկելու՝ նրա հրաժարականը: Ի դեպ, անկախ ընդդիմության ցանկությունից, այդ մեկ հնարավորությունը միշտ էլ կա՝ եթե Հայաստանին առաջարկվի եւ պարտադրվի այն աստիճան անընդունելի փաստաթղթեր, կառավարության ղեկավարի միակ անելիքը հրաժարականը պետք է լինի:

Իհարկե, խորհրդարանը շատ կարեւոր օրենքներ էլ քննարկեց, ընդդիմությունը ստեղծեց «Հայաստան» հիմնադրամի ծախսերը, հատկապես Հայաստանի բյուջե փոխանցումները քննող հանձնաժողով, կառավարության նախաձեռնությամբ փոխեց տոնացույցի տրամաբանությունը՝ ոչ աշխատանքային թողնելով միայն դեկտեմբերի 31-ը, հունվարի 1-ն ու հունվարի 6-ը, իսկ հայերիս սիրած՝ նորտարյա փոխայցելությունների օրերը խլելով եւ հանրային հոգեբանությունը բիզնես հոգեբանությանը ենթարկեցնելով, եւ այլ խիստ կարեւոր օրենքներ:

**) Անգլերեն՝ narrative, այստեղ՝ «պատմողական»:*

# Լավաշը մանր-մանր, սխտորը բարակ-բարակ

Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ո՛չ սցենարն է փոխվում, ո՛չ՝ բառապաշարը: Իշխանականներն ու ընդդիմադիրները միմյանց կծմծելուց հետո հանդարտվում ու հանգիստ նստում են իրենց տեղերում: Տպավորություն է, թե վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** մոտ ընդդիմադիրներն առավել ընդդիմադիր, իշխանականները՝ առավել փաշինյանական երեւալու խնդիր ունեն: Խորհրդարանական ընդդիմությունը, որ խոստանում էր իշխանությանն օր ու արեւ չտալ, քննադատում էր նախկին ընդդիմությանը՝ ԲՀԿ-ին ու ԼՀԿ-ին, որ վարչապետին «պարոն Փաշինյանով» են դիմում ու նրա հետ նույն օդը շնչում, այժմ ոչ միայն նույն դահլիճում են գտնվում, այլեւ համաձայնում նրա հետ խաշ ուտել: «Հայաստան» խմբակցության պատգամավոր, դաշնակցական **Արմեն Ռուստամյանը** կուտակված բոլոր հարցերը տետատետ քննարկելու համար առաջարկում է փակ հանդիպում կազմակերպել ու, երեւի թե, «ջան ասել ու ջան լսել»: «Խաշ ա հասունանում»,- Փաշինյանի՝ հանգիստ նստել, խոսելու առաջարկը տնավարի զրույցով է համեմում Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանը**: Խորհրդարանականները, որ օրենսդիրում կարեւորագույն նախագծեր պետք է քննարկեն, երկրի համար ճակատագրական հարցեր որոշեն, իրավական ու քաղաքական տարբեր հարցի շուրջ թունդ, հաճախ առճակատող վեճեր ու դեբատներ ունենան, պարզվում է՝ ուտել-խմելով հարցերը տեղը գցելու կողմնակիցն են: Մինչեւ պատգամավորները որոշում են փոխադարձ կսմթոցները խաշով համեմել, հակառակորդ երկրները «Զանգեզուրի միջանցքի» շինարարության մեկնարկն են ազդարարում: Ենթադրել կարելի է, որ թե՛ Ալիեւը, թե՛ Էրդողանն ավանդական ու համեղ խոհանոցի սիրահարներ են, ուղղակի ի տարբերություն մեզ՝ նրանք իրենց դարավոր երազանքը գործուն քայլերով են կյանքի կոչում: Դրան զուգահեռ իրականությունում երկրիս ազգընտիրները, ցավից ու դավից անտեղյակ, միտք են անում ՝ երբ ու ինչպես խաշի սեղանի շուրջ մերձեցման ցերեկույթ կազմակերպել:

**Հ.Գ.** Լավաշը մանր-մանր, սխտորը բարակ-բարակ կկտրտեք:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Մերն ուրի՞շ է

ՀՀ քաղաքացու շրջապատում կան շատ անձինք, ովքեր յուրաքանչյուր հինգշաբթի որոշակի անհամբերությամբ ու նաեւ համբերությամբ դիտում են հեռուստատեսությամբ հեռարձակվող ՀՀ կառավարության նիստերը: Դե, վարչապետի բնորոշմամբ իրենց իշխանության նիստերն են, մեր մարդկանցից թաքցնելու ոչինչ չունեն, ամեն ինչ բաց է հանրության համար: Բայց արի ու տես, որ օրակարգում ընդգրկված 40-50 հարցերից հազիվ 2-3-ն ընթացող նիստերում ներկայացվում ու քննարկվում, երբ ահռելի թվով նախագծեր «չզեկուցվող հարցեր» ձեւակերպմամբ պարզապես փաթեթով են ընդունվում: Ավաղ, դրանց մեջ թեմաներ են լինում, որոնք հանրության որոշակի հատվածի մոտ տարակուսանք են առաջացնում, կապ չունի դիմադիր թե ընդդիմադիր, իշխանամետ թե այպես ասած՝ ձվի մեջ մազ փնտրող: Ինչ-որ ակնկալիքների տրված քաղաքացիները, թող իշխանությունները փարատեն դիտարկումս, հատկապես վերջին նիստերը դիտելուց հետո որոշակիից մինչեւ հիմնավոր տրամադրության անկում են ունենում, որն ավարտվում է «սրա համա՞ր են այսքան մարդիկ հավաքվում» խոսքերով: Մարդիկ ասվածը մարզպետներ են, կոմիտեների ու տեսչական մարմինների պետեր, իրավապահ կառույցների շեֆեր, գումարած կառավարության աշխատակազմի պատասխանատուներ ու իհարկե նախարարները: Կարելի է անվարան նշել, որ հինգշաբթի օրերի նախակեսօրյա ճանապարհային գերխցանումները նաեւ այս վիճակի հետեւանք են:

Սակայն ուր է թե հայաստանյան հանրության մտահոգությունները ավարտվեին այսքանով, մարդիկ իրենց առօրյայում գոնե նվազագույն փոփոխություններ զգային, քանզի նրանցից հարյուր հազարավորները որեւէ ձեւով չեն առնչվում ամեն օր բարձրաձայնվող ասֆալտապատման հետ, առնչվողներից էլ շատերը հիշում են իրենց ընտանիքների առաջնահերթությունները՝ անվտանգային հարցերից ոչ պակաս կարեւոր պարենային ապահովությունն ու պարենանվտանգությունը: Այստեղ է, որ առնչվում ենք ՀՀ կառավարության գործունեության ու նրա նիստերում ներկայացվող խնդիրներին: Ավաղ, լավատեսության նախանշանները այնքան են աննկատ, որ դրանք ի չիք են դառնում առօրյայում հանդիպող յուրաքանչյուր գործընթացի առաջին իսկ պահին:

Ասենք՝ խոսվում է գյուղատնտեսական ոլորտի հանդեպ ցուցաբերվող պետական հոգածությունից, որի արդյունքում տարօրինակորեն ՀՀ-ում արտադրվող հազիվ մի քանի մշակաբույսերի գներն են բարձրանում: Օրերս մի զավեշտ հիշեցնող զրույցի ունկնդիր դարձա: Միջին տարիքի տիկինը ավտոտնակում առեւտուր կազմակերպող երիտասարդից տեղեկանալով քիշմիշ տեսակի խաղողի գինը, տեղնուտեղն արձանագրեց, այդ գումարով երկու կիլոգրամ բրազիլական հավի ազդր կգնեմ: Երիտասարդին ոչինչ չէր մնում, բացի համաձայնվելը, քանզի ինքը ոչ խաղողի գինն էր որոշողը, ոչ էլ... բրազիլական խոր սառեցված հավի մսի առանձին մասերի, որոնք ՀՀ առեւտրային ցանցում վաճառվում են 600-700 դրամով, երբ հարեւանությամբ դրված տեղական նույն ազդրը 1600-1800 դրամ է: Հիմա հարցնեմ. երբեւէ լսած կա՞ք ՀՀ վարչապետից, իր 2 տեղակալներից, տնտեսության համար մասամբ թե հիմնականում պատասխանատու որեւէ բարձրաստիճան պաշտոնյայից գոնե որեւէ ակնարկ, պահանջ, մտահոգություն այս առումով: Վստահ եմ՝ ինչպես ՀՀ քաղաքացիներից մեկը, այնպես էլ ձեզնից յուրաքանչյուրը երբեւէ չի լսել այս մասին: Իսկ ահա մի քանի տասնյակ հեկտար արոտավայրերի ցավալի կորստի մասին յուրատեսակ «անհանգստությունների» պակաս նրանց մոտ չկա, երբ ՀՀ տարածքում արոտավայրերն ամբողջ 700.000 հեկտար են, խոտհարքները՝ 140.000 հեկտար: Վերջինից հավաքվողը ՀՀ տնտեսության պատասխանատուների համար անասնակեր է կոչվում, չափի միավորը՝ տուկ:

Փորձեցի անասնակերերի վերաբերյալ հիմնարար ուսումնասիրություններ կատարած գյուղատնտեսական գիտությունների դոկտոր **Լեւոն Վարդեւանյանի** գրքերում այս առումներով որեւէ տվյալ գտնել, ոչինչ չստացվեց: «Հայոց լեզվի հոմանիշների բառարան» ակադեմիական հրատարակությունում **տուկ** բառի դիմաց նշված էր՝ տես **իլիկ**: Բացում ենք **իլիկ**-ը՝ նշված է **թեղիկ**, ապա՝ տես **ողնաշար**: Ոչ մի ակնարկ անասնակերի առումով, որը բազմակի անգամներ բարձրաձայնվում է ՀՀ կառավարության նիստերում: Եվ հարցը, թե ինչու են ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները խոսում մի բանից, որն իրենց իրավասությունների շրջանակում չէ, մոգոնված ինչ-որ արտահայտություն է հնչում է ինքնաբերաբար: Այսօրինակ պարագայում ի՞նչպես վստահել նրանց այլ հավաստիացումներին, թե երկրում առաջնահերթ խնդիրներ են լուծվում, համաշխարհային հսկաների ներդրումային ծրագրեր են նախապատրաստվում, այս ու այն ոլորտներում աշխարհի կենտրոններ ենք դառնալու...

Ի դեպ. թե ինչ էներգետիկ արժեք է պարունակում այդ տուկ ասվածը՝ պարզ չէ, երբ ըստ արդեն հիշյալ գիտնականի 3 կգ լիարժեք կերը 1 կգ քաշաճ է երաշխավորում: Տարիներն անցնում են, երբ ամենուր իրականացված աղբի վերամշակման գեթ մեկ միջին հզորության գործարան չունենք, առաջին անհրաժեշտության օճառից ու լվացքի փոշուց մինչեւ զուգարանաթուղթ ու թաց անձեռոցիկ մեծամասամբ ներմուծում ենք, հետն էլ ԱՊՀ երկրներին հրավիրում ՀՀ-ում գործարար միջավայր կազմավորել: Տպավորություն է ստեղծվում, թե միայն իրենք, իշխանությունները գիտեն ինչ ու ինչպես անել, ում հետ հարաբերվել եւ ումից հեռու մնալ: Կարծես համաշխարհային գործընթացները Հայաստան երկրին հատուկ չեն, մերն ուրիշ է: Տարօրինակ է, եթե ցավալի չասենք:

Տեսեք, հանրահայտ է, որ գյուղատնտեսությունն ամենուր ոչ միայն ռիսկային է, այլեւ պակաս արդյունավետ, պետություններ կան, որոնց համաշխարհային տնտեսագիտական միտքը բանանային ու սրճային է որակում: Այս պայմաններում ի՞նչ է անում ՀՀ տնտեսվարական միտքը, որքանով որ այն կա: Երկիրը պարբերաբար ու համառորեն կողմնորոշում է դեպի բաց դաշտավարություն, ծիրանախաղողային ու լոլիկա-վարունգային ոլորտները, ՀՀ տարածքը դարձնելով այլոց այգեգործա-բանջարանոցային կցորդ, երբ առաջնահերթ կաթնա-մսային հումքը հիմնականում ներմուծվում է. հիշենք, որ երկրում արտադրվող ողջ երշիկեղենը խոր սառեցված ներմուծված մսատեսակներից է, իսկ կաթնեղենը պիտակավորվում է որպես... պանրային մթերք: ՀՀ իշխանությունն այստեղ խնդիր չի տեսնում, չկա պատկերացում, թե երբ երկրի գյուղոլորտում ընդգրկվածների ցուցանիշը 35 տոկոսից կիջնի 15, 10, 7. 4 տեկոսի, երբ Արարատյան դաշտի բարեբեր հողերը լիարժեք կօգտագործվեն 8-10 մլն հայաստանաբնակների պարենային ապահովության նպատակով: Առայժմ այսքանը:

**25.10.2021թ.**

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

# Շահե Մնկրյանի «Մոռացկոտության պատմությունը»

«Ընթերցող, զգուշացի՛ր: Շահե Մնկրյանի բանաստեղծությունների այս նոր հատորը զբոսայգում հաճելի ժամանակ անցկացնելու համար չի նախատեսված: Բանաստեղծը անկեղծորեն է ներկայացնում իր մանկության տարիների իրադարձությունները, երբ 1975-ին Բեյրութում բռնկվեց քաղաքացիական պատերազմը, երբ մարդկային վայրագությունը, մահն ու սարսափը իշխում էր ամենուրեք»: Այս տողերով է «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում **Քրիստոֆեր Աղամյանն** սկսում իր գրախոսականը:




Գրքի բովանդակության տրամադրությունը ի հայտ է գալիս հենց առաջին բանաստեղծությունում, որը կրում է «Որդու կրթությունը» խորագիրը: «Ես իմ կրթությունը ստացել եմ դիարանում, որտեղ մորս համոզմամբ, ամառային արձակուրդների ժամանակավոր այդ գործը հեռու էր պահելու ինձ փողոցներում թափառելուց», գրում է Մնկրյանը, անընդհատ հիշեցնելով ընթերցողին, որ նա իր մոր ջերմության կարիքն ուներ հատկապես պատերազմական այդ ժամանակաշրջանում:

Բայց նա կարիքն ունի նաեւ իր հոր ներկայությանը, եւ իմանալով, որ հայրը սիրում է կարգապահությունը, փորձում է ամեն գնով նմանվել նրան: Կարգապահությունն ու բարի կամեցողությունն են իշխում հետագա բանաստեղծություններում: Դպրոցական տարիներից հիշում է, որ ընկերները ծիծաղում էին պառավ մի միանձնուհու վրա, որին մի օր նա հետեւել է եւ պարզել նրա կենցաղային պայմանները, իմացել, որ նա փշերով անկողնու վրա պառկած լաց է եղել ամբողջ գիշեր: «Դրանից հետո երեխաները փոխեցին իրենց վերաբերմունքը նրա հանդեպ», գրում է նա:

Պատերազմի եւ բռնությունների հենքի վրա «հյուսված» բանաստեղծություններն ունեն նաեւ լավատեսական, հաղթական ենթատեքստեր: Լիբանանի ժողովուրդը բազում անգամներ է կարողացել հաղթահարել դժվարություններն ու ճգնաժամերը, հավատացած է Մնկրյանը:

«Մոռացկոտության պատմությունը» հեղինակի երկրորդ գիրքն է, որը նա հրատարակել է առաջինից 20 տարի անց: Նա այժմ Փասադենայի Հովսեփյան վարժարանի տնօրենն է եւ Համահայկական գրական ընկերակցության վարչության անդամ:

Գրախոսողը մանկական հիշողություններով եւ համայնքի անդամի հանգամանքով գրված այս հատորը իր պատկերայնության հրաշալի տեսարաններով դասում է այլ մեծարժեք ստեղծագործությունների (Մահմուդ Դարվիշի «Հիշողություններ ընդդեմ մոռացկոտության, Նիկոլաս էլ-Հաջի «Սիրո եւ պատերազմի լիբանանյան գովերգեր») շարքում:

Մեր կարծիքով, Լիբանանի ներկա տագնապալի իրավիճակը հաշվի առնելով է՛լ ավելի է կարեւորվում Շահե Մնկրյանի այս նոր հատորի լույս ընծայումը:

**Պատրաստեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Մեր աշխատակցի հաջողություններից

2021 թվականի սեպտեմբերի 24-27-ը «Expocentre» կենտրոնական ցուցահանդեսային համալիրում (Մոսկվա) թվային զարգացման, կապի եւ զանգվածային լրատվության միջոցների նախարարության աջակցությամբ Ռուսաստանի Դաշնությունից, Ռուսաստանի գրքի միությունից եւ Մոսկվայի կառավարությունից՝ տեղի ունեցավ Մոսկվայի 34-րդ գրքի միջազգային ցուցահանդեսը՝ Ռուսաստանի ամենամեծ գրքի ֆորումը միջազգային մասշտաբով: Այն ավանդաբար հանդիսանում է կենտրոնական իրադարձություններից մեկը գրական եւ գրքային միջավայրում:

Միջոցառումը տեղի ունեցավ նոր վայրում՝ Expocentre Fairgrounds-ում (Մոսկվա): Տեղի ունեցան հանդիպումներ հեղինակների, գրքերի շնորհանդեսներ, կլոր սեղաններ, դասախոսություններ, քննարկումներ անցկացվեցին ինչպես անցանց, այնպես էլ առցանց ՝ բազմաթիվ ինտերնետային կայքերում:

Ռուսաստանի տարբեր շրջաններից ավելի քան 200 հրատարակիչ էր մասնակցում:Չորս օրվա ընթացքում անցկացվեց ավելի քան 300 միջոցառումներ: Հանդիպումներ հանրաճանաչ մարդկանց հետ, գրքերի շնորհանդեսներ, բաց քննարկումներ եւ վարպետության դասեր: Ռուսական գրքի միության, Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի եւ ԶԼՄ-ների նախարարության հետ համատեղ անցկացվեց նաեւ ավանդական արդյունաբերական համաժողով՝ նվիրված գրահրատարակչության եւ տարածման խնդիրներին:

Ֆորումին մասնակցում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Լեհաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ներկայացուցիչներ:

Հայկականական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ, անվանի գիտնական, «Ազգ» թերթի աշխատակից **Ստեփան Պատիկյանի** գիտական աշխատանքների աննոտացիաները նույնպես ընդգրկվել էին հրատարակված հատուկ կատալոգում: Ուրախալի է, որ Ս.Պատիկյանը ակտիվ աշխատող գիտնական է եւ ճանաչված է ոչ միայն մեր երկրում, այլեւ միջազգային շրջանակներում:

# Թուրքիայի Մեջլիսը երկու տարով երկարաձգեց Էրդողանի Իրաք եւ Սիրիա զորք ուղարկելու լիազորությունները

Հ. ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ

Թուրքիայում դեռ չէին հանդարտվել ԱՄՆ-ի գլխավորությամբ 10 երկրների դեսպանների համատեղ հայտարարությանը նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կոշտ արձագանքի հետեւանքով բորբոքված կրքերը, որտեղ դեսպանները թուրքական իշխանություններից պահանջում են ազատ արձակել առաջադեմ գործարար Օսման Քավալային, հարգելով միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները, ահա հոկտեմբերի 26-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում, քննարկման դրվեց երկրի նախագահի Իրաք եւ Սիրիա զորք ուղարկելու լիազորությունները 2 տարով երկարաձգելու հարցը: Լիբանանի պարագայում դրանք երկարաձգվել են մեկ տարով:

Թուրքիայի նախագահին արտերկիր զորք ուղարկելու արտոնություն շնորհելու մասին լիազորագիրը Մեջլիս էր ներկայացվել Էրդողանի պահանջով: Դրա հաստատման անհրաժեշտությունը ներկայացված տեքստում պատճառաբանվում է թուրքական պետության ազգային անվտանգությունն ապահովելու, երկրի սահմանները Իրաքում եւ Սիրիայում գործող ահաբեկչական կազմակերպությունների հարձակումներից պաշտպանելու, փախստականների զանգվածային ներգաղթը կանխելու եւ անջատողական դրսեւորումների դեմ պայքարելու անհրաժեշտությամբ:

600 տեղանոց Մեջլիսում Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունն ունի պատգամավորական 291 տեղ, վերջինի հետ դաշինք կնքած Դեւլեթ Բահչելիի Ազգայնական շարժում կուսակցությունը՝ 49, Քեմալ Քըլըչդարօղլուի ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը՝ 138, Մերալ Աքշեների «Լավ» կուսակցությունը՝37, ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը՝ 58 եւ Թուրքիայի բանվորական կուսակցությունը՝ 3:

Մեջլիսի լիագումար նիստում, ինչպես ենթադրվում էր, «Արդարություն եւ բարգավաճում» ու Ազգայնական շարժում կուսակցության ներկայացուցիչները արտահայտվեցին նախագահ Էրդողանի երկրից դուրս զորք ուղարկելու լիազորությունները երկարաձգելու օգտին, որոնց միացան նաեւ գրպանային մի քանի կուսակցություն, իսկ Ժողովրդա-հանրապետական, ժողովուրդների դեմոկրատական եւ Թուրքիայի բանվորական կուսակցությունները՝ դեմ:

Թերեւս Աքշեների «Լավ» կուսակցությունն էր, որ առաջիկա ընտրությունների առնչությամբ համագործակցում է ժողովրդահանրապետականների հետ, վերջ տալու համար Էրդողանի միանձնյա իշխանությանը երկրում, քվեարկեց կողմ, պատճառաբանելով դա Սիրիայում տեղակայված թուրք զինծառայողների անվտանգության նկատմամբ հոգատարությամբ: Նրանց թիվը ենթադրաբար հասնում է 20 հազարի: Ինչ վերաբերում է նրանց անվտանգությանը, ապա դրա ապահովման լավագույն ձեւը Սիրիա նոր զորք ուղարկելը չէ, այլ թուրքական զորքերին այդ երկրից դուրս բերելը:

Ժողովրդահանրապետականները բազմիցս նշել էին, նշեցին նաեւ լիազորագրի քննարկման ժամանակ, թե թուրքական զորքը ի՞նչ գործ ունի Սիրիայում: Եթե խնդիրը զինվորների անվտանգությունն է, ապա նրանց պետք է դուրս բերել Սիրիայից եւ անհապաղ երկխոսության մեջ մտնել նախագահ Բաշար Ասադի հետ, որպեսզի կարգավորվեն թուրք-սիրիական հարաբերությունները:

Վերջիններս առարկեցին նաեւ Իրաք եւ Սիրիա զորք ուղարկելու նկատառումը թուրքական սահմաններին սպառնացող ահաբեկչական հարձակումներով պատճառաբանելու իշխանությունների մոտեցմանը, մատնացույց անելով ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, որը ինքնապաշտպանության իրավունք է տալիս հարձակման ենթարկվող երկրին, ինչը տվյալ պետությանը ձերբազատում է երկրից դուրս զորք ուղարկելու անհրաժեշտությունից:

Ժողովրդա-հանրապետական կուսակցության համար, թերեւս, ամենաառարկելին Թուրքիայի տարածքում օտարերկյա զինված ուժեր տեղակայելու լիազորությունն է, որոնց տեղակայման վայրը, ժամկետն ու թվակազմը իր հայեցողությամբ որոշելու է Էրդողանը: Զինված ուժերի մասին նշելիս, լիազորագրում չի նշվում «օտարերկրյա պետություն» արտահայտությունը, առանց որի «օտարերկրյա զինված ուժեր» արտահայտությունն իր մեջ ներառում է նաեւ զինյալ խմբավորումներին, ասենք՝ Աֆղանստանի թալիբներին, Իրաքում Հաշդ-ի Շաաբիի, Սիրիայում Հեյ՝աթ-ի Թահրիր աշ-Շամի ահաբեկիչներին:

Թուրքիայում նախագահական եւ խորհրդարանական հաջորդ ընտրությունները նախատեսված են 2023-ին: Էրդողանի եւ նրա կուսակցության ժողովրդականությունը անընդհատ նվազում է: Վերջիններս զգում են, որ ընտրություններում այլեւս հաղթանակի հասնելու հնարավորություն չունեն, իսկ Էրդողանն էլ նախագահի պաշտոնը թողնելու մտադրություն չունի, ինչի մասին արդեն ակնարկել է, դեռ ավելին՝ ընդդիմադիր կուսակցություններին էլ մեղադրել է երկրում իշխանության ձգտելու մեջ: Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, հաշվի առնելով այս հանգամանքը, վախենում է, որ Էրդողանը փորձի հնարավորինս հետաձգել ընտրությունները, ստեղծելով երկրում խառնաշփոթ իրավիճակ, օրինակ՝ «Սիրիայի ազգային բանակի» միջոցով, որին ինքն է կազմավորել, հետեւաբար այս բանակի ահաբեկիչները իրեն են ենթարկվում: Մանավանդ որ Էրդողանի արտերկիր զորք ուղարկելու լիազորությունները երկու տարով երկարաձգելու դեպքում, դրանց ժամկետը լրանում է նախատեսված ընտրություններից 4 ամիս հետո միայն:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

# ... Եվ «կիսվելու» ճարակող հիվանդություն

**Որեւէ երկրի ֆիզիկական տարածքների կորուստը կարող է անդառնալի լինել, երբ սկսվում է հոգեւոր տարածքների կորստից: Չհամեմատենք, բայց մեր ազգապահ արժեքների եւ դրանցից ամենակարեւորի՝ մեր լեզվի նկատմամբ անփույթ ու անխնամ վերաբերմունքը կարծես թե չգիտակցվող լուրջ սպառնալիք է դարձել, մանավանդ երբ դրան երբեմն անզգուշորեն տուրք են տալիս նաեւ «կոչեցյալները»:**

**Օրերս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանի ֆեյսբուքյան էջում զետեղվեց մի տեղեկատվություն առ այն, որ հիմնադրվել է «Հայ գրադարանավարների եւ արխիվագետների միջազգային կազմակերպություն»: Հավելելով նաեւ, թե Հայաստանի ներկայացուցիչների համար անդամակցությունն անվճար է, էջի հեղինակները հաջորդ տողում գրում էին. «Կիսվում ենք այդ հաղորդագրությամբ, ակնկալելով շահագրգիռ կառույցների եւ մասնագետների մասնակցությունը կազմակերպության աշխատանքներին» (ու բերում էին անգլերեն հաղորդագրությունն ամբողջությամբ):**

**Դարձյալ այս ցավալիորեն տարածված ու հայերենում նորանոր ավերներ գործող չարաբաստիկ կիս-վելը... Փորձեցինք մեկնաբանությունում նրբորեն ուշադրություն հրավիրել լեզվական այս մեղանչման վրա, նաեւ հորդորելով, թե որպես նման ԳԻՏԱԿԱՆ գրադարան մի քիչ էլ մեր լեզվի մասին մտածեք, էլի: Եվ ինչպես կարելի էր սպասել, հաջորդ օրը նույն տեղեկատվությունը նորացված ամսաթվով զետեղվեց նույնությամբ, հնի փոխարեն, բայց բնականաբար՝ առանց մեր մեկնաբանության: Մինչդեռ խնդիրը դա չէր, այլ կարելի էր ուշադիր լինել ու իրոք մտածել՝ հայերեն ինչ է նշանակում կիսվել-ը եւ դրա փոխարեն գրել, ասենք, «հրապարակում ենք այդ հաղորդագրությունը», եւ ամեն ինչ իր արժանի տեղը կընկներ:**

**Ահա այսպես հիմա շատ-շատերն առանց մտածելու հա կրկնում են ժամանակին ռուսական կրթություն ու լեզվամտածողություն ունեցող, մայրենի լեզվին վատ տիրապետող որոշ գրագետների տարածած, ռուսերեն բառից անհաջող թարգմանած այս սխալախոսությունը: Լավ, հայոց լեզվի գիտական ըմբռնումից հեռու մարդկանց շարունակենք ասել, բացատրել, բայց մասնագիտական, գիտական շրջանակներին է՞լ կարիք կա ասելու, թե հայերեն մի բան կիսելու, այժմ նաեւ համացանցում մի բան հրապարակելու, գրառելու, տեղադրելու եւայլնի փոխարեն անձամբ կիսվելը (իմա՝կես լինելը) եւ նման շատ այլ կոպիտ սխալներ որքան են հարվածում, վնասում մեր լեզվի համակարգին, նրա կուռ կառուցվածքին, արդեն նկատելիորեն խաթարելով մեր եւ մանավանդ՝ եկող սերնդի լեզվամտածողությունը: Թե այդ -վ մասնիկով սխալ կառույցը իբրեւ քաղցկեղի շոշափուկ տարածվելով եւ ծավալվելով՝ ինչպես է նույնիսկ գրագետ շատ մարդկանց դրդում նույն կերպ իրենց բանավոր ու գրավոր խոսքում մի բան փոխանակելու տեղակ «փոխանակվել», մի բանից բռնելու, պինդ կենալու տեղակ «բռնվել», իրար գրելու փոխարեն «գրվել», զանգելու փոխարեն՝ «զանգվել», եւ այս ձնագնդին շարունակվում է... Կարո՞ղ ենք ասել՝ այս ճանապարհին ի վերջո ուր է տանում:**

**ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի, նրա գործի ու հեղինակության հանդեպ ընդամենը հին համալսարանավարտ բանասերիս խոնարհալից հարգանքով հանդերձ, այս առիթով չենք կարող նաեւ ափսոսանքով չնշել վաղուց նկատած մի բան էլ: Այս կարեւոր գիտական օջախի ֆեյսբուքյան էջի ճակատը զարդարում է մեծ գլխատառերով հետեւյալ գեղագիր մեջբերումը Մովսես Խորենացուց. «Հրաման տայ բնակչաց աշխարհին ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական»: Բայց հենց այս խոսքերի տակ գրադարանի անունը, ինչպես նաեւ հասցեն ու ընդհանուր բնութագիրը տրված են միայն անգլերեն...**

# Հրավեր



**Հայկական բարեգործական ընդհանուր միությունը հրավիրում է ներկա գտնվելու Ջավախքին աջակցություն հիմնադրամի «Բացահայտենք Ջավախքը» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսի բացմանը, որը տեղի կունենա նոյեմբերի 1-ին՝ ժամը 13:00-ին ՀԲԸՄ Հայաստանի դահլիճում (Մելիք-Ադամյան 2/2):**

**Ցուցահանդեսին ներկայացված կլինեն համանուն խորագրով լուսանկարչական արշավի մասնակիցների ջավախքյան բնապատկերներն ու կոլորիտը ներկայացնող լուսանկարները տեղի մարդկանց, նիստուկացի, ավանդույթների ու պատմական արժեք ունեցող հուշարձանների վերաբերյալ:**

**Այս ցուցահանդեսը Ջավախքը բոլոր կողմերից բացահայտելու լավագույն այլընտրանքն է: Այն բաց կլինի մինչեւ նոյեմբերի 10-ը:**

**Սիրով սպասում ենք բոլորիդ: Մուտքն ազատ է, դիմակ կրելը՝ պարտադիր:**

# Աշխարհը մեզ մեր վարքուբարքով է ընկալում, իսկ մենք «հում-հում-հումանիզմից» ենք խոսում

2022-ի պետական բյուջեի ծրագիրը ներկայացնելիս վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** բավական ուշագրավ հայտարարություն արեց: Ըստ նրա՝ ՀՀ-ն, ինչպես յուրաքանչյուր խաղաղասեր պետություն, զինված ուժերը զարգացնելու եւ վերափոխելու է ոչ թե ագրեսիայի, այլ ագրեսիայից պաշտպանվելու համար: «Հայաստանի Հանրապետությունը տարածքներ նվաճելու մտադրություն չունի»,- հայտարարում է Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանը, իսկապես, երբեք էլ ագրեսոր չի եղել, բայց սեփական տարածքներին տեր կանգնելը նվաճողի տրամաբանություն կամ ագրեսիա համարելը հաստատ ազգային ու պետական շահերից չի բխում: Անգամ շարքային ադրբեջանցին կխոստովանի, որ Հադրութը Արցախի պատմական շրջաններից է, հիմա դրա վերադարձին միտված քայլերը ինչպե՞ս կարելի է նվաճել համարել:

Նորություն ասած չենք լինի, որ աշխարհին «հում-հում հումանիզմի» քարոզը երբեք էլ չի հուզել: Մեզ շրջապատող աշխարհը մեզ ընկալում է մեր վարքուբարքով: Չենք պայքարում, հարմարվում ենք կորուստների հետ, նշանակում է՝ կորցրածը մեզ պետք էլ չի եղել, դրա արժեքն չենք իմացել: Հաղթում է ուժեղն ու կարողը, իր ձայնը լսելի դարձնողը: Մաթեւոսյանի ասած՝ «ով խելք ու խորամանկություն ունի՝ իր խելքով ու խորամանկությամբ, ով վերեւներում ընկեր, բարեկամ, ծանոթ ունի՝ իր էդ հավասարիմներով, ով ճարտար լեզու ունի՝ հենց լեզվակռվով, ով էլ գլուխ ու լեզու չունի, բայց կուռը փետ է պահում, տո՛, էդ դագանակով, թուր ու թվանքով միշտ պետք է պատրաստ լինել, մեծ տրաքոց է լինելու...»:

Իսկ ի՞նչ ենք անում մենք մեծ տրաքոցին ընդառաջ, կարելի է ասել՝ ոչ մի բան: Ձեռքներս ծալած ու խաղաղասիրության քարոզը շրթներիս՝ սպասում ենք, թե ում մոտ ենք հերթական անգամ մեր դարդը լացելու: Տարածքները, որոնք դարերի ու տարիների ընթացքում անցել ու շարունակում են անցնել հակառակորդ երկրներին, մեզ համար սոսկ հողակտորներ են, դրանք կեսատարածքներ են, որտեղ ապրել ու արարել են մեր հայրենակիցները: 44-օրյա պատերազմից հետո խոսել նվաճող չլինելուց, կանգնել ու ասել ենք, թե մենք ոչինչ էլ չենք ուզում, «բոլորը ձեզ, բոլորը ձեզ», մեղմ ասած անհեռատես գործչի ոչ հանայապաստ հայտարարություններ են: Քանի՞ երեխա է զրկվել իր ծննդավայր Հադրութում դպրոց հաճախելուց, քանի՞ հադրութցի է իր այգու արքայախնձորի ու նռան մասին երազում, իսկ քանի՞ պետական այր է պատրաստ ոչ միայն նվաճել, այլեւ գնալ, պայքարել ու կյանք տալ հանուն կենսական նշանակության տարածքների: Այս ամենի պատասխանը 44 պատերազմը ցույց տվեց, երբ պատգամավորներն ու պաշտոնյաները Ստեփանակերտի «Արմենիա» հյուրանոցի ապասարանը որպես առաջնագիծ էին ընկալում, վայելում թթի օղին ու կյանքի-մահվան մասին վերտառությամբ սելֆիներ հրապարակում:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

պգդ, պրոֆեսոր

# Համազգային գաղափարաբանություն է անհրաժեշտ

Մեծ երազի ճանապարհին 1990թ. Հայաստանն անկախ եւ երրորդ հանրապետություն հռչակելով մեր քաղաքական այրերը դրանից առաջ չգնացին: Նոր, համազգային նպատակ ու այն կերտելու գաղափարախոսություն ոչ միայն չմշակվեց, այլ դա ավելորդ արժեք համարելով այսօր էլ առաջ ենք գնում ուղղակի իներցիայի ուժով կամ օտարների թելադրած սցենարներով: Իհարկե, ես հասկանում եմ, որ բազմաթիվ ու բազմատեսակ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ խոչընդոտ եղան, որպեսզի արվեին անկախությանն հաջորդող անհրաժեշտ քայլերն այդ ուղղությամբ, սակայն ամբողջ ցավը նրանում է, որ այդ խոչընդոտների բացակայության ժամանակներում էլ ոչինչ չարվեց այդ տխուր վիճակը շտկելու համար: Իրականությունն այն եղավ, որ չնայած իշխանությունների կազմակերպած կոմերիտմիության համամիութենական հավաքներ հիշեցնող որոշ Հայրենիք-Սփյուռք համաժողովներ գումարվեցին, սակայն անցած 30 տարիների ընթացքում Հայաստանի ակադեմիական շրջանակները, Սփյուռքի նախարարությունը, ԱԳՆ-ն երբեւէ համազգային նպատակը հստակեցնելու, Հայաստան-Սփյուռք» հարաբերությունները մշակելու հայեցակարգային խնդիրներ չբարձրացրին: Իրականության դեմ չմեղանչելու համար պիտի նշենք, որ այդպիսի երկչոտ փորձեր, իսկ ավելի հաճախ այդ ուղղությամբ փնտրտուք եղել է: Եվ որպես կանոն, այդ ճանապարհին թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում մշտապես զուգահեռներ են անցկացվել մեր երկրի եւ Իսրայելի միջեւ: Գաղտնիք չէ, որ հրեական սփյուռքը ինստիտուցիոնալիզացված է միջազգային հարաբերությունների ամենաբարձր մակարդակներում եւ դիրքավորվում է որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Որպես այդպիսին հանդես են գալիս «Համաշխարհային հրեական կոնգրես», «Հրեա կանանց համաշխարհային կոնգրես», «Համաշխարհային հրեական երիտասարդական կոնգրես» եւ այլ համանման կազմակերպություններ, որոնք ներկայացված են ՄԱԿ-ում, Յունեսկոյում, ԵՄ-ում, «Ամերիկյան պետությունների կազմակերպությունում» եւ այլ՝ համաշխարհային կառույցներում ու բազմակողմ ազդեցություն են գործում միջազգային գործընթացների վրա: Իսկ մեր մոտ վիճակն այդ տեսակետից, մեղմ ասած, հեռու է ցանկալի մակարդակից: Ի դեպ, այժմ արդեն շատ ժողովուրդներ եւս կարողացել են բավականին առաջ գնալ այդ հարցում: Այսպես, վերջին տարիներին միջազգային ասպարեզում հզոր դիրքեր են զբաղեցնում Չինական, Հնդկական եւ Լեհական կառույցները: Այս պահին, օրինակ, Հնդկական սփյուռքն իր լոբբիստական հզորությամբ ԱՄՆ-ի կոնգրեսում զբաղեցնում է երկրորդ տեղը Իսրայելից հետո, իսկ Մեծ Բրիտանիայում գրավում է բարձր դիրքեր ոչ միայն տնտեսության, այլեւ պետական-քաղաքական ասպարեզում:

Հայկական սփյուռքի պարագայում մենք «գլուխ գովելու» որեւէ օրինակ կարծես թե չունենք եւ դա այն դեպքում, երբ հայերը ԱՄՆ-ի հնաբնակներից են եւ ժամանակին զգալի թիվ էին կազմում հատկապես գործարար եւ իրավական դաշտերում: Ավելին, դեռեւս XX դարի արշալույսից այդ երկրում հիմնվեցին ու բավականին արագ հզորացան հայ ավանդական կուսակցությունների մասնաճյուղերը, որոնք աստիճանաբար էական դերակատարություն ստանձնեցին ինչպես գաղութի ազգապահպանության, կրթամշակութային եւ այլ ասպարեզներում, այնպես էլ քաղաքական կյանքում: Դրանցից ռամկավարներն առաջիններից մեկը ձեռնամուխ եղան աշխարհի ամենահզոր տերության օրենսդիր եւ գործադիր մարմիններում լոբբիստական գործունեություն ծավալելու եւ հայանպաստ որոշումներ ունենալու հարցերում: Կարեւոր դերակատարություն ունեցավ ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, Մեծ Բրիտանիայում եւ ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպությունների հիմնադիր **Միհրան Սվազլյանը** (1863, Զմյուռնիա - 1935, Բոստոն), (մանրամասն տես «Ի յիշատակ Միհրան եւ Մառի Սվազլեաններու. Հատընտիր գրութեանց. Նօթեր եւ տպաւորութիւններ, քաղաքական եւ ազգային տեսութիւններ», Պոստոն, 1944):

Նախնական կրթությունն ստացել է Զմյուռնիայի անգլիական քոլեջում: Դեռեւս 18 տարեկանում, անգլերենի իմացության շնորհիվ, քարտուղարի եւ գանձապետի պաշտոնով ծառայել է Կիպրոսի անգլիական կառավարական պալատում: Ավարտելով Ֆրանսիայի Էքսի համալսարանի իրավաբանական բաժինը՝ Սվազլյանը լծվել է եվրոպական հանրությանը Հայոց հարցին ծանոթացնելու գործին: 1888 թ., անցնելով Լոնդոն, նա նպատակ ունենալով ակտիվացնել հայանպաստ պրոպագանդան Եվրոպայում, վերակազմակերպել է «Հայոց հայրենասիրաց» ընկերությունը եւ ձեռնամուխ եղել հայաշատ համայնքների հայության ջանքերն այդ ուղղությամբ միավորելուն: Լոնդոնում հրատարակել է «Հայաստան» երկշաբաթաթերթը, հիմնել Մեծ Բրիտանիայում առաջին լոբբիստական կազմակերպությունը՝ Անգլո-հայկական ընկերությունը: Մասնակցել է Եվրոպայի հեղափոխական շարժումներին՝ ձգտելով Հայկական հարցը ծանոթացնել օտարներին եւ հայասեր բարեկամներ ձեռք բերել:

1908 թ. մեկնել է ԱՄՆ, շարունակել փաստաբանական, ինչպես նաեւ ազգային, հասարակական-քաղաքական գործունեությունը: Մ. Սվազլյանը եղել Վերակազմյալ Հնչակյան, ապա՝ միացյալ Ռամկավար-Ազատական (1921 թ.) կուսակցությունների հիմնադիր-ղեկավարներից: Հայանպաստ քարոզչություն եւ դիվանագիտական ձեռնարկներ իրականացնելու եւ դրանք ի սպաս Հայաստանի ազատագրմանը ծառայեցնելու նպատակով Մ. Սվազլըն 1917 թ. մարտին Բոստոնում հիմնադրել եւ մինչեւ լուծարումը (1922 թ.) ղեկավարել է ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը՝ Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ-ANUA), ինչպես նաեւ եղել է 1912 թ. Պողոս Նուբարի նախագահությամբ գործող Հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչը Վաշինգտոնում, իսկ զինադադարից հետո՝ նաեւ Աթենքում (մանրամասն տես Ավագյան Ք, Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, Ե., 2003):

Ժամանակակիցներից Հ. Դարբինյանը նշում է, որ Սվազլյանը եղել է «հայ ազատագրական պայքարի առաջին ռահվիրաներէն՝ մինչեւ վերջը մնացած է պատնէշին վրայ անդրդուելի, առաջին շարքերում մէջ, երիտասարդի մը խանդավառութիւնով ու տարեցի մը փորձառութիւնով»: Իսկ Արշակ Չոպանյանը նրա մասին գրել է. «Միհրան Սվազլը ... ժամանակակից հայ կեանքի ամենէն ինքնուրոյն ու սիրելի դէմքերէն մին է: Վճիտ ու թրթռուն սիրտ մը, խանդավառ ու ազնիւ միտք մը, հայ ցեղին լաւագոյն աւանդութեանց շունչով, մշտադալար աւիւնով մը հայրենիքի կրօնքին նուիրուած, - այս է էութիւնը ազգային դաշի այդ վեթերան ախոյեանին բարոյական դիմագծութեան»:

Մ. Սվազլյանի հիմնադրած եւ ղեկավարած ԱՀԱՄ-ը ներառել է համերաշխ գործելու պատրաստակամություն դրսեւորած հայ ավանդական կուսակցությունների (Սոցիալ Դեմոկրատ, Վերակազմյալ Հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Սահմանադրական Ռամկավար), ազգային երկու եկեղեցիների (Առաքելական, Ավետարանական) եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) ներկայացուցիչներին: Ընտրվել է միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին (ատենապետ՝ Մ. Սվազլյան): Փորձ է արվել մշակել համազգային դրույթներ: Միության նպատակն էր ամերիկահայ համայնքի նյութական ու բարոյական ուժերը համախմբել եւ դրանք ի սպաս դնել Հայաստանի ազատագրմանը, ինչպես նաեւ՝ հայանպաստ քարոզչություն եւ դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել: Կարճ ժամանակում ԱՄՆ-ում ստեղծվում են միության 187 մասնաճյուղեր: Հակառակ քաղաքական բազմաթիվ տարաձայնություններին, միությունը երկրի հայ համայնքի կյանքում առաջին անգամ համախմբել է հայ բոլոր քաղաքական, եկեղեցական եւ բարեսիրական խմբավորումներին՝ ի շահ համընդհանուր ազգային նպատակների, ամերիկահայության շրջանում կազմակերպել է կամավորական շարժումը («Արեւելյան Լեգեոն», 1917 թ.), ԱՄՆ-ի եւ Եվրոպայի անտեղյակ հասարակությանը Հայկական հարցին ծանոթացնելու նպատակով հիմնել Մամլո գրասենյակ (1918 թ.), հրատարակել ու տարածել հայանպաստ գրականություն, աջակցել հայասեր ամերիկացիների կողմից ԱՄՆ-ի Կոնգրեսում 1918 թ. Հայկական հարցին առնչվող ունկնդրումներ անցկացնելուն, կազմակերպել Ազատ Հայաստան հաստատելու ուղղությամբ ամերիկյան առաջադեմ հասարակության կողմից ԱՄՆ-ի նախագահին խնդրագիր ներկայացնելու ջանքերը (1919 թ.), նպաստել վերջինիս կողմից Հայաստանի Առաջին Հանրապետություն գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ քննիչ հանձնախումբ առաքելուն (1919 թ.), մասնակցել Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի (1919 թ.) (նախագահ՝ Ջեյմս Ջերարդ), ինչպես նաեւ՝ Հայաստան-Ամերիկա ընկերության (1920 թ.) ստեղծմանը, համազգային դրամահավաքներին, ԱՄՆ-ի եւ Եվրոպայի կողմից ճանաչված անցագիր-վկայականներ տրամադրել տարագիր հայրենակիցներին եւ այլն: Միության նախագահ Մ. Սվազլյանի գործուն ջանքերի շնորհիվ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը 1920 թ. Կոնգրեսում հանդես է եկել հայկական վիճելի տարածքների հանդեպ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողություն հաստատելու առաջարկով եւ այլն:

⇨11

## Դարձյալ ՌԱԿ-ի 100-ամյակի մասին



Իմ ելույթից մի պահ գիտաժողովում

Ռամկավար Ազատական կուսակցության 100-ամյա հոբելյանը, որ հայ ժողովրդի համար կարեւոր իրադարձություններից մեկն է, պետք է նշվեր մեծ շուքով: Սակայն, տարբեր օբյեկտիվ ու իրենց կուսակցական շեֆեր համարողների հնարովի մի քանի պատճառներով դրա մասին անգամ չխոսվեց: Իսկապես տխուր մի իրողություն է սա եւ մեծ ցավով պիտի ասեմ, որ խոսում է մի պարզ իրականության մասին՝ ՌԱԿ-ում գործերը ոչ միայն այնքան էլ լավ չեն, այլ ուղղակի ռակով հիվանդ են: Բայց դա հավատավոր կուսակցականներիս չի վհատեցնում, ավելին, մենք հավատում ենք ՌԱԿ-ի վաղվա օրվան եւ մեզ համար 100-ամյա հոբելյանը ոչ միայն մեծ խորհուրդ ունի, այլեւ շարունակվելու է ողջ տարին:

Թող անհամեստ չհնչի, ինքս էլ եմ այդ հավատավորների շարքում եւ իմ մասնագիտական հնարավորությունների սահմաններում աշխատում եմ անել ամեն ինչ փլուզման եզրին հասած կուսակցության հոբելյանի մասին Հայրենիքում եւ Սփյուռքում գոնե լսելի դարձնել հայ հասարակությանը: Այս առումով հոդվածներ հրապարակելուց բացի փորձում եմ օգտագործել ամեն մի հնարավորություն ու միջոց:

Այդպիսի առիթ եղավ ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի Շիրակի մասնաճյուղի կողմից հոկտեմբերի 22-23-ը կազմակերպված միջազգային գիտաժողովը, որտեղ հանդես եկա «Հարյուրամյա Ռամկավար Ազատական Կուսակցությունը (1921-2021թթ.)» գիտական զեկուցումով: Քանի որ ինքնագովության տարիքից վաղուց դուրս եմ եկել, ուստի նշեմ, որ զեկուցումը լսվեց համակ ուշադրությամբ, իսկ վերջում տրվեցին բազմաթիվ հարցեր: Ակնհայտ էր, որ մեր հասարակությունը որքան էլ կլանված է իշխանություն-ընդդիմություն գզվռտոցով, սակայն չի դադարել հետաքրքրվել ավանդական կուսակցությունների վիճակով եւ, իմ կարծիքով, պատահական չէր, որ մի քանի անգամ կրկնվեց նույն՝ իսկ որտե՞ղ են նրանք հայ ժողովրդի համար բախտորոշ այս պահին հարցը: Կարող էի ժամերով պարզաբանել ՌԱԿ-ի ներօրյա բազմաթեւ լինելու պատճառները, սակայն դա նշված հարցի պատասխանը չէր լինի եւ գերադասեցի շրջանցել այն: Արձանագրեմ նաեւ, որ եւս մեկ անգամ մաշկիս վրա զգացի գիտամտավորական միջավայրում քիչ ռամկավարներից մեկը լինելու տխուր ու շատ ցավոտ իրողությունը:

Այս ամենով հանդերձ վստահ եմ նաեւ, որ այնքան էլ հեռու չէ այն օրը, երբ փողասիրությունն ու չարչիական մտածողությունը դուրս կմղվի կուսակցությունից եւ կգան նոր ուժեր, նոր սերունդ, եւ ՌԱԿ-ն իր հայրենանվեր գործունեությամբ ինքնամաքրված ու պարզ ճակատով կրկին կներկայանա աշխարհասփյուռ հայ հասարակությանը:

**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**
**Սուրեն Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# Թ.Մ.Միության «Ուսուցիչների հովանավոր» ծրագիրը վերականգնում է իր հանձնառությունը Արցախի ուսուցիչների հանդեպ




Թեքեյան մշակութային միության «Ուսուցիչների հովանավոր» ծրագիրը, որը վերջին 20 տարիների ընթացքում օգնում է Հայաստանի չորս եւ Արցախի մեկ դպրոցի ուսուցիչներին, Ադրբեջանի եւ Թուրքիայի նախաձեռնած արյունալի 44-օրյա պատերազմից մեկ տարի անց վերականգնեց իր օգնությունը Ղարաբաղի ուսուցիչների համար:

Պատերազմի ընթացքում տեղի ունեցավ այն, ինչ աներեւակայելի էր: Արցախի Բերձորի Թեքեյան դպրոցը, որը գտնվում է Քաշաթաղի կամ Լաչինի շրջանի նեղ միջանցքում, ներկայումս ավերակ վիճակում է: Պատերազմի ընթացքում այն օգտագործվել է որպես հայ զինվորների զորանոց: Պատերազմի ավարտից հետո հայ բնակչությունը տարհանվեց, իսկ այդ տարածքը վերահսկում են ռուսական խաղաղապահ ուժերը: Բերձորում թույլատրվեց մնալ ընդամենը շուրջ 100 հայի, որպեսզի կարողանան ապահովել ռուսական զորքի կենցաղային կարիքները: Դպրոցի տնօրենն ու ուսուցիչները այժմ կա՛մ Երեւանում են, կա՛մ տարբեր գյուղերում՝ հարազատների մոտ: ԱՄՆ-ի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միությունը օգնում է նրանց գտնել այլընտրանքային եկամտով աշխատանքներ՝ Մոնրեալից **Արտո Մանուկյանի** գլխավորությամբ, որը միաժամանակ նախաձեռնել եւ իրականացրել է Բերձորի փախստականների «Կայուն աջակցություն» ծրագիրը Հայաստանում՝ ներդրումներ կատարելով գյուղատնտեսության եւ մեղվաբուծության ոլորտներում Սյունիքի զարգացման ՀԿ-ի միջոցով:

Ուսուցիչների հովանավորության ծրագիրը, որը ղեկավարում է Տեխաս նահանգի Հյուսթոն քաղաքից ԹՄՄ Կենտր. վարչության գանձապահ **Մարո Պետրոսյանը**, ավելացրել է անհրաժեշտ ֆինանսական միջոցները 2021 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում՝ օգնելու ոչ միայն ՀՀ-ում Վահան Թեքեյանի անվան բոլոր չորս դպրոցներին, այլ նաեւ Արցախի 5 նոր դպրոցների՝ թվով 90 ուսուցիչներին, մասնավորապես՝ Եղցահողի Մ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի, Գ.Աղավնոյի Գ.Նժդեհի անվան միջնակարգ դպրոցի, Շուշիի շրջանի Մեծ Շենի Սասուն Դավթյանի անվան միջնակարգ դպրոցի, Շուշիի շրջանի Լիսագորի անվան միջնակարգ դպրոցի եւ Շուշիի շրջանի Հին Շենի Ա.Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցի:

Հոկտեմբերի 2-18-ը դրամական միջոցները բաշխվել, փոխանցվել են ուսուցիչների հաշվեհամարներին Կենտրոնական վարչության ատենապետ Երվանդ Ազատյանի եւ վարչության անդամ Միհրան Մինասյանի հանձնարարությամբ, Հայաստանում ԹՄՄ ներկայացուցիչ Գայանե Մուրադյանի եւ «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» նախագահ Գուրգեն Մելիքյանի կողմից, որը մեկնել է Արցախի վերը նշված հինգ գյուղեր եւ անձամբ 90 ուսուցիչների եւ աշխատողների է փոխանցել միջոցներ՝ այս տարվա հոկտեմբեր, նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին նրանց կարիքները հոգալու համար:







Եղցահողի դպրոցի տնօրեն Պողոս Աղաբեկյանը նշել է. «ԱՄՆ-ի մեր եղբայրների ու քույրերի այսչափ բարեգործությունը ոգեւորում է մեզ, որպեսզի չթողնենք մեր բնակավայրերը»:

Մեծ Շեն գյուղի դպրոցի ուսուցչուհի **Ադրինե Դավիդյանն** էլ ասել է. «Շնորհակալ ենք Թեքեյան մշակութային միության անդամներին եւ աջակիցներին, որոնք մեզ աջակցել են նյութապես եւ, որ ամենակարեւորն է, բարոյապես: Մարդասիրական գործողությունները օրինակ են ծառայում մարդկանց եւ ցույց տալիս դեպի բարություն տանող ճանապարհը: Դա նաեւ ոգեշնչող գործոն է, որը ուսուցչին տալիս է աշխատելու, ստեղծագործելու ցանկություն»:

ԱՄՆ-ի եւ Կանադայի ԹՄՄ կենտրոնական վարչության խորհրդի անդամ Միհրան Մինասյանը Գյումրու Վահան Թեքեյանի անվան դպրոց այցի, դպրոցի տնօրենի եւ ուսուցիչների հետ հանդիպման ընթացքում շեշտադրեց, որ գումարի չափը չէ կարեւորը. «Ես հասկանում եմ, որ այսօրվա տնտեսական պայմաններում նվիրաբերված գումարն այնքան էլ մեծ չէ: Այնուամենայնիվ, այս ամենը կարելի էր անել անուղղակի ձեւով՝ պարզապես գումարային կտրոններ ուղարկելով, սակայն կարեւորը շփումն է, անմիջականությունը գումարները ներկայացնելիս: Մենք հավատում ենք Հայաստանի ապագային»:

Կարբիի Վահան Թեքեյանի անվան դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի **Նարինե Հայրապետյանն** ասաց, որ իրենք իրենց ավելի ապահով են զգում, քանի որ Թեքեյանը կա: Նա ասաց. «Մենք ամեն տարի սպասում ենք ձեզ, եւ, փառք Աստծո, բոլորս գիտենք, որ սա ոչ միայն դրամի համար է, այլ ձեզ հետ հանդիպելու եւ ձեզ մեր կողքին ունենալու համար: Չափազանց հաճելի է, երբ մարդու աշխատանքը գնահատվում է»:

# Կոմիտաս՝ ցեղասպանության զոհը. BBC-ի անդրադարձել է հայ երգի Մեսրոպ Մաշտոցին



BBC լրատվականը ծավալուն հոդված է հրապարակել **Կոմիտաս վարդապետի** մասին, որին կցել է նաեւ Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ հրթիռակոծված Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում թավջութակահար **Սեւակ Ավանեսյանի**՝ Կոմիտասի ստեղծագործությունը նվագելու հուզիչ տեսահոլովակը: BBC Music Magazine-ը առանց տողատակերի գրում է, որ վարդապետը 1915թ. Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված հայոց ցեղասպանության զոհերից է.

«Հայ ժողովրդի համար երաժշտությունը կարեւոր հիշողություն ունի: Եւ ամեն անգամ Ապրիլի 24-ին, հայերի բնաջնջման հիշատակի օրը, նրանք ամբողջ աշխարհից հավաքվում են մեկ վայրում՝ հարգելու հանգուցյալների հիշատակը. այդ օրը հնչում են նաեւ Կոմիտասի երգերը»,- գրում է հեղինակը:

Նա միաժամանակ նշում է, որ եթե որեւէ տեղ հարցնեն, թե ով է հայերի ամենամեծ կոմպոզիտորը, բոլորը Արամ Խաչատրյանի անունն են տալու, բայց եթե այդ հարցը տան հայերին, ամեն անգամ կլսեն Կոմիտասի անունը.

«Ինչպես խոստովանել է նրա ամենահայտնի հայրենակիցներից մեկը՝ **Արամ Խաչատրյանը**, Կոմիտասը միայնակ դրել է Հայաստանի դասական երաժշտության ավանդույթների հիմքը»,- գրում է նա:

Պատրաստեց՝ Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

# Համազգային գաղափարաբանություն է անհրաժեշտ

⇨10

Այս ամենին զուգընթաց ազգի նվիրյալը փորձել է նաեւ համազգային միասնական գաղափարախոսություն մշակել, սակայն ամենայն հավանականությամբ չի հաջողել, որովհետեւ նախ, աշխարհի հզորները «քաղաքակրթութեան իրաւունքները ոտնակոխ ըրին», հետո էլ՝ «Շուարումէ շուարում քալեցինք: Անստուգութիւն, անհեռատեսութիւն, ներքին պառակտումներ եւ խուժամ պատեցին մեզ, եւ մեր ազգային նաւը, առանց ղեկի ծովու ալեկոծեալ ալիքներէն տարուեցաւ հոս ու հոն»: Սակայն անվեհեր տեսաբանը վստահ էր, որ «ցիրուցան Հայութիւնը պիտի մի օր գայ բոլորուիլ ներկայ ազատ Հայաստանի շուրջը եւ պիտի պատսպարուի ազատութեան ծառին թեւերուն ներքեւ»: Կասկածից դուրս է, որ Սփազլյանի Հայրենիքի սատարմանն ուղղված ազգային տեսլականը, խոսքերն ու գործադրած ջանքերը, արեւմուտքի երկրների հետ կապված հույսերն ու հուսախաբությունները, Հայաստանի ռազմավարական կողմնորոշման վերաբերյալ իրատեսական դատողություններն ու գնահատանքները մինչեւ օրս արդիական են, քանի որ հիմնված են պատմաքաղաքական փորձառության, գիտակցված ազգային նպատակի եւ գործնական հայրենասիրության վրա:

Ընդգծենք, որ համազգային համախմբման այդպիսի գործնական փորձ եղել է նաեւ ԽՍՀՄ-ում Կոմկուսի կոնտկոմի քաղբյուրոյի կողմից անցյալ դարի 60-ական թվականներին, երբ վերջինիս որոշումով 1962թ. ստեղծվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն»: Այդ եզակի եւ ուրույն կառույցը ոչնչացվեց Տեր-Պետրոսյանի նախագահության առաջինիսկ օրերին: Այդ քայլը «մահացու» հարված հասցրեց սփյուռքահայ կառույցներին: Սփյուռքում էլ ավանդական կուսակցություններն ու նրանց ղեկավարությամբ գործող «Հայ դատ» եւ «Հայկական համագումար» կազմակերպությունները, որոնք ազդեցիկ դիրքեր ունեին ԱՄՆ-ում (տարիներ շարունակ երրորդ տեղն էին զբաղեցնում), Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում, «էրոզիայի» են ենթարկվել եւ հստակ էլ չէ, թե այժմ որերորդ տեղում են: Որովհետեւ այդպես էլ չգիտակցվեց, որ մեր ժողովրդին նպատակի հստակ ձեւակերպում, այսինքն՝ համազգային գաղափարաբանություն է անհրաժեշտ եւ այն գիտակցումը, որ երկրի կարեւորագույն գործառույթը համազգային ներուժի արդյունավետ ու նպատակային կառավարումն է:

10.10-27.10.2021

# Ո՞վ է պատրաստ սահմանազատման, Հայաստանն ո՞վ է, մի քանի պաշտոնյա՞

Մի տեսակ սովորույթ է դարձել, որ Հայաստանի ԱԽ քարտուղար **Արմեն Գրիգորյանը** ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին հաջորդող կառավարության նիստից հետո ինչ-որ ձեւաչափով կարծես հակիրճ ամփոփում է այն մտքերը, որոնք վարչապետ **Փաշինյանը** ցաքուցրիվ մի քանի ժամ արտահայտում է ԱԺ-ում:

Այս անգամ եւս երեկվա կառավարության նիստից հետո Գրիգորյանը մի շարք ամփոփումներ է արել.

-Ադրբեջանի հետ սահմանագծման ու սահմանազատման Հայաստանը պատրաստ է՝ զորքը հայելային պիտի հետ քաշվի, ու սկսվի այդ գործընթացը:

-Մինչեւ նոյեմբերի 10-ը որեւէ բան նախատեսված չէ:

-Խորհրդային Միության տարիների առաջին դեմարկացիայի գործընթացը 1920-ականներին է սկսվել՝ 1926-27 թթ, որն ավարտվել է 1929-ին, իսկ հետագայում ձեւավորված քարտեզների հիմքը եղել է հենց այդ թվականների քարտեզը: Իսկ բանակցությունների հիմքում դրվելիք քարտեզները քննարկվել են աշխատանքային խմբում:

-Բոլոր ապաշրջափակվող ճանապարհները լինելու են տվյալ պետության սուվերեն տարածքը, այսինքն միջանցքային տրամաբանությամբ որեւէ հարց չի քննարկվում (այդ տրամաբանությունը խանգարում է բանակցություններին, նշել էր Փաշինյանն ԱԺ-ում):

-Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում:

-ՌԴ խաղաղապահ ուժերը մնալու են ավելի երկար, քան այժմյան պայմանավորվածությունն է, Գրիգորյանի այդպիսի եզրակացության համար հիմք են այն հիմնավոր ենթակառուցվածքները, որոնք խաղաղապահների համար են ստեղծվում:

Նշենք, որ Սյունիքում զորքը հետ քաշելու հրամանի պատասխանատվությունը, որից հետո թշնամու զինվորականները հայտնվեցին ՀՀ տարածքում եւ մինչեւ հիմա այնտեղ են, Նիկոլ Փաշինյանը վերցրեց իր վրա՝ նշելով, որ ռազմավարական նշանակության ճանապարհը չկորցնելու համար է այն արվել: Մնում է ենթադրել, որ եթե մեր զորքը հետ չքաշվեր, այդ հատվածը ռուսներն ու ադրբեջանցիները միասին էին խլելու, քանի որ ռուսական հենակետն էլ այնտեղ մոտիկ է:

# ԶԼՄ-ներին հանգիստ թողեք, խնդիրն այլ դաշտում է

ԶԼՄ-ների համար բավական մեծ չափով նյութական պատասխանատվություն է սահմանվում՝ չնույնականացված աղբյուրներից չստուգված տեղեկատվություն տարածելու համար (300-500 հազար դրամ): Ընդդիմադիրների եւ լրատվամիջոցների գերակշիռ մասի քննադատությանն արժանացած նախագիծը երեկ վերջապես ներկայացվեց ԱԺ-ում եւ առաջին ընթերցմամբ քվեարկվեց:

Իհարկե, լրագրողն ու լրատվամիջոցը չպետք է չստուգված տեղեկություն տարածեն, բայց նախագիծը եթե հենց միայն այդպիսի նպատակ հետապնդեր, միգուցե նախաձեռնությունը հասկանալի լիներ: Բայց այն կարող է մահակ դառնալ հենց գրանցված լրատվամիջոցների գլխին, ինչպես նրանց, որոնք երբեմն գայթակղվում են եւ սկանդալային նյութեր են հրապարակում հենց տելեգրամյան չստուգված աղբյուրներից կամ ֆեյսբուքի չնույնականացվող օգտատերերից, կամ էլ քաղաքական պատվեր կատարում, այնպես էլ մրցակցությունից դուրս մնալ չցանկացող նորմալ լրատվամիջոցների համար:

Ֆինանսական տարեկան հաշվետվություն չներկայացնելու համար եւս լրատվամիջոցին տուգանք եւ պետական կառույցների կողմի չհավատարմագրում է սպառնում:

Նախագծի հիմնական զեկուցող **Արթուր Հովհաննիսյանը** տեղեկացրեց, որ լրամշակված ու մեղմված տարբերակն է ներկայացվել քննարկման՝ խնդիր դնելով ԶԼՄ-ների մասին օրենքը համապատասխանեցնել ներկա մարտահրավերներին: Դրանով չի արգելվում հղում անել չնույնականացված աղբյուրների, բայց նույնիսկ դա բովանդակության համար պատասխանատվությունից չի ազատում լրատվամիջոցին: Այսինքն՝ Զ ԼՄ-ն ե՛ւ անանուն աղբյուր կարող է օգտագործել, ե՛ւ չնույնականացված աղբյուրին հղում տալ, բայց բովանդակության համար, միեւնույն է, պետք է պատասխան տա:

Կրքերը ԱԺ դահլիճում բորբոքվեցին, հասկապես նախկին լրագրող ընդդիմադիր պատգամավորներն էին բորբոքված, քանի որ եթե անգամ ԱԱԾ-ը չի կարողանում բացահայտել լրատվամիջոցի եւ օգտատիրոջ տվյալները, լրատվամիջոցն ու լրագրողն ինչպես պետք է դա անեն: Ու ստացվում է, որ փակ դոմեններով կեղծ լրատվամիջոցների դեմ պայքարելու փոխարեն՝ իշխանությունը հենց գրանցված ու հեղինակություն ունեցող լրատվամիջոցի դեմ է պայքարում (**Արեգնա Մանուկյան, Գեղամ Նազարյան, Ագնեսա Խամոյան**), անգամ **Բաբկեն Թունյանն** իշխանականներից ընդունեց , որ խնդիր կա եւ երկրորդ ընթերցմանը պետք է հստակեցնել:

Նախագծի հեղինակն ու իշխանական կորպուսից հակադարձում էին՝ քաղաքական ուժի ազդեցության տակ մարդիկ տելեգրամյան ալիք են բացում, ու հետո լրատվամիջոցները հղում են անում դրանց, լրատվամիջոցներից քարոզչամեքենա թող չստեղծեն քաղաքական ուժերը, ԶԼՄ-ները չեն կարողանա հղում անել ֆեյքերին, հետո ազատվել պատասխանատվությունից, դա է առաջնայինը:

Ասենք, որ մեր կարծիքով սա հակատեղեկատվական փոփոխություն է, ժամանակավրեպ, չնայած բուն նպատակադրումը կարելի է հասկանալ, այնքան որ ապատեղեկատվություն է պտտվում մեդիա-դաշտում: Սակայն պետք է հասկանալ, որ ԶԼՄ-ները վաղուց արդեն միակ լրատվության աղբյուրը չեն, այլ աստիճանաբար գերիշխող են դառնում յութուբը, ֆեյսբուքը, մյուս ինտերնետային բաց հարթակները, որտեղ ամեն ինչ կա, դա ոչ ոք չի կարող արգելել, իսկ այդ ամենին հավատալը միայն անհատի կրթության մակարդակից է կախված: Տեսեք, թե որքան քաղաքագետներ, տգետներ եւ խելոքներ, պատահական մարդիկ անգամ յութուբով մտնում են եթեր եւ իմացած-չիմացած, կրթություն-անկրթություն արտանետում ինտերնետային տարածք, եւ դրա դեմ ոչինչ անել հնարավոր չէ: Իսկ ամենացայտուն օրինակը պատերազմի ժամանակ **Արծրուն Հովհաննիսյանի** ֆեյսբուքյան էջն էր, որը, ճիշտ է, նույնականացված էր, սակայն դա չխանգարեց տարածելու այն ապատեղեկատվական աղետը, որն այդ էջից ստացանք բոլորս:

Բացի այդ՝ անգամ միջազգային ատյանները չեն կարող պայքարել անգամ Ցուկերբերգի ֆեյսբուքի ապատեղեկատվության եւ նրա գործած աղետի դեմ, ուր մնաց, թե ինչ-որ անհայտ, չնույնականացվող դոմենների ու ֆեյքերի դեմ մենք, մեր լրատվամիջոցները պայքարեն:

Որ Հայաստանում լրատվամիջոցները քաղաքական կողմ են, ընդ որում՝ ինչպես ընդդիմադիր, այնպես էլ հենց իշխանական լրատվամիջոցների, իշխանական ֆեյքերի դեպքում, այո, դա խնդիր է, բայց դա այսպիսի օրենքներով չէ, որ պետք է կարգավորել: Արդեն իսկ զրպարտությունը, վիրավորանքը քրեականացված է, պետք է հանգիստ թողնել լրատվական դաշտը՝ հետեւանքի դեմ չպայքարելով: Խնդիրն այլ դաշտում է:

# Պոլսահայ հեղինակը՝ ռուսերեն



Ռուսական «Նովայա լիտերատուրա» (Նոր գրականություն) հանդեսի սեպտեմբերյան էլեկտրոնային համարում ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել պոլսահայ արձակագիր **Երվանդ Կոպելյանի** (1923-2010) երեք պատմվածքները՝ «Պիստակավաճառը», «Իշուն պոչը ինչո՞ւ չ երկարիր» եւ «Շուն մը չունեցողը շուն մը չ արժեր»: Առաջին երկուսը Կոպելյանի «Կեանքի լուսանցքէն» («Արաս», 2003) ժողովածուից են, վերջինը՝ «Երազ չունեցող մարդիկ» (1984) հավաքածուից:

Թարգմանություններն իրականացրել է Հայաստանում եւ Ռուսաստանում բնակվող **Աշոտ Գրիգորյանը**: Մասնագիտությամբ տնտեսագետ է, ռուսերեն երկու՝ «Այդ զարմանահրաշ թատրոնը» (Մոսկվա, 2014) եւ տպագրության պատրաստ «Ճանապարհ դեպի Լատվիա» գրքերի հեղինակ է: Կազմել է նաեւ «Լյուբիմովի ծածկագիրը (ասույթներ)» ռուսերեն գրքույկը (2017): Պարբերաբար հայերեն եւ ռուսերեն հոդվածներով աշխատակցում է մամուլին, նաեւ «Ազգ»ին:

**Ա. Բ.**

# Հայ թատրոնի մասին ուկրաինական կայքէջում





Լվով քաղաքի պատմությունը ներկայացնող https://photo-lviv.in.ua կայքէջում հոկտեմբերի 19-ին լույս է տեսել **Յուրի Յամաշի** «Լվովի բեմական պտտոցը. որտեղի՞ց սկսվեց ամեն ինչ» հոդվածը (ուկրաիներեն): Հեղինակն օրինակ է բերել «հայ համայնքը, որի ներկայացուցիչները եղել են Գալիցիայի թագավորի կանանց մեջ: Հայ թատրոնն ունի իր թատերական պատմությունը՝ ավելի քան երկու հազար տարվա վաղեմությամբ: Հայաստանում ամֆիթատրոններ կառուցվել են ավելի վաղ, քան Հին Հռոմում: Երբ հայերը հայտնվեցին Լվովում, այս հնագույն ավանդույթները վերացած չէին, ինչի մասին վկայում են տարեգրությունները: Ժողովրդական ծեսերի հետ կապված թատերական մշակույթը եղել է նախկինում: Բայց առաջին քայլը դեպի պրոֆեսիոնալ թատրոն, դեպի թատրոն՝ որպես հաստատություն (եւ այս քայլը կարեւոր է Ուկրաինայի ողջ մշակութային ժառանգության համար) կապված է Լվովում 16-17-րդ դարերում բազմաթիվ դպրոցական թատրոնների գոյության հետ»: Յուրի Յամաշը չի նշել, սակայն հայտնի է, որ 17-րդ դարում Լվովի հայ կաթոլիկ դպրոցում է դրվել հայ նոր թատրոնի հիմքերը. այստեղ 1668 թվականին բեմադրվել եւ ներկայացվել է «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» հայերեն չափածո ողբերգությունը, որը հայոց լեզվով գրել էր նույն դպրոցի ազգությամբ ֆրանսիացի տնօրեն, հայերենագետ, մանկավարժ, գրող **Ալոյիսիոս (Լուի Մարի) Պիդուն**:

**Ա. Բ.**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան Լ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»**
**սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3
**e-mail:** azg@azg.am,
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 28.10.2021, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: